Գլուխ 1

Սկիզբը

Այս պատմությունը գրված է հազարավոր տարիների վաղեմություն ունեցող գրքի մեջ: Իմ պատմած ամեն խոսքը ճշմարիտ է: Եվ դրանցից մի քանիսին հավատալը նույնիսկ դժվար կլինի:
Բայց, երբեմն ճշմարտությունն ավելի տարօրինակ է լինում, քան հորինված պատմությունը:

Սկզբում, մինչև առաջին մարդու ստեղծվելը, երկիր մոլորակի, արևի, աստղերի, նույնիսկ լույսի և ժամանակի ստեղծվելը, Աստված կար:

Նա ինքնին գոյություն
ուներ, առանց սկիզբ առնելու,
բայց նա միայնակ չէր: Նման չլինելով
սահմանափակ մարդուն՝ Աստված
միաժամանակ ներկայանում է երեք տարբեր
անձերով, որպես մեկ: Յուրաքանչյուր
անձնավորություն հավասար է մյուսներին և
հավերժական, նրանք էությամբ, զորությամբ,
գործողություններով և կամքի դրսևորմամբ
նույնն են: Նա շփվում էր ինքն իր հետ
ներդաշնակ սիրո մեջ:
Բայց Աստված
ցանկանում էր կիսել
Իր կյանքը: Նա
ուզում էր ընկերներ և
հարևաններ ունենալ:

Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ Աստված արարեց բազմաթիվ երկնային էակներ, որ գոհություն բարձրացնեն Նրա գահի առաջ: Բայց նրանց մեջ կար մեկը՝ Արուսյակ անունով, որ ըմբոստացավ Աստծո դեմ և նրա հետ նույնպես հրեշտակների մեկ երրորդը: Աստված վտարեց նրանց երկնքից, և Արուսյակի անունը փոխվեց, դարձավ սատանա:

Եսայիա 45.18 – Նայիր էջ 322 Աստվածաշունչ գրքի մասին համառոտ տեղեկություն ստանալու համար, սատանայի մասին կարող ես կարդալ Եսայիա 14.12-14, Եզեկիել 28.13-19, Մատթեոս 25.41, Ղուկաս 10.18, Հայտնություն 12.4, 20.2

Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Եվ այնպես պատահեց, որ երկիրը անձև ու դատարկ էր, և Արարիչը շրջում էր ջրերի վրայով:

Հանկարծ Աստված
խոսեց խավարի մեջ...

Դա այնպես չեղավ, ինչպես կարծում են շատ ժամանակակից մարդիկ: Արարիչը էվոլյուցիան չի օգտագործել: Նա արարել է ամեն բան խոսքով: Վեց օրում Աստված ստեղծեց բույսերն ու կենդանիները և բնակեցրեց երկիրը:

Մոտավորապես մ.թ.ա 4004 թ.- Ծննդոց 1.2-3

Վեցերորդ օրը Աստված գետնի հողից ստեղծեց նոր արարած, և չար ոգիները հետևում էին դրան:

Աստված փչեց Իր կյանքը կավե մարմնի մեջ, և մարդը կենդանի հոգի դարձավ: Նա ստեղծվեց Աստծո պատկերով, բոլոր կենդանիներից բարձր:

Աստված նոր արարածին կոչեց մարդ և անվանեց Ադամ:
Աստված նայեց Իր ողջ ստեղծագործությանը և ասաց. « Սա բարի է»
Ծննդոց 1.31, 2.7


Ամեն օր Աստված խոսում էր Ադամի հետ, և կյանքը հիասքանչ էր: Աստված բերեց բոլոր կենդանիներին Ադամի մոտ, որ նրանց անուններ տա: Երբ Ադամը նայեց, հասկացավ, որ նրանց մեջ իր համար օգնական չգտնվեց:



Աստված խոր քուն բերեց Ադամի վրա և վերցրեց նրա կողի ոսկորներից մեկը: Այդ ոսկորից Աստված արարեց գեղեցիկ կնոջ, որ դառնա Ադամի սիրելի օգնականը:

Աստված արթնացրեց Ադամին և կնոջը բերեց նրա մոտ: Աստված նրանց պատվիրեց երեխաներ ունենալ և լցնել երկիրը: Եվ Ադամը իր գեղեցիկ կնոջը կոչեց Եվա:
Նա ոսկոր է իմ ոսկորից և մարմին է իմ մարմնից:
Սատանան՝ չարը, հետևում էր:
Նրանք երկուսն էլ մերկ էին, բայց երեխաների նման անտեղյակ էին դրանից:


Նրանք ուրախ էին պարտեզում: Այնտեղ ոչ մեղք կար, ոչ էլ սով, ոչ շատ շոգ էր լինում, ոչ էլ շատ ցուրտ:
Աստված խոսեց ծառերի միջից՝ ասելով.
Պարտեզի բոլոր ծառերից կարող եք ուտել, բայց պարտեզի մեջտեղում գտնվող ծառից չուտեք, որովհետև այն օրը, որ ուտեք, կմեռնեք:
Ծննդոց 1.28, 2.2 16-22, 25

Սատանան ատում էր Աստծուն և ցանկանում էր ոչնչացնել այն, ինչ Աստված ստեղծել էր, բայց նախ նա պետք է ճանապարհ գտներ խոսելու Եվայի հետ, ուստի նա կերպարանափոխվեց գեղեցիկ կենդանու և այդպես խոսեց նրա հետ:

Նա ասաց, որ մենք կարող ենք ուտել պարտեզի բոլոր ծառերից, բացի այս մեկից, եթե դիպչենք, կմեռնենք:
Դուք չեք մեռնի, այլ կլինեք Աստվածների նման, երբ ուտեք: Ձեր աչքերը կլուսավորվեն ինչպես մերը, և կճանաչեք բարին և չարը:

Եվան չգիտեր, թե ինչ է չարն ու բարին:

Եվան չհնազանդվեց Աստծուն և կերավ պտուղը:
Ավելի ուշ Եվան հասկացավ, որ խաբվել է: Այժմ նա ճանաչում է չարն ու բարին, բայց չարն իշխանությունը վերցրեց:



Ծննդոց 3.1-6, Հայտնություն 20.2

Նրանց աչքերը բացվեցին և հասկացան, որ մերկ էին և ամաչեցին:
Քա՜հ, քա՜հ, քա՜հ... Հիմա նա ձեզ կսպանի: Տեսեք, թե ինչ է արել ինձ հետ:

Այս ի՞նչ արեցինք մենք:
Մենք չհնազանդվեցինք Աստծուն: Շուտով նա կգա, մենք պետք է ծածկենք մեր մերկությունը:

Որտե՞ղ ես, Ադա՛մ:
Ես լսեցի քո ձայնը և վախեցա, որովհետև մերկ էի:
Ո՞վ ասաց քեզ, որ մերկ ես: Արդյո՞ք չհնազանդվեցիք ինձ և կերաք արգելված պտուղը:

Ծննդոց 3.6-12

Ֆը՜222...
Օձը խաբեց ինձ: Նա ասաց, որ չեմ մեռնի, բայց քո նման կլինեմ: Սակայն քո նման չեմ և շատ վատ եմ զգում:

Այսպիսով, Աստված անիծեց օձին և ասաց.
Ես թշնամություն եմ դնելու քո և կնոջ միջև և քո սերնդի և նրա սերնդի միջև: Դու նրա գարշապարն ես ճզմելու, իսկ նա քո գլուխն է ջախջախելու:
Քանի որ այս բանն արեցիր, դու կսողաս փորիդ վրա և հող կուտես կյանքիդ բոլոր օրերում:

Սա խոստմունք է ապագա պայքարի համար: Կգա ժամանակ, երբ կնոջ սերունդը կհաղթի սատանային: Այս մարդը կազատագրի մարդկությանը և կփրկի մեղքի և մահվան անեծքից:

Աստված կարող էր ոչնչացնել Արուսյակին և նրա հրեշտակներին մեկ ակնթարթում, բայց նա թույլ տվեց նրանց ապրել՝ որպես փորձություն մարկանց համար: Արդյո՞ք մարդը կհետևի Աստծուն, թե՝ սատանային ապստամբության մեջ:

Ծննդոց 3.13-15


Աստված անիծեց մարդուն՝ ասելով.
Ադա՛մ, որովհետև դու լսեցիր կնոջդ և չհնազանդվեցիր ինձ, ես կանիծեմ այս երկիրը, ավելի շատ փուշ և տատասկ կաճի, քան բուսականություն: Դու քրտնաջան կաշխատես, որպեսզի քաղցած չմնաս: Կյանքիդ բոլոր օրերը ցավով կապրես և երեսիդ քրտինքով կաշխատես մինչև մահանալդ և հող կդառնաս, ինչից որ ստեղծվել էիր:

Եվ հիմա ժամանակն էր, որ Ադամն ու Եվան մեռնեին ինչպես Աստված խոստացել էր: Բայց նրանց սպանելու փոխարեն Աստված կենդանիներ զոհեց և նրանց կաշվից հանդերձներ շինեց Ադամի և Եվայի համար:

Ադամն ու Եվան չմեռան այդ օրը, քանի որ նրանց փոխարեն անմեղ կենդանիներ զոհվեցին: Բայց մահվան դատավճիռը կայցված էր, և վերջիվերջո նրանք նույնպես պետք է մեռնեին**: Մեղքի վարձքը մահ է:**

Քանի որ Ադամն ու Եվան այժմ մեղավորներ էին, Աստված նրանց դուրս հանեց գեղեցիկ պարտեզից, որպեսզի չուտեն կյանքի ծառից և հավերժ ապրեն իրենց մեղավոր էությամբ:

Աստված պարտեզի մուտքի առջև կանգնեցրեց հատուկ հրեշտակի, որ կոչվում է քերովբե, որպեսզի նա պահպանի կյանքի ծառը: Պարտեզը, վերջիվերջո ոչնչացավ, և ծառը հեռացվեց Երկրի վրայից: Մեկ օր այն ետ կվերադարձվի Երկիր, բայց ես շարունակում եմ իմ պատմությունը:

Ծննդոց 3.17-24, Եզեկիել 18.4

Ադամն ու Եվան շատ երեխաներ ունեցան: Հետո նրանց երեխաները պետք է իրար հետ ամուսնանային և իրենց երեխաներին ունենային:



Երբ առաջին մարդը ստեղծվեց, գենետիկայի մեջ տեղի ունեցող փոփոխությունները դեռ շեղումներ չէին առաջացնում, բայց հետագայում, երբ այն դարձավ լուրջ խնդիր, Աստված պատվիրեց մտերիմ բարեկամներին չամուսնանալ իրար հետ:

Ադամի և Եվայի առաջին որդին՝ Կայենը, հողագործ էր, երկրորդը՝ Աբելը հովիվ էր: Հնարավո՞ր է նրանցից մեկը լիներ խոստացված որդին, որ պետք է ոչնչացներ սատանային:

Կայենն ու Աբելը ճանաչում էին Աստծուն և տեղյակ էին պարտեզում տեղի ունեցած իրադարձություններից: Բայց Աստված այլևս չէր քայլում և խոսում մարդկանց հետ: Ադամի անհնազանդության պատճառով նա և նրա սերունդները հեռացել էին Աստծուց: Կյանքը դժվար էր առանց Աստծո:

Պատահեց այնպես, որ երկու որդիները որոշեցին երկրպագել Աստծուն: Նրանց հայրը պատմել էր, որ Աստված պարտեզում կենդանիներ զոհեց, ուստի Աբելն էլ հավատքով զոհ մատուցեց Աստծուն:

Ծննդոց 4.1-4, Հռովմայեցիս 3.23, Եբրայեցիս 11.4

Աստված մերժեց Կայենի ընծան,
քանի որ այն առանց արյան էր:

Աստված ասաց Կայենին. «Եթե դու անես այն, ինչ պետք է անես, ես գոհ կմնամ քեզանից: Նույնպես, դու կիշխես քո եղբայր Աբելին, և նա կենթարկվի քեզ»:

Քո կարծիքով ո՞վ ես դու: Իմ ընծայած միրգն ու բանջարեղենը շատ ավելի արժեքավոր էին, քան քո արյունոտ գառնուկը: Ի՞նչն է քեզ յուրահատուկ դարձնում:
Եղբա՛յրս, դեռ ժամանակ կա արյան զոհ մատուցելու:

Ծննդոց 4.5-8

Աբելը մահացավ, և Կայենը փորձեց թաքցնել իր մեղքը:

Բայց Կայենը չկարողացավ թաքցնել Աստծուց իր չար արարքը: Աստված տեսնում է և գիտի ամեն բան:
Կայե՛ն, ո՞ւր է քո եղբայր Աբելը:
Չգիտեմ: Մի՞թե ես եղբորս պահապանն եմ:
Քո եղբոր արյունը դեռ երկրի վրա է: Այն պատմում է ինձ քո գործած չար արարքի մասին:

Աստված գիտի ամեն բան: Նա ամեն ժամանակ տեսնում է բոլորին: Ոչինչ հնարավոր չէ թաքցնել Նրանից: Նա տեսավ, թե ինչ արեց Կայենը Աբելի հետ: Աստված անիծեց Կայենին, և նա իր կնոջ հետ թափառական դարձավ: Նրա մեղքը վիշտ և տառապանք պատճառեց նրան:

Կայենը չէր կարող լինել խոստացված փրկիչը: Նա ինքն էլ կարիք ուներ ազատագրման:

Ծննդոց 4.9-16, 5.4 Գործք Առաքելոց 17.24-26

Սեթը մի որդի ունեցավ, այդ որդին էլ որդի ունեցավ, և շատ ու շատ որդիներ ծնվեցին, բայց նրանցից ոչ ոք չփորձեց հեռացնել մեղքի և մահվան անեծքը: Շուտով երկրի վրա շատ քաղաքներ, գյուղեր և այգիներ առաջացան:

Ինչքան մարդիկ շատանում էին, նրանց մեղքերն էլ էին շատանում: Մարդիկ շնություն էին գործում և շատ դաժան էին:
Աստված ասաց. «Զղջում եմ, որ արարել եմ մարդուն երկրի վրա: Ես կոչնչացնեմ ամեն կենդանի շունչ երկրի վրայից»: Սատանան, որ ատում էր Աստծո թագավորությունը, շատ կուրախանար՝ տեսնելով ինչպես է Աստված ոչնչացնում մարդկությունը:

Ինը սերունդ արդեն անցել էր (1400 տարի), և աշխարհը լցվել էր մեղքով:
Մարդիկ ստրկացնում էին իրենց նման մարդկանց:
Արդյո՞ք երբևէ կլինի մի ընտանիք, որ կսիրի Աստծուն և կքայլի հնազանդության մեջ:
Ծննդոց 6.5-7 Հռովմայեցիս 5.12

Բայց մի մարդ կար,
ով արդար էր ապրում:
Թեև Աստված
պատրաստվում
էր ոչնչացնել ողջ
մարդկությունը,
որոշեց խնայել
այս մարդուն և
նրա ընտանիքը:

Նո՛յ, ես պատրաստվում եմ ջրհեղեղ ուղարկել երկրի վրա: Ամեն շունչ ունեցող կմեռնի: Քեզ, քո ընտանիքը և կենդանիներին փրկելու համար դու պետք է մեծ նավ կառուցես:

Ամեն կենդանուց մեկ զույգ քեզ հետ կվերցնես նավի մեջ: Իսկ այն կենդանիներից, որոնք թույլատրված են ուտել, յոթ հատ կվերցնես: Ես կասեմ քեզ, թե ինչպես պատրաստես նավը և ինչ է քեզ պետք լինելու ջրհեղեղին պատրաստվելու համար:

Հնարավո՞ր է Նոյը լինի խոստացված որդին, որ կոչնչացնի սատանային: Արդյո՞ք կհնազանդվի Աստծուն, թե ոչ:

Աստված հայտնեց Նոյին, թե ինչքան մեծ պետք է լինի նավը, որպեսզի հնարավոր լինի տեղավորել բոլոր կենդանիներին և սնունդը:

Ի- Ծննդոց 6.8-9, 17-22, 7.2

Ես ձեզ վերջին անգամ եմ զգուշացնում: Աստված պատրաստվում է ոչնչացնել աշխարհը ջրհեղեղով: Դուք պետք է հավատաք և միանաք ինձ:
Նոյը տրտմեց, երբ մտածեց, որ ողջ մարդկությունը ոչնչանալու է ջրհեղեղից և ամեն հնարավորության դեպքում զգուշացնում էր նրանց դադարել մեղք գործելուց:

Դու՛, ծեր հիմար
Մեղքի պատճառով: Դուք պետք է դադարեք մեղանչելուց և ձեր կողքինի հետ վարվեք սիրով և արդարությամբ:
Ինչո՞ւ պետք է սիրող Աստված ոչնչացնի իր զավակներին:

120 տարի հետո, երբ նավը պատրաստ էր, Աստված ամբողջ աշխարհից բոլոր կենդանիներին բերեց Նոյի մոտ:

Ծննդոց 7.7-9 2 Պետրոս 2.5

Ազատ տեղ քիչ է մնացել:
Սա վերջինն է:
Նո՛յ, արդեն ժամանակն է: Մտի՛ր նավի մեջ քո ընտանիքի և կենդանիների հետ: Շուտով ուշ կլինի բոլոր նրանց համար, ովքեր մերժեցին և շարունակեցին մեղանչել:

Աստված փակեց նավի դուռը, և յոթ օր ոչինչ տեղի չունեցավ:
Քա՜հ, քա՜հ... Նայեք այս հիմարներին: Փակվել են նավի մեջ կենդանիների հետ՝ չոր դաշտի մեջ, ջրերից հեռու:
Այո՛, վստահ եմ առյուծները նրանց արդեն կերել են:
Նրանք արդեն մեկ շաբաթ է ինչ ներսում են:

Բայց յոթերորդ օրը անձրև տեղաց, և երկրի խորքում պահված ջրերը դուրս հորդեցին:



Մինչ այս պահը երբեք անձրև չի եկել: Միշտ հրաշալի եղանակ է եղել, և ոչ ոք երբեք չի տեսել կամ լսել անձրևի մասին, ուստի նրանք Նոյին խելագար էին համարում, երբ նա ասում էր ջրերը ծածկելու են երկիրը, բայց Նոյը հավատաց Աստծուն:

Ծննդոց 7.9-12, 16

Մոտավորապես մ.թ.ա. 2348



Ծննդոց 7.12, 19-23, 8.9-12

Վերջապես Նոյն աղավնի ուղարկեց, և նա վերադարձավ ձիթենու ճյուղը բերանին, ինչը նշանակում էր, որ ինչ-որ տեղ արդեն ծառեր են աճել: Ավելի ուշ նա նորից ուղարկեց աղավնուն, բայց այս անգամ նա հետ չվերադարձավ, ինչը նշանակում է, նա մնալու լավ տեղ էր գտել:

Շուտով նավը կանգ առավ
Արարատ լեռան վրա:
Բոլորը մտան նոր աշխարհ,
առանց մեղքի աշխարհ:

Նոյը զոհասեղան կառուցեց և կենդանու զոհ մատուցեց Աստծուն: Չնայած Նոյն արդար մարդ էր, բայց նրա սրտում դեռ մեղք կար: Այս արյան զոհերը մատուցվում էին Աստծուն Նոյի և նրա ընտանիքի կյանքի փոխարեն:



Կենդանիները ներկայացնում էին այն ութ մարդկանց, որ պետք է մեռնեին ջրհեղեղի ժամանակ, բայց Աստծո շնորհքով փրկվեցին: Դա նույն բանն էր, ինչ Աստված արեց պարտեզում, երբ զոհեց կենդանիներին՝ Ադամի և Եվայի համար ծածկոցներ շինելու համար:

Ես երկնքում կհաստատեմ ծիածանը, որպես հիշեցում, որ այլևս երբեք չեմ ոչնչացնի Երկիրը ջրհեղեղով: Դու պետք է շատ զավակներ ունենաս, որ կցրվեն և կվերաբնակեցնեն Երկիրը:

Ես այնպես կանեմ, որ կենդանիները վախենան մարդկանցից: Դու կարող ես ուտել բոլոր կենդանիներից, ինչպես ուտում ես բույսերն ու բանջարեղենը, բայց չես կարող ուտել կենդանին իր արյունով: Ոչ մեկին չսպանես:
Ով որ մարդ սպանի, նա էլ կսպանվի մեկ ուրիշի ձեռքով: Ով որ մարդու արյուն թափի, նրա արյունը մարդու միջոցով կթափվի, որովհետև կյանքն արյան մեջ է:

Նոյը սկսեց այգեգործությամբ զբաղվել և խաղողի մի այգի տնկեց: Նոր աշխարհը կարծես դատարկ էր, բայց շուտով Նոյի որդիները զավակներ ունեցան:

Ծննդոց 8.4, 20, 9.1-29

Նոյը հայտնաբերեց, որ, եթե բերքը մի քանի շաբաթ թողնի տարաների մեջ, ապա այն կդառնա ալկոհոլային խմիչք և հաճույք կպատճառի իրեն: Նոյը սկսեց շատ խմել այդ խմիչքից և այդ իսկ պատճառով երբեմն չէր կարողանում աշխատել: Նա ուղղակի անգիտակից պառկում էր և անում էր այնպիսի բաներ, որոնք հաճելի չէին Աստծուն:

Մի օր Նոյը խմեց գինուց և հարբեց և մերկ պառկել էր վրանում: Նրա որդին՝ Քամը, տեսավ հոր ամոթը և դա նրան դուր եկավ: Եվ գնաց պատմեց եղբայրներին այն, ինչ տեսել էր:

Երբ Նոյն արթնացավ, նրա տղաները պատմեցին եղբոր արածը:
Քո որդին՝ Քանանը և իր հետնորդները կլինեն քո եղբայր Սեմի և նրա սերունդների ծառաները:

Շատ տարիներ հետո այս մարգարեությունն իրականացավ: Քանանացիները գրավեցին Պաղեստինը և գերի դարձան հրեաներին:

Ծննդոց 9.21-27, Սաղմոս 78.5, 105.23,27, 106.22


Սեթ
Ադամ և Եվա
Կայեն
Աբել
Աստված ոչնչացրեց բոլորին, բացի այս ութ մարդկանցից:



Նոյը և իր ընտանիքը շնորհք գտան Աստծո աչքերի առջև

Բնակություն հաստատելու համար Հաբեթը շարժվեց արևմուտք և հյուսիս: Սեմը գնաց արևելք և հաստատվեց Ասիայում: Քամը գնաց հարավ և հաստատվեց Աֆրիկայում և հարավային Ասիայում: Նրա որդի Քանանի սերունդները հաստատվեցին ներկայիս Պաղեստինի տարածքում: Այսպիսով, աշխարհը վերաբնակեցվեց:


Մոտավորապես մ.թ.ա. 2247
Նոյի որդի Քամը Քուշ անունով որդի ունեցավ, և Քուշն էլ Նեբրովթ անունով որդի ունեցավ: Նեբրովթը ամբողջ աշխարհում հայտնի որսորդ էր: Նա մերժեց հնազանդվել Աստծուն և Բաբելոնում հիմնադրեց իր կեղծ կրոնը:

Բաբելոնում ապրող մարդիկ չցանկացան ցրվել և վերաբնակեցնել երկիրը, ինչպես Աստված պատվիրել էր, ուստի նրանք հավաքվեցին և կառուցեցին մի հսկա աշտարակ, որտեղ պետք է երկրպագեին Աստծուն:

Բայց նրանք իրենց արարիչ
Աստծուն չերկրպագեցին:
Սատանան առաջնորդեց
նրանց կառուցել աստվածներ
փայտից, քարից և մետաղից:

Աստված բարկացավ, քանի որ նրանք մերժեցին ցրվել աշխարհով մեկ: Այդ պատճառով Աստված խառնեց լեզուները:

Աշխատողները այլևս չէին հասկանում միմյանց լեզուն, ուստի նրանք դադարեցրին աշխատանքը:

Յուրաքանչյուր լեզվախումբ առանձնացավ: Որոշ մարդիկ գնացին հեռու տեղեր, ոմանք նավով ճամփորդեցին հեռավոր կղզիներ, ոմանք գնացին հյուսիս, որտեղ ցուրտ էր, մնացածն էլ՝ հարավ, որտեղ տաք էր: Այսպիսով, ցրվելու և վերաբնակեցնելու Աստծո պատվերը կատարվեց:

Քանի որ մարդիկ
շատացան երկրի վրա,
մեղքն էլ շատացավ:
Մարդիկ երկրպագեցին
կուռքերին և մոռացան
կենդանի Աստծուն:

Ծննդոց 10.6-10, 11.1-9

Գլուխ 2

Աբրահամ

Աբրահամ անունով մի մարդ կար, ով չէր հավատում, որ արձաններն իրական աստվածներ են: Նա գիտեր, որ Աստված արարիչ է և հնարավոր չէ նրան երկրպագել կուռքերի միջոցով:

Աստված խոսեց նրա հետ՝ ասելով. « Աբրահա՛մ, դո՛ւրս արի այս կռապաշտության քաղաքից, թո՛ղ քո երկիրն ու ընտանիքը, և ես ցույց կտամ, թե ուր գնաս: Ես քեզ մի մեծ ազգի հայր կդարձնեմ: Ես կօրհնեմ նրանց, ովքեր օրհնում են քեզ և կանիծեմ նրանց, որ անիծում են քեզ: Քո միջոցով երկրի բոլոր ազգերը կօրհնվեն:

Կարո՞ղ էր Աբրահամը լինել խոստացված որդին, որ կհաղթեր մեղքին ու մահին:

Մոտավորապես մ.թ.ա. 1921



Աբրահամը գիտեր, որ լսել է Աստծո ձայնը, ուստի նա հնազանդվեց՝ չիմանալով, թե ուր է գնում: Նա գիտեր, որ հետևում էր թողնում կռապաշտությունը և գնում էր կենդանի Աստծո հետևից: Դա բավական էր Աբրահամին: Բայց նա իր հետ վերցրեց եղբորորդուն՝ Ղովտին:

Աբրահամը գնաց Քանան, որտեղ բնակվում էին Քամի որդիները: Այսօր այդ վայրը կոչվում է Պաղեստին: Այնտեղ Աստված խոսեց նրա հետ:



Աբրահա՛մ, անցիր այս երկրի մի ծայրից մյուսը: Ես պատրաստվում եմ Քանանի այս ամբողջ երկիրը տալ քո ապագա երեխաներին: Ես քեզ այնքան շատ զավակներ եմ տալու, որ նրանց հնարավոր չի լինի հաշվել: Նրանք երկրի փոշու չափ կշատանան:

Ծննդոց 12.1-3, 13.14-17

Երկրում ճամփորդելու ընթացքում Աբրահամը ժամանակ առ ժամանակ արյան զոհ էր մատուցում Աստծուն: Աբելի նման նա հավատքով էր զոհը մատուցում, որովհետև գիտեր, որ մեղավոր է և արժանի մահվան:
Գառնուկի զոհը չէր կարող հեռացնել նրա մեղքը, բայց, երբ Աստված տեսավ Աբրահամի հավատքը, ծածկեց նրա մեղքը:

Տաս տարի անց
Աբրահա՛մ, տաս տարի առաջ ինձ ասացիր, որ որդի կծնեմ: Ես հիմա 75 տարեկան եմ, իսկ դու՝ 85: Մենք մեծանում ենք, բայց դեռ զավակ չունենք: Շուտով դու անկարող կլինես զավակ ունենալ: Վստա՞հ ես, որ Աստված է խոսել քեզ հետ:

Վստահ
եմ, որ Աստված է խոսել
ինձ հետ, բայց չեմ հասկանում
ինչու է այսքան երկար սպասում:
Նա ասաց, որ ես մի մեծ ազգի հայր
կլինեմ, բայց այժմ իմ ունեցածը ծեր
մարմին է, ծեր կին, որ երեխա չի
կարող ունենալ և ոչխարների
մեծ հոտ:

Մի՛ վախեցիր, Աբրահա՛մ, ես եմ քո պաշտպանությունը և քո մեծ պարգևը:
Ո՞րն է իմ պարգևը, երբ ես դեռ զավակ չունեմ:
Դու և Սառան որդի կունենաք:

Ե՛կ, Աբրահա՛մ, նայիր աստղերին և տե՛ս կարող ես հաշվել դրնաք: Քո սերունդը կլինի աստղերի չափ և հնարավոր չի լինի հաշվել:
Ես հավատում, որ քո ասածի պես կլինի:

Ծննդոց 15.1-6, 13-14

Քանի որ հավատում ես ինձ, քո հավատքը արդարություն կհամարեմ: Իմացիր, որ քո որդիները պանդուխտ կլինեն մի երկրում, որ իրենցը չէ և դրանից հետո 400 տարի գերության մեջ կլինեն, և ես կպատժեմ այդ ազգը և շատ ունեցվածքով դուրս կբերեմ քո զավակներին: Հետո նրանք հետ կգան այստեղ և կժառանգեն այս երկիրը:

Ո՞ւր է զավակ ունենալու խոստումը: Ես ծերանում եմ օրեցօր: Շուտով դու չես կարողանա զավակ ունենալ: Աբրահա՛մ, ես չեմ կարողանա որդի պարգևել քեզ:

Այս երկրի սովորույթի համաձայն իմ ծառան կարող է իմ փոխարեն զավակ ունենալ:

Աբրահա՛մ,
մի՞թե չես տեսնում, որ սա
մեր վերջին հնարավորությունն
է որդի ունենալու: Քանի դեռ ուշ
չէ, գնա նրա մոտ: Դա քո սերմը
կլինի: Սա է Աստծո կամքը: Ուրիշ
ինչպե՞ս կարող ես մեծ ազգի
հայր դառնալ:

Աբրահամը չաղոթեց Աստծուն:
Նա մոռացավ Աստծո խոստումը
և հնազանդվեց իր կնոջ ձայնին:

Ծննդոց 16.1-4

Մի քանի ամիս անց
Ես պատրաստվում եմ Աբրահամին որդի պարգևեմ:
Երբ Հագարն իմացավ, որ Աբրահամին զավակ է պարգևելու, հպարտացավ և արհամարհեց Սառային: Սառան սկսեց նախանձել:

Սառան լավ չէր վերաբերվում Հագարին և ստիպում էր ծանր աշխատանք կատարել: Աստված երբեք չէր նախասահմանել, որ տղամարդն երկու կին ունենա կամ հարճը նրա համար զավակ ծնի:
Երբ ջուրը տանես վերջացնես, կարող ես առանձնացնել վառելափայտը:
Հագարն ուզում էր փախչել:

Հագարը փախավ Սառայից և գնաց անապատ:Երբ հոգնեց և էլ չէր կարողանում առաջ գնալ, ուժասպառ ընկավ գետնին: Աստված տեսավ Հագարին իր նեղության մեջ և խոսեց նրա հետ:

Նա շատ
զավակներ կունենա, և
նրա սերունդը հնարավոր չի լինի
հաշվել: Իսմայելը վայրի մարդ
կլինի: Նա միշտ պայքարելու է
բոլորի հետ, և բոլորը պայքարելու
են նրա հետ: Նա միշտ իր
եղբայրներին մոտ կապրի:

Հագարը տուն վերադարձավ, և երեխան ծնվեց իր ժամանակին:
Աստված ինձ ասաց, որ քանի որ երեխան Աբրահամինն է, նա շատ ազգերի հայր կլինի:
Հետագայում Իսմայելը դարձավ բոլոր արաբական ազգերի հայրը:
Ծննդոց 16.4-16

Աբրահամը 86 տարեկան էր, երբ Իսմայելը ծնվեց: Իսմայելի ծնունդից հետո Աբրահամն արդեն շատ ծեր էր նորից որդի ունենալու համար: Արդյո՞ք Իսմայելն էր Աբրահամին խոստացված որդին: Բայց Աստված ասել էր, որ որդին կծնվի Աբրահամից և Սառայից:
Ինչպե՞ս կարող է Աստված խոստումն իրականացնել, երբ Աբրահամն ու Սառան այդքան ծեր են:

Երբ Իսմայելը տասներեք տարեկան էր, իսկ Աբրահամը՝ 99, Աստված նորից խոսեց նրա հետ:
Աբրահա՛մ, ես ամենակարող Աստված եմ: Արա՛ այն, ինչ ասել եմ քեզ և մեղք մի՛ գործիր: Ինչպես որ քեզ ասել էի ես կբազմապատկեմ քո սերունդը, և դու ազգերի հայր կլինես: Ես իմ ուխտը կհաստատեմ քո հետ և քեզանից հետո քո որդիների հետ:

Ես քո զավակներին կտամ Քանանի երկիրը որպես հավիտյան ժառանգություն: Սառան կհղիանա և որդի կունենա, ինչպես խոստացել էի: Եվ նա կլինի շատ ազգերի առաջնորդ:
Քա՜հ, քա՜հ, ես 99 տարեկան եմ, իսկ Սառան՝ 89: Իմ մարմինը մեռած է, մենք չենք կարող զավակ ունենաք: Թո՛ղ Իսմայելը դառնա խոստացված որդին:

Ո՛չ, ես ամենասկզբում քեզ ասել էի, որ դու և Սառան կունենաք ձեր որդուն: Նրա միջոցով են օրհնությունը ժառանգելու, ոչ թե Իսմայելի: Մեկ տարի հետո Սառան տղա երեխա կունենա:

Արդյո՞ք դա հնարավոր է: Այո՛: Այն Աստված, որ ստեղծեց մարդկային մարմինը, կարող է երկու ծեր, մեռած մարմիններ նորից պտղաբեր դարձնել: Իհա՛րկե, Աստված կարող է դա անել:

Մի քանի օր անց երեք տղամարդ հայտնվեցին անապատից: Նրանք կարծես երկար ճանապարհ չէին անցել, ոչ էլ տեղացի էին: Նրանք ուժեղ էին, ինքնավստահ և երիտասարդ:

Ծննդոց 17.1-21, 18.1-2

Աբրահա՛մ, քո կին Սառան որդի կունենա:
Քա՞հ, քա՞հ, քա՞հ...
Ինչքան ես ծեր եմ, Աբրահամն ավելի ծեր է, կարո՞ղ եմ արդյոք նորից հաճույք վայելել:

Ինչո՞ւ Սառան ծիծաղեց, երբ Աստված ասաց որդի կունենաս:
Ես չծիծաղեցի:
Դու ծիծաղեցիր: Դու չես հավատում: Մի՞թե Աստծո համար դժվար բան կա: Ես նորից կգամ այն ժամանակ, երբ դու կհղիանաս և որդի կունենաս:

Արդյո՞ք պետք է պատմեմ Աբրահամին, թե ինչ եմ պատրաստվում անեմ: Նա շատ զավակների հայր կլինի և կսովորեցնի իր զավակներին և թոռներին հնազանդվել ինձ:
Այո՛, նա պետք է իմանա:

Ծննդոց 18.10-22

Աստված չի կործանի չարագործին արդարի հետ: Ի՞նչ կլինի, եթե քաղաքում հիսուն արդար մարդ կա: Արդյո՞ք կխնայես ամբողջ քաղաքը արդարներին փրկելու համար: Ես գիտեմ, որ մարդկանց Դատավորը արդար կլինի:
Եթե գտնեմ հիսուն արդար, կխնայեմ քաղաքը:

Ես ոչինչ եմ և նույնիսկ արժանի չեմ խոսել Աստծո հետ, բայց ի՞նչ կլինի, եթե քառասունհինգ արդար գտնվի: Արդյո՞ք կկործանես ամեն բան այն հինգի պատճառով:
Եթե 45 հոգի լինի, չեմ կործանի:
Իսկ, ե՞թե քառասուն արդար գտնվի:
Քառասուն արդարի պատճառով էլ չեմ կործանի:

Մի՛ բարկացիր, բայց, եթե երեսո՞ւն լինեն:
Նորից չեմ կործանի:
Ես այդ մեղավոր քաղաքը չեմ կործանի քսան արդարի պատճառով:
Իսկ ի՞նչ, եթե քսան արդար գտնվի:

Խնդրում եմ մի՛ բարկացիր, վերջին անգամ եմ հարցնում: Եթե տաս արդար գտնվի, կկործանե՞ս քաղաքը:
Ոչ՛, եթե գտնեմ տաս արդար, չեմ կործանի:
Եթե չկարողանաս գտնես տաս արդար մարդ, կարո՞ղ ես զգուշացնել իմ եղբորորդի Ղովտին:
Այս գիշեր նրան կայցելենք:

Երկու հրեշտակները այդ գիշեր գնացին Ղովտի տուն:
Սա այլասերում է, ավելի վատ քան պատկերացնում էի:
Հիմա հասկանում եմ ինչու է Աստված ցանկանում ոչնչացնել բոլորին, նույնիսկ երեխաներին և կենդանիներին:

Ծննդոց 18.23-19.2

Ղո՛վտ, տուր մեզ այդ մարդկանց, որ նրանց հետ զվարճանանք:
Հեռու գնացե՛ք, դուք չեք կարող այդ չարիքը գործել:
Ո՞ւմ տեղն է նա իրեն դրել: Մոլեռանդ կեղծավոր:

Մենք դուռը կկոտրենք, և ձեզ համար ավելի վատ կլինի:
Մենք քո աղջիկներին չենք ուզում, մենք գեղեցկադեմ տղամարդկանց ենք ուզում:
Ատելություն սերմանող

Թո՛ղ Աստված կուրացնի ձեզ:
Ո՞ւր են նրանք:

Ո՞վ անջատեց լույսը:
Ես չեմ տեսնում, ի՞նչ պատահեց:
Ի՞նչ զորություն է սա:

Դու վաղն առավոտյան պետք է լքես երկիրը: Զգուշացրու ում ուզում ես: Աստված արդար է և այլևս չի կարող հանդուրժել այս մեղքը:
Վաղն Աստված երկնքից կրակ է թափելու այս քաղաքի վրա, և բոլորը կմեռնեն Սոդոմում և Գոմորում:

Ծննդոց 19.4-17

Հետ մի՛ նայիր:
Վաաա՜յ

Օ՜ ո՛չ, հայրի՛կ, մայրիկը չհնազանդվեց Աստծուն և վերածվեց աղի արձանի:
Մի՛ նայեք ետ, շարժվեք առաջ:


Այդ օրը ամեն կենդանի արարած մահացավ Սոդոմում և Գոմորում: Աստված արդար է և ատում է մեղքը, հատկապես այլասերությունը՝ տղամարդը տղամարդու հետ, և կինը կնոջ հետ: Երեխաների մասնակցությամբ սեքսուալ մեղքերը ամենասարսափելին են: Աստված խոստացավ, որ էլ երբեք աշխարհը չի կործանի ջրհեղեղով, բայց նա ոչինչ չասաց կրակի մասին:

Հաջորդ անգամ դա կրակով կլինի: Մեղքի վարձքը մահ է. ֆիզիկական մահ և հավիտենական մահ կրակի լճում: Աստծո շնորհքով Ղովտը փրկվեց դատաստանից: Նրա կինը չհավատաց, երբ Աստված լրջորեն զգուշացրեց նրանց հետ չնայել:
Ցանկացած մեղքի վարձքը մահ է՝ առանց բացառության:

Ծննդոց 19.24-26, Ղևտացոց 18.22, Հռովմայեցիս 1.23-32, 6.23, 1 Կորնթացիս 6.9-11, Հայտնություն 21.8

Աստված խոստացել էր, որ Սառան զավակ կունենա: Աբրահամի և Սառայի միջև ցանկություն առաջացավ իրար հանդեպ:

Հրաշք տեղի ունեցավ:
Շուտով բոլորը իմացան,
որ Սառան հղի է:

Աստված պահեց իր խոստումը: Նա միշտ է պահում:

Իսմայելը, Աբրահամի և Հագարի որդին, տասնչորս տարեկան էր և ատում էր նորածին եղբորը:

Աստված խոսեց Աբրահամի հետ և ասաց. «Սառան իրավացի է: Հագարին և Իսմայելին հեռու տեղ ուղարկիր: Իսմայելը Իսահակի հետ միասին ժառանգ չի լինի: Բայց մի՛ տրտմիր դրա պատճառով, ես հոգ կտանեմ նրանց համար:

Ծննդոց 21.1-3, 9-14
*իսահակ նշանակում է ծիծաղ

Աբրահամը սիրում էր իր որդի Իսահակին, և նրանք անբաժան էին:

Հայրի՛կ, ինչո՞ւ ես մորթում այս գեղեցիկ գառներին և այրում նրանց քարերի վրա:
Երկնքի և երկրի Աստված սուրբ է և մաքուր, չափազանց մաքուր իմ նման մեղավոր մարդու համար: Առաջին մարդը՝ Ադամը, չհնազանդվեց Աստծուն, և մարդկությունը մինչև այսօր ապրում է մեղավոր բնությամբ:
Աստված ասաց Ադամին, եթե մեղք գործես, կմեռնես: Բայց, երբ Ադամը մեղանչեց, Աստված նրա փոխարեն զոհեց կենդանիների, որ ծածկի Ադամի և Եվայի ամոթը:

Երբ ես զոհում եմ գառնուկին, դա ցույց է տալիս, որ ես ընդունում եմ իմ մեղավոր էությունը և առաջարկում եմ անմեղ գառնուկի կյանքը իմ փոխարեն:

Իսահակը մեծացավ
և սովորեց վստահել
իր հոր Աստծուն:
Աբրահամը շատ էր
սիրում նրան, և միշտ
միասին գնում էին
Աստծուն երկրպագելու
և զոհ մատուցելու:
Գառնուկը մորթվում
էր և դրվում
զոհասեղանին,
որ վառվի:



Աբրահա՛մ, ես ուզում եմ, որ վերցնես քո միակ սիրելի որդուն և որպես կենդանի զոհ մատուցես ինձ համար:

Աստվա՛ծ, ինչպե՞ս կարող ես նման բան պատվիրել: Դա քեզ նման չէ: Հեթանոսներն են մարդկային զոհեր մատուցում: Դու ասացիր, որ մեծ ազգ ես շինելու իմ որդի Իսահակի միջոցով: Եթե սպանեմ նրան, քո խոստումը չի իրականանա:

Ծննդոց 22.2, Հռովմայեցիս 5.12

Սա երեքօրյա ճամփորդություն է, ուստի մենք մեկ շաբաթ այստեղ չենք լինի:
Զգո՛ւյշ եղեք: Ես կաղոթեմ իմ տղամարդկանց համար:

Երեք օր անց...
Հայրի՛կ, ահա սարը, մենք այնտեղ կհասնենք մինչև երեկո:
Այո՛, մենք կգնանք, կերկրպագենք, զոհ կմատուցենք և ետ կվերադառնանք:

Հայրի՛կ, դու կառուցել ես զոհասեղանը և ահա փայտերը, բայց ո՞ւր է զոհը:
Իսահա՛կ, հիշո՞ւմ ես քեզ պատմել եմ, թե ինչպես Աստված խոսեց ինձ հետ և մենք ծերության ժամանակ քեզ ունեցանք:

Այս անգամ նա ասաց ինձ, որ պետք է քեզ զոհաբերեմ:
Ի՞նձ: Հայրի՛կ, դու վստա՞հ ես:

Չէ՞ որ Աստված ասել էր, որ ես ժառանգ եմ լինելու, մեծ ազգի հայր եմ լինելու և իմ սերունդը երկնքի աստղերի չափ է լինելու: Եթե հիմա մեռնեմ, ինչպե՞ս կիրականանա Աստծո խոստումը:
Ես հասկացել եմ, որ այն ինչ Աստված խոստանում է, նա կարող է և իրականացնել: Եթե նա ասել է, որ դու մեծ ազգի հայր ես լինելու, ուրեմն կլինես նույնիսկ մեռնելու դեպքում:

Ինչպե՞ս է դա հնարավոր, եթե ես մեռնեմ:
Ես չգիտեմ, միգուցե քեզ հարություն կտա մեռելներից:
Հայրի՛կ, մենք պետք է հնազանդվենք Աստծուն ցանկացած իրավիճակում:
Ծննդոց 22.3-9

Թեև Աբրահամը գիտեր, որ հնազանդվում է Աստծուն, բայց միևնույն ժամանակ նրա սիրտը տխուր էր, և ձեռքերը դողում էին, երբ պատրաստվում էր սկսել զոհաբերության գործընթացը:
Նա կապեց որդու ձեռքերն ու ոտքերը և պառկեցրեց զոհասեղանին: Հաջորդ քայլը դանակը կոկորդի մեջ խրելն էր:

Հավատքի աղոթքով նա բարձրացրեց դանակը, և պատրաստվում էր խրել կոկորդը, երբ հանկարծ երկնքից ձայն լսեց.

Աբրահա՛մ, Աբրահա՛մ, մի՛ ֆսասիր տղային:

Հիմա գիտեմ,
որ վստահում ես ինձ,
քանի որ հնազանդվեցիր և
պատրաստվում էիր զոհել քո
միակ որդուն:

Երբ Աբրահամը նայեց, թփերի մեջ մի խոյ տեսավ:
Հայրի՛կ, նայի՛ր, Աստված պատրաստել է խոյը իմ փոխարեն



Ծննդոց 22.9-18, Եբրայեցիս 11.17-19

Աբրահամն երկու որդի ուներ՝
Իսմայելը և Իսահակը:

Ծննդոց 21.5,13, 24.67, 25.12-18, 21-26, 29.23-30

Գլուխ 3

Սոկսես

Մ.թ.ա. 1706
Սովի ժամանակ Աբրահամի թոռ Հակոբը իր տասներկու որդիներին, նրանց ընտանիքներին և ծառաներին տարավ Եգիպտոս, որ կարողանան ապրել: Եգիպտոսում նրանք երկրի ավազի չափ շատացան:

Շուտով Հակոբի որդիները, ում անունը փոխվեց և դարձավ Իսրայել, քանակապես գերազանցեցին եգիպտացիներին:



Եգիպտոսի կառավարիչը՝ փարավոնը, Հակոբի որդիներին ստրուկներ դարձրեց և ստիպում էր ծանր աշխատանք կատարել: Նրանք աղյուսներ էին պատրաստում: 300 տարի անց նրանք մոռացան Աստծո խոստումների մասին, որ տրվել էին Աբրահամին և իրենց հայրերին:


Աստված ասել էր Աբրահամին, որ իր ժողովուրդը կգնա օտար երկիր և կծառայի այնտեղ: Նա նույպես խոստացել էր, որ 400 տարի հետո կդատի այդ ազգին և կտանի իր ժողովրդին խոստացված երկիր:

Ես ճիշտ եմ ասում: Փարավոնը վախենում է, որ մենք շատանում ենք: Նա սպանում է բոլոր նորածիններին: Եգիպտացիները թույլ են ու ալարկոտ: Մեր տղամարդիկ շատ ուժեղ են ծանր ֆիզիկական աշխատանքի պատճառով: Նրանք վախենում են մեզանից:
Նրանք չեն սպանի իմ փոքրիկին, Աստված կպահպանի նրան:
Ի՞նչ կարող է Աստված անել փարավոնի զորության դեմ:

Փարավոնը, վախենալով, որ հրեաները շատանում են, որոշեց սպանել բոլոր նորածին տղաներին:

Ծննդոց 46.5-7, Ելից 1.1-12, 22

Բայց, մայրի՛կ, ի՞նչ պետք է ասեմ զինվորներին և հարևաններին, երբ հարցնեն ուր է մեր երեխան:
Դու ճշմարտությունը կպատմես նրանց: Իր սեփական մայրը գետն է գցել երեխային, որ զինվորները դա չանեն:

Մոտավորապես մ.թ.ա. 1525

Երբևէ նորից կտեսնե՞նք փոքր եղբորս: Ա՜խ, այդ ստոր եգիպտացիները:
Աստված կպաշտպանի նրան: Դու մոտ կանգնիր և հետևիր:

Փարավոնի աղջիկը եկավ գետի մոտ, որ լողա:
Նայե՛ք, լացի ձայն է գալիս այն զամբյուղից:

Հնարավոր է նա եբրայեցիներից մեկի որդին է :
Օ՜, ինչ լավն է:
Հնարավոր է նա քաղցած լինի:

Ես կպահեի նրան, եթե կարողանայի գտնել մեկին, ով կկերակրեր փոքրիկին:
Մի հրեա երեխա կա, մի՞գուցե նա իմանա ինչ-որ մեկին, ով կարող է կերակրել:

Գնամ գտնեմ մեկին, ով կարող է կերակրել երեխային: Ես գիտեմ մի կնոջ, ում երեխային գետն են գցել, և նա կարող է կերակրել:

Ելից 2.3-9

Դու ուրիշ տարբերակ չունեիր: Դու չէիր կարող նրան հավիտյան թաքցնել: Վաղ թե ուշ զինվորները կգտնեին և կսպանեին նրան: Դու ուղղակի պետք է շարունակես վստահել Աստծուն:
Այս ի՞նչ արեցի ես: Արդյո՞ք նորից կտեսնեմ իմ երեխային: Արդյո՞ք Աստված հոգ է տանում նրա համար:
Մայրի՛կ, մայրի՛կ:

Մայրի՛կ, փարավոնի աղջիկը եկավ գետի մոտ և գտավ իմ փոքր եղբորը: Նա ցանկանում է պահել և մեծացնել տղային և փնտրում է կնոջ, ով կարող է կերակրել: Հիմա նա այստեղ է գալիս:
Օրինյա՛լ է Աստված հավիտյան:

Լսել եմ դուք կորցրել եք ձեր երեխային: Շատ եմ ցավում: Ես նրան գետում եմ գտել և քեզ կվճարեմ նրան կերակրելու համար:
Երբ նա կրծքից կտրվի, կգամ և նրան պալատ կտանեմ, որտեղ նա կմեծանա որպես Եգիպտոսի ապագա փարավոն: Մենք նրան Մովսես կկոչենք:
Մովսեսը մեծանում էր, և նա սովորեցնում էր տղային իր հայրերի ճշմարիտ Աստծո մասին: Աստված հատուկ ծրագիր ուներ այս փոքրիկ տղայի կյանքում:

Ցատկի՛ր այստեղ, փոքրի՛կ արքայազն: Մենք գնում ենք պալատ:
Ինչքա՞ն արագ նրանք կարող են վազել:
Շնորհակալ եմ Մովսեսին կերակրելու համար, նա շատ առողջ տեսք ունի: Նա կդառնա զորավոր և հարուստ մարդ Եգիպտոսում:

Ի- Ելից 2.8-10.

Լինելով փարավոնի աղջկա որդեգրված զավակ՝
Մովսեսը մեծացավ և դարձավ կարևոր մարդ
Եգիպտոսում: Նա դարձավ հարուստ և շատ զորավոր
մարդ, բայց երբեք չմոռացավ իր ժառանգությունը:

Ասում եմ քեզ, Մովսե՛ս, մեր հայրերի՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված, ասել է Աբրահամին, որ նրա սերունդը կշատացնի, և նրանք գերիներ կլինեն օտար երկրում, որ իրենցը չէ: Ահա՛ և մենք:
Այո՛, և նույնպես ասել էր, որ մենք կտանջվենք այդ օտար երկրում 400 տարի: Մենք այստեղ ենք արդեն 359 տարի, մեզ մնաց 41 տարի:

Դա անհավանական է թվում: Փարավոնը երբեք իր ստրուկներ բաց չի թողնի և հատկապես չի թողնի դուրս գան հարստությունով: Բայց, միգուցե մի ելք կա: Ինչո՞ւ սպասել 41 տարի:
Նաև Աբրահամին ասել էր, որ կդատի այդ ազգին այն չարիքի համար, որ մեզ կանեն, և մենք այստեղից դուրս կգանք շատ հարստությունով և կգնանք այն երկիրը, որ Աստված մեր հայրերին խոստացավ:

Եբրայեցիները տառապում էին իրենց տերերի պատճառով: Նրանք ստիպված էին աշխատել ցեխոտ փոսերում և աղյուսներ պատրաստել: Մովսեսը չկարողացավ տեսնել նրանց տառապանքը և որոշեց մի բանով օգնել նրանց:
Վե՛ր կաց, քանի դեռ քեզ մեռնելու չափ չի ծեծել:
Վե՛ր կաց, դո՛ւ, կեղտո՛տ խոզ:
էբե՛ր, վե՛ր կաց:

Ելից 2.10-11

Մի օր Մովսեսը տեսավ, թե ինչպես է եգիպտացին դաժանաբար ծեծում իր ժողովրդից մեկին:
Փրկության ժամն եկել է: Այս ամենը պետք է վերջանա:

Մովսեսը սպանեց եգիպտացուն և թաղեց, բայց ինչ-որ մեկը տեսավ և պատմեց փարավոնին:

Կանգնի՛ր, դու պետք է դատվես մարդասպանության համար:
Սա Մովսեսն է:
Աստվա՛ծ իմ, այս ի՞նչ արեցի ես:

Մոտավորապես մ.թ.ա. 1491
Մովսեսը լքեց Եգիպտոսը և գնաց անապատ: Նա միայնակ էր, չուներ ընտանիք և ընկերներ:
Ելից 2.11-15

Մովսեսը շատ օրեր քայլեց: Երբ հոգնեց և չէր կարողանում առաջ շարժվել, եկավ հովիվների վրանների մոտ:
Այնտեղ մարդ կա:
Նա համարյա մեռած է: Ձո՛ւր բերեք:
Նա եգիպտացի է:

Մովսեսը նոր կյանք սկսեց մադիամացիների մեջ: Նա սովորեց անապատի կյանքը, ամուսնացավ և դարձավ հովիվ: Եգիպտոսը դարձավ հիշողություն: Մովսեսը հույսը կորցրեց, որ երբևէ նորից կտեսնի իր ժողովրդին:

Սա շատ տարօրինակ է: Ինչպե՞ս կարող է թուփը այրվել և չվերջանալ: Այն շարունակ այրվում և այրվում է:

Մովսե՛ս, հանի՛ր կոշիկներդ, որովհետև դու սուրբ երկրի վրա ես կանգնած: Ես քո հայրերի՝ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածն եմ:


Ես տեսա և լսեցի
իմ ժողովրդի տանջանքն
ու աղաղակը Եգիպտոսում:
Ժամանակն է փրկել նրանց իրենց
նեղություններից և տանել այն երկիրը,
որ խոստացել եմ իրենց հայրերին:
Ես կուղարկեմ քեզ
փարավոնի մոտ, և դու կազատես
իմ ժողովրդին իրենց կապանքներից: Դու
կասես նրան, որ ազատի իմ ժողովրդին,
և նա կմերժի: Հետո ես Եգիպտոսին ցույց
կտամ իմ զորությունը: Դրանից հետո նա
թույլ կտա դուրս գալ:

Ելից 2.16-3.10

Բայց նրանք չեն հավատա, որ դու ես ինձ ուղարկել: Նրանք ուղղակի կծիծաղեն:

Գավազանդ
գցի՛ր գետնին:

Ի՞նչ, գավազա՞նս:

Այն թունավոր օձ դարձավ:

Պոչից բռնի՛ր
օձին:

Այն կրկին գավազան դարձավ:

Գնա՛ Եգիպտոս, ես կսովորեցնեմ քեզ ինչ խոսել և ցույց կտամ, թե ինչ անել: Քո եղբայր Ահարոնը քո օգնականը կլինի:
Ելից 4.1-4, 12-16

Մ.թ.ա. 1445
Դու վերադառնում ես Եգիպտոս: Իսկ այն մարդիկ, որ ուզում էին սպանել քեզ, չե՞ս մտածում դրա մասին:
Արդեն քառասուն տարի է անցել: Բոլորը, ովքեր գիտեին իմ անցյալը, արդեն մահացել են: Ոչ ոք չի ճանաչի ինձ:
Ինչքա՞ն ժամանակով ես գնում:
Մինչև փարավոնը Աստծո ժողովրդին թույլ տա գնալ:

Կանչե՛ք բոլոր ավագներին: Փրկության ժամն եկել է:
Ովքե՞ր են սրանք:
Սա Ղևտացի Ահարոնն է: Մյուսը նման է մեզ, բայց ստրուկ չէ:

Մոտ եկե՛ք, Իսրայելի բոլոր ավագներ:
Մովսեսը ծնվել է ութսուն տարի առաջ մեծ սպանդի ժամանակ, երբ փարավոնը սկսեց սպանել բոլոր տղա երեխաներին: Նրա մայրը նրան դրեց զամբյուղի մեջ և թաքցրեց գետում: Աստծո նախախնամությամբ՝ փարավոնի աղջիկը գտավ Մովսեսին և մեծացրեց որպես եգիպտացի:

Ելից 4.29-31

Քառասուն տարի առաջ Մովսեսը որոշեց, որ ավելի լավ է տանջվի իր ժողովրդի հետ, քան կառավարի որպես եգիպտացի: Նա փորձեց մեզ փրկել իր ուժերով, բայց ձախողվեց: Անցած քառասուն տարիները Մովսեսն ապրեց մեր հայրերին խոստացված երկրի անապատում: Վերջերս Աստված խոսեց նրա հետ և ցույց տվեց, թե ինչպես պետք է մեզ ազատի փարավոնից: Հիմա, Մովսեսը ձեզ ցույց կտա այն նշանները, որ պետք է անի փարավոնին համոզելու համար, որ արձակի մեզ:

Աբրահամի
Աստված խոսեց ինձ
հետ այրվող թփի միջից
և ինձ ուղարկեց, որ ձեզ
առաջնորդեմ մեր հայրերի
երկիրը: Սա է նշանը:

Այո՜: Նրա գավազանը օձ դարձավ:
Մի՛ վախեցեք:

Նայե՛ք սրան:

Աստված մեզ ազատագրող է ուղարկել
Այո, հիմա կտեսնի փարավոնը:

Սա հրաշք է:
Հիմա մենք գնում ենք փարավոնի մոտ:
Աբրահամի Աստված:
Ելից 4.17, 30

Ոչինչ չի
փոխվել այստեղ
քառասուն տարի առաջ
իմ հեռանալուց հետո:
Հիշի՛ր, պետք է ասես
այն, ինչ կասեմ քեզ:

Իսրայելի Աստված խոսեց Մովսեսի հետ: Նա ասաց, որ դու պետք է թույլ տաս, որ ժողովուրդը գնա անապատ երեք օրով՝ Աստծուն երկրպագելու և զոհ մատուցելու համար:
Քա՛հ, Իսրայելի Աստվա՞ծ: **Քա՞հ, քա՞հ, քա՞հ:** Ես չգիտեմ ձեր Աստծուն: Ո՞վ է այդ Աստված, որին պետք է հնազանդվեմ: Դա ծիծաղելի է: Ես թույլ չեմ տա իմ ստրուկներին երեք օրով անապատ գնալ:

Ես լսել եմ, որ դու խռովեցնում ես իմ ժողովրդին՝ ստիպելով դադարեցնել աշխատանքը: Եվ հիմա նրանք ցանկանում են երեք օրով գնալ և երկրպագել Աստծուն, որին ես չգիտեմ: Ես այնպես կանեմ, որ նրանք ավելի շատ ծանրաբեռնվեն աշխատանքով:
Այսուհետ, նրանք պետք է իրենց համար ծղոտներ գտնեն, որ կարողանան աղյուսներ պատրաստել:

Ելից 5.1-7

Կարո՞ղ ես պատկերացնել նրանց հանդգնությունը:
Զվարճալի է: Նրանք այնպես ներխուժեցին այստեղ, կարծես Աստծո ձայնը լինեին:

Դու մեզ ասում ես, որ այն, ինչ հաջողվեց անել դա մեր աշխատանքը կրկնապատկե՞լն էր: Սա ինչ ազատագրում է: Եվ դու կարծում ես, որ Աստվա՞ծ է քեզ ուղարկել:
Ո՞ւմ տեղն է իրեն դրել:
Չեմ հավատում, որ նրա ծուղակն ընկանք:
Խելագարի մեկը:

Ուրեմն, դուք անելիքներ չունեք: Ուզում եք գնալ և երկրպագել ձեր Աստծուն: Մենք կսովորեցնենք ձեզ անգործ չմնալ:

Եհովա՛, այն պահից սկսած, ինչ եկել եմ քո անունով խոսելու, ամեն ինչ դեպի վատն է գնում: Ինչո՞ւ ինձ այստեղ ուղարկեցիր:
Ես եմ Եհովան, քո հայրերի Աստվածը: Եվ ես տեսել եմ իմ Իսրայել ժողովրդի տառապանքը և լսել եմ նրանց աղաղակը:
Ժամանակն է իրականացնել Աբրահամին տված իմ խոստումը և տանել այս ժողովրդին Քանանի երկիր: Դու նրանց կառաջնորդես, Մովսե՛ս:

Ահարոնը կխոսի քո փոխարեն, դու միայն ինձ լսիր և նրան ասա, թե ինչ պետք է խոսի: Սկզբում փարավոնը չի լսի ձեզ, բայց ես նրան այնպիսի նշաններ ցույց կտամ, մինչև եգիպտացիները ճանաչեն, որ ես եմ ճշմարիտ Աստվածը:

Քա՜հ, քա՜հ, ինչո՞ւ եք նորից հետ եկել:
Եհովան ասում է. « Թո՛ւյլ տուր իմ ժողովրդին գնալ»:

Սա է նշանը, որ Եհովան խոսել է:
Քա՜հ, քա՜հ, քա՜հ, դա ընդամենը կախարդական հնարք է: Դա ինձ չի վախեցնում: Կանչե՛ք մեր կախարդներին:

Եսայի 5.10-23, 7.7-11

Արագացրե՛ք, եկե՛ք,
որ կատարեք այն հնարքը, որ
գավազանը օձ է դառնում:

Օձերի Աստված Նեսերտը ուղարկել է մեզ ասելու, որ շատ աղյուսներ պատրաստեք: **Քա՜հ, քա՜հ. քա՜հ:**

Ելից 7.11-12

Նայե՛ք,
նրա օձը ուզում է պայքարել մեր օձերի հետ:

Նրա օձը ուտում է մեր օձերից մեկին:

Նա ամբողջությամբ կուլ տվեց մեր օձին:

Մի՛ ասա, որ այն պատրաստվում է կուլ տալ մեկ ուրիշ օձի: Օձերի աստված Նեսերտը կբարկանա:

Չեմ հավատում: Նրա օձը կուլ տվեց մեր բոլոր օձերին:
Ինչպե՞ս է սա հնարավոր:

Եհովան արարչագործության Աստվածն է: Նա ասում է. « Թո՛ւյլ տուր իմ ժողովրդին գնալ»:

Ելից 7.12

Ես չգիտեմ
ինչպես դա արեցիք,
բայց չեմ պատրաստվում
վարձատրել ձեզ
միլիոնավոր ստրուկներով:
Հեռացե՛ք այստեղից:

Ելից 7.13

Ինչո՞ւ Եհովան մեզ այնպիսի նշան տվեց, որ փարավոնի կախարդներն էլ կարողացան անել: Մենք կարծես հիմար լինեինք:
Ես չգիտեմ, բայց Աստված ասել էր, որ խստացնելու է փարավոնի սիրտը: Եվ եղավ այն, ինչ նա ասել էր: Նկատեցի՞ր ինչքան բարկացավ, երբ իմ գավազանը կերավ իր օձերին:
Ես մի տեղ պետք է գտնեմ, որ խոսեմ Եհովայի հետ: Չգիտեմ հետո ինչ պետք է անեմ:


Աստված կրկին հանդիպեց Մովսեսի հետ և ասաց ինչ անել հետո: Եգիպտացիները ծաղրեցին Մովսեսին, իր ժողովուրդը մերժեց իրեն, որովհետև փարավոնը ավելի ծանրացրեց աշխատանքը, բայց Մովսեսը հավատաց և հնազանդվեց Աստծուն, նույնիսկ, երբ ոչինչ չէր հասկանում:
Եհովան ասում է. « Որովհետև դու թույլ չտվեցիր իմ ժողովրդին գնալ, և որպեսզի իմանաս, որ ես եմ Ճշմարիտ Աստվածը, Եգիպտոսի բոլոր ջրերը արյուն կդառնան:

Սա արդեն տպավորիչ է: Ինչպե՞ս նա դա արեց:
Գնա՛, կանչի՛ր իմ կախարդներին: Նեղոսի աստվածը կկանգնեցի սա:

Ելից 7.15-21

Տեսնո՞ւմ ես, իմ կախարդները կարող են նույնն անել: Ես չեմ համոզվի ձեր **կախարդական հնարքներով:**

Ես երբեք իմ կյանքում նման բան չէի տեսել: Նույնիսկ աղբյուրներն ու փոքր լճակներն են արյուն դարձել: Ի՞նչ ասաց նա, ի՞նչ էր նրա Աստծո անունը:
Նրանք երբեք չեն ասել: Ի՞նչ տարբերություն: Մենք հազարավոր աստվածներ ունենք: Նեղոս գետի աստվածը բարկացած կլինի:

Այդ Մովսեսն ասում է, որ իր Աստված միակ Աստվածն է:
Մե՞կ Աստված: Շատ **ծիծաղելի է:**

Ձրերը արյուն դառնալուց յոթ օր անց Մովսեսը կրկին Աստծո դատաստանը բերեց Եգիպտոսի վրա:
Թո՛ղ ջրերում շատ գորտեր առաջանան:

Ելից 7.21-25,8.6

Տունս լցված է գորտերով:

Ողջ Եգիպտոսը լցված է գորտերով: **Աստվածները բարկացել են:**
Որտե՞ղ են մեր քահանաները: Չե՞ն կարող մի բան անել:

ولا...

Ինչո՞ւ են նրանք ավելի **շատ** գորտեր ստեղծում: Չէ՞ որ Մովսեսն արդեն բավականին շատ է տվել մեզ: Հիմա էլ փարավոնը կավելացնի:
Փարավո՛ն, տե՛ս, կախարդներն էլ են կարողանում գորտ ստեղծել:

Ինչո՞ւ նրանց թույլ չես տալիս գնան անապատ, ինչպես որ խնդրում են: Մենք այլևս չենք կարող դիմանալ սրան:

Կանչի՛ր Մովսեսին, ասա՛, որ ուզում եմ խոսել:
Այո՛, Տե՛ր, ինչպես կասես:

Խնդրիր Եհովային, որ հեռացնի գորտերին: Եթե նա անի դա, ես թույլ կտամ քո ժողովրդին գնալ և զոհ մատուցել:
Դու ինձ ասա երբ կուզես, որ գորտերը վերանան, և այդպես կլինի:

Վաղն առավոտյան:
Քո ասածի պես կլինի, որ բոլորը իմանան, որ բացի Եհովայից ուրիշ Աստված չկա:

Ելից 8.7-10

Երբ փարավոնը տեսավ, որ գորտերը վերացան իր նշանակած ժամին, խստացրեց սիրտը և թույլ չտվեց եբրայեցիներին գնալ:
Ի՞նչ Աստված է այս Եհովան, որ մեր երկիրը գորտերով լցրեց:
Ինչո՞ւ ես կարծում, որ Աստված է սա արել, հնարավոր է բնական երևույթ լինի:


Ուրեմն, ինչպե՞ս Մովսեսը գիտեր և կանխատեսեց, որ դա պետք է տեղի ունենա: Եվ ինչպե՞ս գիտեր ճիշտ ժամը, երբ պետք է դրանք վերանային:
Չայնդ կտրի՛ր և հավաքի՛ր, այլապես մենք երբեք չենք ավարտի:

Եվ Եհովան ասաց Մովսեսին. « Ասա՛ Ահարոնին. մեկնի՛ր ձեռքդ և հարվածիր երկրի հողին, որ Եգիպտոսի ամբողջ երկրում մժեղ լինի»:

Եվ Եգիպտոսի ամբողջ փոշին մժեղի վերածվեց:
Վռռռռ...

Ինչպե՞ս չես կարող մժեղ ստեղծել: **Մարդիկ կմտածեն, որ նրա Աստված ավելի զորավոր է, քան մերը:** Դու միայն կախարդական հնարքներ կարող ես անել:
Բայց, տե՛ր իմ, վստահ սա Աստծո ձեռքի գործն է: Ոչ մի մարդ չի կարող անել այն ամենը, ինչ այն երկուսը արեցին: Մենք անզոր ենք:

Բնական բացատրություն պետք է լինի, բայց մենք սա այլևս չենք կարող հանդուրժել: Լուր ուղարկիր Մովսեսին: Նրան ասա, որ, եթե իր Աստված հեռացնի մժեղներին, ես թույլ կտամ եբրայեցիներին գնալ և ծառայել իրենց Աստծուն:

Ելից 8.13-19

Մժեղները հեռացան, բայց ես չեմ կարող թույլ տալ, որ ստրուկները հեռանան: Սրանից հետո էլ ի՞նչ կարող է նրա Աստված անել:

Աստված խոսեց Մովսեսի հետ: Աստված ասում է. « Ես շնաճանճ կուղարկեմ Եգիպտոսի վրա: Ձեր տները լցված կլինեն դրանցով: Բայց այս անգամ, ես
տարբերություն կդնեմ եգիպտացիների և եբրայեցիների միջև:

Հայրի՛կ, ինչո՞ւ մեր քահանաները չեն կանգնեցնում այս **մարդուն:** Ո՞ւր է նրանց **զորությունը:**
Ես կրոնի մասին ոչինչ չգիտեմ: Ես իմ գործով եմ զբաղված:

Ճիշտ այնպես է, ինչպես նա ասել էր: **Եբրայեցիների մեջ շնաճանճ չկա**: Սա պետք է, որ նրանց Աստծո ձեռքի գործը լինի:
Գնա՛, գտի՛ր Մովսեսին:

Ուրեմն, գնացե՛ք և պատարագ մատուցեք ձեր Աստծուն, բայց Եգիպտոսից **դուրս մի՛ եկեք:**
Մենք, առնվազն երեք օրվա ճանապարհի պետք է գնանք:
Ես ասացի, որ կարող եք գնալ, բայց հեռու գնալ չեք կարող: Հիմա, խնդրեք ձեր Աստծուն, որ հեռացնի գարշահոտ ճանճերին:

Ոչ մի կենդանի շնաճանճ չմնաց ամբողջ Եգիպտոսում: Սա հրաշք է:
Չայնդ կտրի՛ր, այնպես ես խոսում կարծես սկսում ես հավատալ շատախոսին:
Փարավոնը կրկին խստացրեց սիրտը և թույլ չտվեց ժողովրդին գնալ:

Ելից 8.20-32

Աստված մեկ այլ ժանտախտ ուղարկեց Եգիպտոսի վրա: Նրանց բոլոր կովերը, ոչխարները, եզները, ձիերը և ուղտերը խոցերով պատվեցին և սատկեցին: Բայց եբրայեցիների կենդանիները չհիվանդացան:
Մեր բոլոր կենդանիները սատկեցին, իսկ ձերը՝ առողջ են: Ինչպե՞ս սա կբացատրեք:
Մովսեսն ասում է. «Սա մեր հայրերի Աստվածն է, եկել է մեզ ազատի ձեր դաժան ստրկությունից, բայց ես սովորական մարդ եմ, ես նման բաներից չեմ հասկանում»:

Մեր քահանաները զոհեր են մատուցում մեր աստվածներին: Մեր սուրբ ցուլը կբարկանա և վերջ կդնի այս ամենին:

Ասա՛ փարավոնին, որ մեր բոլոր սուրբ կովերը սատկել են: Մարդիկ կկատաղեն, երբ հասկանան, որ մեր աստվածները չեն կարողացել նրանց պաշտպանել եբրայեցիների անտեսանելի Աստծուց:
Ո՞ւր են եգիպտացիների աստվածները: Նրանք զորություն չունե՞ն:

Բայց
փարավոնը
խստացրեց
իր սիրտը:

Ելից 9.6-7

Աստված կրկին խոսեց Մովսեսի հետ և պատվիրեց մոխիր ցանել երկրի վրա, և եգիպտացիները կծածկվեն ուռուցքներով:
Աստված ասում է. «Քանի որ դու թույլ չես տալիս իմ ժողովրդին գնալ, ես էլ այնպես կանեմ, որ քո երկրի բոլոր մարդիկ և կենդանիները ծածկվեն ուռուցքներով»:
Օ՜, ո՛չ, միայն ոչ նորից:

Կանչե՛ք կախարդներին: Թո՛ղ իրենց ամբողջ ուժերը հավաքեն: Զոհաբերություն անեն աստվածներին: ***Վերջ դնեն այս ամենին:***

Դուք ասացիք ամենակարո՞ղ:
Դու նո՞ւյնպես: Մի՞թե անզոր ես Մովսեսի Աստծո դեմ:

Կորե՛ք աչքիցս: Դո՛ւք, **անզոր հիմարների հավաքածու:** Ձեր ձեռքի գործերով հիմարեցնում եք մարդկանց, բայց ես գիտեմ, որ դուք խաբեբա եք: Ո՞ւր են ձեր աստվածները:


Վե՛ր կաց կանուխ և գնա փարավոնի մոտ և ասա՛. «Եբրայեցիների Աստվածն այսպես է ասում. թո՛ւյլ տուր իմ ժողովրդին գնալ: Քանի որ հաջորդ արհավիրքը ավելի վատն է լինելու: Այն կսպանի շատ մարդկանց: Սրանով դու կիմանաս, որ ինձանից բացի ուրիշ Աստված չկա: Դու ինձ չես ճանաչում, բայց ես եմ քեզ փարավոն դարձրել:
Տեսնում ես, ես գիտեի, որ դու խստացնելու ես քո սիրտը և թույլ չես տալու իմ ժողովրդին դուրս գալ»:

«Քո համառությունն ինձ հնարավորություն է տալիս դրսևորել զորությունս և դատաստան բերել Եգիպտոսի վրա իմ ժողովրդի հանդեպ ունեցած վատ վերաբերմունքի համար: Դու գերադասում ես քո սեփական շահերը և հակառակվում ես իմ կամքը կատարելուն,
ուստի վաղն այս նույն ժամին ես սառցե և կրակե անձրև կուղարկեմ, ինչպիսին երկիրը մինչ այժմ չի տեսել»:

«Ես սա ասում եմ քեզ, որ զգուշացնես բոլորին, որ դրսում չմնան ո՛չ իրենք, ո՛չ իրենց կենդանիները, քանի որ ով դրսում լինի, կմեռնի»:

Եսայի 9.8-19

Թո՛ղ Եհովայի ասածի պես լինի:

Ինչպե՞ս կարող է նման բան պատահել. կրակը և սառույցը միախառնված:
Զորավոր Աստված, Սե՛թ, փրկի՛ր մեզ:
Ասա՜խ
Նրանք, ովքեր ականջ չդրեցին զգուշացմանը և մնացին դրսում, մահացան:

Հայրի՛կ, ինչպե՞ս է Մովսեսն անում սա: Մի՞թե նրա Աստված ավելի զորավոր է քան Սեթը՝ քաոսի և փոթորկի տիրակալը:
Նա պնդում է, որ միայն մեկ Աստված կա, և այս եբրայեցիները Նրա զավակներն են:
Բայց ոչ ոք երբեք չի տեսել նրա Աստծուն, ոչ էլ եբրայեցիները: Նրա Աստված, որ հոգի է, ինչպես նա է ասում, փորձում է համոզել փարավոնին, որ թույլ տա նրանց գնալ անապատ և երկրպագել:

Զորավոր
Սե՛թ, քաոսի և փոթորկի
տիրակալ, աղաչում ենք քեզ
վերջ դիր այս սարսափելի
փոթորիկներին: Միանշանակ
դու ավելի զորավոր ես, քան
Մովսեսի անտեսանելի
Աստված:

Ելից 9.23-26

Այն մեզ չի մոտենում, այլ միայն եգիպտացիներին:
Հայրի՛կ ես վախենում եմ, արդյո՞ք սառույցն ու կրակը չի թափվի մեզ վրա:

Ո՛չ, որդի՛ս: Եհովան պատժում է եգիպտացիներին իրեն չհնազանդվելու համար: Նա ցույց է տալիս, որ նրանց փոթորկի աստված Սեթը **անզոր** է օգնելու նրանց:
Սա սարսափելի է:

Ես մեղանչել եմ Եհովայի դեմ: Եբրայեցիների Աստված **արդար** է, իսկ ես և իմ ժողովուրդը **մեղավոր** ենք: Խնդրիր Եհովային կանգնեցնել սառցե և կրակե անձրևը, և ես իսկույն թույլ կտամ քո ժողովրդին գնալ:

Երբ դուրս գամ քաղաքից և պարզեմ ձեռքերս դեպի երկինք, արհավիրքը կդադարի: Սրանով դու կիմանաս, որ Եհովան է **երկրի Տերը**, բայց դու քո խոսքը չես պահի: Դու դեռ չես վախենում Աստծուց:
Երբ փարավոնը տեսավ, որ փոթորիկն անցավ, նորից իր սիրտը խստացրեց: Նա թույլ չտվեց ժողովրդին գնալ:


Աստված մեկ այլ արհավիրք ուղարկեց: Այս անգամ մորեխներն եկան և կերան ամեն կանաչ բան, որ փոթորիկը չէր ավերել: Հետո մորեխները ներխուժեցին մարդկանց տները:
Ելից 9.26-35, 10.13-15

Մայրի՛կ, մայրի՛կ
Աաա՛յ
Աշ՛, աստծի՛ր

Գե՛ր,
բուսականության
աստվա՛ծ, մի՞թե դու չես
տեսնում, թե եբրայեցիների
Աստված ինչ է անում մեր
բերքի հետ:
Օսիրի՛ս,
ցո՛ւյց տուր քո
զորությունն
այսօր:
Փարավոնը կանչեց
Մովսեսին և
խոստացավ թողնել
ժողովրդին, բայց,
երբ մորեխներն
անհետացան, նա
նորից խստացրեց իր
սիրտը և հրաժարվեց
ազատ արձակել
իր ստրուկներին:

Ելից 10.14-20

Հետո Աստված շոշափելի խավարով ծածկեց Եգիպտոսը: Երեք օր ավելի մութ էր, քան ամպամած գիշերը, բայց եբրայեցիների տներում խավար չկար:

Կորի՛ր աչքիցս: Չեմ ուզում այլևս երեսդ տեսնել, հակառակ դեպքում դու կմեռնես:
Դու այս անգամ ճիշտ ասեցիր: Մենք էլ երբեք չենք հանդիպի:

Ռա՛, արևի
հզոր աստված, լսի՛ր
մեզ: Երեք օր է ինչ թաքցրել
ես քեզ: Մի՞թե չես կարող
հաղթել եբրայեցիների
Աստծուն:

Ահա՛: Մի վերջին արհավիրք և փարավոնը կցանկանա, որ մենք լքենք Եգիպտոսը: Այսօր կեսգիշերին Աստված կանցնի Եգիպտոսի տարածքով: Ամեն ընտանիքում նորածին տղա երեխաները կմեռնեն: Աստված կպատժի մեղքը այս գիշեր:
Իսկ ի՞նչ կլինի մեր նորածինների հետ: Նրանք է՞լ կմեռնեն:

Ելից 10.22-19, 11.4-5, 12.3-7


Վաղը գնացեք ձեր եգիպտացի տերերի մոտ, վերցրեք նրանց թանկարժեք զարդերը, ոսկին և արծաթը: Աստված հպվել է նրանց սրտերին: Նրանք ձրի և լիքը կտան ձեզ:
Հավաքեք ձեր բոլոր իրերը և պատրաստվեք վաղն առավոտյան դուրս գալուն: Դուք այլևս հետ չեք գա այստեղ: Մեկընդմիշտ հրաժեշտ տվեք Եգիպտոսին: Սա կլինի նոր ժամանակի սկիզբ ձեր համար, ձեր առաջին օրը:

Հայրի՛կ, սա մեր ունեցած միակ գառնուկն է, չէի՞նք կարող կարմիր ներկ կամ ուրիշ բան օգտագործել:
Որդի՛ս, Աստված պատվիրել է գառնուկ մորթել և դրա արյունը քսել դրանդիներին: Մենք պետք է անենք այնպես, ինչպես Աստված ասել է: Դու տեսար, թե ինչպես նա պատժեց նրանց, ովքեր չհնազանդվեցին: Այս գառնուկը քեզ կփրկի մահից:

Ուրեմն, նա ինձ համա՞ր մորթվեց:
Ինձ համար նույնպես, քանի որ ես էլ առաջնեկ եմ:

Ելից 12.26-28, 35-36

Ինչո՞ւ դուք չեք մորթել գառնուկին և արյունը քսել դռանը:
Դուք հավատո՞ւմ եք այդ **սնահավատությանը:** Ինչպե՞ս կարող է մի փոքր արյունը խափանել մահը: Իմ որդին չի վախենում, այնպես չէ՞ Զոյկիմ:

Իհարկե ո՛չ: Կարծում եք
ես նրբի՞կ եմ: Կրոնը **թուլամորթների համար է:** Բարի Աստված չի սպանի
մարդկանց, եթե դռներին արյուն չեն քսել:
Իսկ այն մարդիկ, ովքեր չե՞ն լսել:

Հայրի՛կ, ինչո՞ւ է այս գիշերը տարբերվում մյուսներից:
Որովհետև այս երեկո Աստված կզարկի բոլոր նորածին տղաներին և նրանք կմեռնեն, որովհետև չեն հավատում նրան: Բայց, երբ արյունը տեսնի, կանցնի այդ տան կողքով:
Սա օրերի սկիզբն է մեզ համար: Ամեն տարի այս օրը մենք պետք է տոնենք զատիկը և հիշենք ինչպես Աստված ազատեց մեզ փարավոնի ձեռքից:

Հայրի՛կ, լսիր **բղավոցները:** Երևի կործանիչն արդեն այստեղ է:
Մի՛ վախեցեք: Մենք հնազանդվել ենք Աստծուն: Արյունը դռան վրա է: Մենք ուտում ենք գառնուկը:

Ելից 12.28

Վաաա՜յ
Ո՛չ, Աստվա՛ծ, ո՛չ իմ որդին:
Ոոոո՜չ

Ցավում եմ, բայց արդեն շատ ուշ է: Ձեզ զգուշացվել էր, բայց **դուք մերժեցիք** հավատալ: Կարծում եմ շատերը մահացան այս գիշեր:
Հազարավորները մահացան այդ գիշեր, երբ կործանիչը անցավ երկրի միջով, բայց նրանք, ովքեր հավատացել և արյունը քսել էին դռներին, կենդանի մնացին:

Մեր որդին մահացավ:
Շտապի՛ր, Մովսեսին այստեղ բե՛ր:

Ելից 12.29-31

Փարավոնը
նորից կանչեց
Մովսեսին:

Բայց փարավոնը չնայեց Մովսեսի դեմքին:



Ինչպես Աստված խոստացել էր իրենց հայրերին, չորս հարյուր տարի անց նրանք դուրս են գալիս Եգիպտոսից: Եգիպտացիք նրանց տվեցին թանկարժեք զարդեր, արծաթ, ոսկի, սնունդ, ամեն բան, ինչ կարող էին տանել: Դա ուրախալի իրադարձություն էր եբրայեցիների համար. նոր ազգի առաջին օրը:

Ելից 12.31-38, 13.21-22

Գլուխ 4

Եվից

Նրանք քայլեցին այնքան,
մինչև հասան լեռներին և կանգ
առան Կարմիր ծովի դիմաց:
Այնտեղ նրանք վրաններ
դրեցին՝ մինչ քննարկում էին,
թե ինչպես են անցնելու ծովը:

Պատրաստե՛ք կառքերը, հե՛տ բերեք եբրայեցիներին կամ սպանե՛ք բոլորին:
Իր որդու մահը սգալուց հետո, փարավոնն ավելի բարկացավ: Ինչո՞ւ նա թույլ տվեց իր ստրուկներին հեռանալ:
Չե՛րդ գերազանցություն, կլինի այնպես, ինչպես ասացիք:

Ելից 14.5-7

Նայե՛ք, եգիպտացիների բանակը գալիս է: Մենք ծուղակի մեջ ընկանք այս անապատում:
Մովսեսը մեզ բերեց այստեղ, որ **մեռնենք:** Ավելի լավ էր ապրել որպես **ստրուկ,** քան մեռնել այս լքված վայրում:

Աստված չի կարող փրկել մեզ:
Մեր կողքը լեռներ են, իսկ առջևում ծովն է: Մենք ծուղակում ենք:
Երբ եգիպտացիները տեսան անօգնական եբրայեցիներին և հիշեցին իրենց տառապանքը, որ Մովսեսը պատճառեց Եգիպտոսին, պատրաստ էին սպանել նրանց:

Կանգնե՛ք ձեր տեղերում: Աստված կփրկի մեզ զորավոր ձևով:
Աստված ևս մեկ անգամ խստացրել է փարավոնի սիրտը: Այլևս **երբեք դուք չեք** տեսնի եգիպտացիների բանակը:

Ելից 14.5-13

Երբ թվում էր, թե եգիպտացիների բանակը կհարձակվի եբրայեցիների վրա, հանկարծ երկնքից կրակի սյուն իջավ և փակեց նրանց ճանապարհը: Այդ գիշեր եբրայեցիները լույս ունեին, բայց եգիպտացիները շոշափելի խավարի մեջ էին:

Մովսեսը ծովի վրա պարզեց իր գավազանը և սաստիկ քամի եկավ երկնքից, փչեց ջրերի վրա, և ծովը կիսվեց՝ մինչև որ ծովի հատակը տեսանելի եղավ:
Սա ամենամեծ հրաշքն էր: Իսրայելի որդիները ծոցն անցան ցամաքի վրայով:
Հետագայում նրանք կերգեն ծովում ճանապարհ պատրաստող Աստծո մասին: Բոլորը կիմանան, որ միայն մեկ Աստված կա և նրա անունը Եհովա է:
Ելից 14.15-22

Սա գերազանցում է այն ամենին, ինչ մենք տեսանք Եգիպտոսում:
Օ՜, այո՜, մեր Աստված **լավագույն** Աստվածն է: Մենք ծովի մեջտեղն ենք:

Հոսայիա՛, դու գժվե՞լ ես: Հեռու գնա՛ այդտեղից, դու լողալ չգիտես:

Ես ուղղակի
ուզում եմ դիպչել
այս գեղեցիկ
ձկնիկին:

Երբ եբրայեցիները համարյա անցել էին, Աստված հեռացրեց կրակի պատը, որ պահում էր եգիպտացիներին: Նրանք չէին տեսել ծովը բացված, ուստի շտապեցին եբրայեցիների հետևից:
Առա՛ջ, սպանե՛լ հրեաներին:

Ելից 14.22-23

Այսօր դուք տեսաք **Եհովայի** զորությունը:
Նայե՛ք, ջրերը ետ են դառնում, նրանք բոլորը **կխեղդվեն:**

Բոլոր եգիպտացի զինվորները խեղդվեցին ծովում, և նրանց փայտի և քարի աստվածները չկարողացան փրկել:
Ելից 14.27-28

Նայե՛ք նրանց **մարմիններին:** Ծովը լցվեց մեռած եգիպտացի զինվորների մարմիններով:
Միանշանակ, Եհովան է **միակ** Տեր Աստվածը: Նրանից բացի ոչ ոք չի կարող սա անել: Մենք այս օրը հավիտյան կհիշենք:

Հետևում թողնելով ծովը և մեռած եգիպտացիների բանակը, Իսրայելի որդիները հսկայական անապատում հետևեցին Մովսեսին և ամպի սյանը: Նրանք շարունակեցին ուտել և խմել ինչ-որ բերել էին իրենց հետ Եգիպտոսից:

Մի քանի օր հետո ամպը, որն առաջնորդում էր նրանց կանգ առավ ջրհորների մոտ: Իսրայելացիները վրաններ դրեցին և մնացին այնտեղ այնքան, մինչև սնունդը վերջացավ: Ոչ մի տեղից չէին կարող թարմ սնունդ ձեռք բերել: Անհույս վիճակում էին հայտնվել:

Մենք կարող էինք մնալ **Եգիպտոսում** և սրանից ավելի լավ ապրել: Երբ մենք ստրուկներ էինք, ուտելու ավելի շատ պաշար ունեինք: Այստեղ ոչինչ չկա:
Այո՛, դու մեզ բերեցիր այստեղ, որ **սովից** մեռնե՞նք:

Լսե՛ք ինձ: Դուք իմ դեմ չեք բողոքում, բայց Աստծո դեմ, ում մենք հետևում ենք:
Եհովան ասում է, որ նա երկնքից հաց կուղարկի: Ամեն առավոտ դուք գետինը հացով ծածկված կգտնեք: Դուք միայն պետք է հավաքեք և ուտեք այն:

Ի՞նչ ասաց Մովսեսը: Ի՞նչ պետք է ուտենք: Երեխաները քաղցած են:
Նա ասում է, որ Եհովան ամեն առավոտ երկնքից հաց է ուղարկելու:

Ելից 14.21-22, 30, 16.2-3, 7-8

Երկնքից ուղարկված հաց, ինչպես նա ասել էր:
Ինչո՞ւ էինք մենք կասկածում:

Նայե՛ք, դա ամենուր է:
Այն շատ **համեղ է: Մեղրի** համ ունի:
Իսկապես, Եհովան Աստված է և Մովսեսը նրա մարգարեն է:

Քանի դեռ նրանք անապատում էին, Աստված կերակրեց նրանց հրեշտակների երկնային կերակուրով:
Քանի դեռ ամպը կանգնած էր նրանց վրանների վրա, հրեաները մնացին ջրհորների մոտ և կերան երկնային կերակուր, բայց, երբ ամպը շարժվեց, նրանք հավաքեցին վրանները և հետևեցին դրան՝ չիմանալով ուր են գնում:

Բայց եկավ ժամանակ, երբ նրանք ջրի կարիք ունեցան:
Նա մեզ հաց տվեց, բայց կսպանի ծարավով:
Իմ փոքրիկ աղջիկը կմահանա, եթե շուտով ջուր չխմի:

Ելից 16.14-15, 17.2-4, Սաղմոս 78.24-25
14-15, 17:2-4;

Աստված ասաց Մովսեսին, թե ինչ պետք է անել:
Եկե՛ք և Եհովայի **զորությունը** տեսեք: Դուք նրան չեք հավատում: Դուք տրտնջում եք և **դժգոհում:**

Նա ձեզ հաց տվեց և հիմա էլ ջուր է տալու այս անկենդան ժայռից:

ԹԼԻԿ
Վաա՜յ...
Ծննդոց 17.5-6

Ջուրը գետի նման հոսեց:

Ամպը կրկին շարժվեց, և իրեաներն
էլ հավաքվեցին և հետևեցին
ամպին մինչև Սինա սարը:

Այնտեղ Մովսեսը աղոթեց, և Աստված խոսեց նրա հետ:

Հիշեցրո՛ւ նրանց այն ամենը ինչ արեցի եգիպտացիներին, ինչպես ազատեցի իրենց, կերակրեցի և ժայռից ջուր տվեցի:



Ելից 17.6, 19.1-6, 9

Ասա՛ նրանց, եթե հնազանդվեն իմ պատվիրաններին, ինձ համար հատուկ ժողովուրդ կլինեն երկրի երեսի վրա եղած ամեն ազգերից:
Մովսե՛ս, երբ գամ քեզ հետ խոսելու, ժողովուրդը կտեսնի ամպի սյունը և կլսի իմ ձայնը և կիմանա, որ ես եմ խոսողը:

Մովսեսը սարից իջավ և պատմեց ժողովրդին ինչ-որ Աստված ասել էր:
Մենք կինազանդվենք: Մենք կանենք ամեն բան, ինչ Աստված կասի:
Ուրեմն գնացե՛ք մաքրեք ձեր հանդերձները և մարմինները, պատրաստե՛ք ինքներդ ձեզ երկրպագության: Երեք օրից Աստված կայցելի ձեզ:

Ինչպես Աստված պատվիրեց, երրորդ օրը բոլոր ժողովուրդը հավաքվեց սարի դիմաց, որ Աստված խոսի նրանց հետ: Տարօրինակ ամպ իջավ սարի վրա և հետո...

Մովսե՛ս, ես եմ Եհովա Աստվածը, որ ձեզ դուրս բերեց Եգիպտոսից: Երբ ցած իջնես, ցանկապատիր լեռը:
Եթե որևէ մեկը մոտենա լեռանը, կմեռնի: Ես քեզ տասը պատվիրանները կտամ, որ նրանց փոխանցես:

Ելից 19.7-25


Ինձնից բացի ուրիշ աստվածներ չունենա՛ս
քեզ համար կուռք չշինես
քո տեր աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես
հանգստյան օրը սուրբ պահի՛ր
պատվի՛ր քո հորն ու մորը
Մի՛ սպանիր
շնություն մի՛ անիր
գողություն մի՛ անիր
քո դրացու դեմ սուտ վկայություն մի՛ տուր
մի՛ ցանկանա քո դրացու որևէ բանը

Ելից 20.3-17

Երբ Մովսեսը սարից իջավ, հավաքեց Իսրայելի յոթանասուն ավագներին և տվեց Աստծո պատվիրանները:
Մենք կպահենք դրանք:
Լավ պատվիրաններ են:
Դուք՝ յոթանասուն տղամարդիկդ, ինձ հետ պետք է նորից սարը բարձրանաք: Աստված կհանդիպի ձեզ հետ, ինչպես ինձ հետ: Դուք ինքներդ կտեսնեք: Բայց նախ ես պետք է գրքի մեջ գրեմ Աստծո պատվիրանները:

Մովսեսը զգուշորեն գրի առավ այն ամենը, ինչ Աստված խոսել էր: Աստծո Հոգին օգնեց, որպեսզի նա չսխալվի:

Երբ Մովսեսը վերջացրեց գրի առնել խոսքերը, նա հավաքեց ժողովրդին և կարդաց Աստծո խոսքերը:
Ամեն բան, որ Աստված խոսել է բարի է, և մենք կհնազանդվենք:
Այսպիսով, Իսրայել ժողովուրդը ուխտ հաստատեց Աստծո հետ: Նա կօրհնի նրանց, կյանք կտա, կազատի բոլոր թշնամիներից, և նրանք հնազանդ կլինեն պատվիրաններին և կքայլեն արդարության մեջ:

Աստված պատվիրեց Մովսեսին
արյան զոհ մատուցել և ցողել
այդ արյունից ժողովրդի վրա:

Բոլորը մեղավոր էին և արժանի մահվան, նույնիսկ Մովսեսն ու Ահարոնը: Բայց Աստված ողորմած էր: Նա փրկվելու հնարավորություն տվեց:

Աստված կծածկեր մեղքերը և չէր սպանի մարդկանց, ինչպես նրանք արժանի էին, եթե անմեղ կենդանի մորթվեր և արյունը ցողվեր ժողովրդի վրա: Գառնուկը, որ արժանի չէր մեռնելու, մորթվում էր շատ մեղավորների փոխարեն, ովքեր իրականում արժանի էին մահվան:

Ելից 24.1-8

Այսպիսով, յոթանասուն ավագները Մովսեսի հետ սարը բարձրացան, որտեղ Աստված խոսել էր Մովսեսի հետ:

Հանկարծակի նրանց առջև հայտնվեց Աստծո գահը:

Յոթանասուն ավագները տեսան, թե ինչպես Մովսեսը վեր բարձրանալով՝ կորավ Աստծո շողացող փառքի մեջ:
Գեղեցկությո՞ւն
Եվ փառք
Մովսեսից բացի ոչ ոք Աստծո հետ երես առ երես չխոսեց:

Ելից 24.9-10

Մովսե՛ս, պատվիրի՛ր մարդկանց ինձ համար խորան պատրաստել, որտեղ կերկրպագեն ինձ: Այն կունենա զոհասեղան, որի վրա զոհեր կմատուցեն և կունենա սուրբ վայր, որտեղ տարին մեկ անգամ ես կհանդիպեմ քահանայապետին՝ ձեր բոլոր սերունդների ընթացքում:
Ես քեզ կհայտնեմ ինչպես ճիշտ կառուցել խորանը, Ղևտացիների տոհմը կլինեն իմ քահանաները, Ահարոնը և նրա որդիները կլինեն քահանայապետեր: Նրանք կսովորեցնեն մարդկանց արդար լինել և զոհեր կմատուցեն, երբ նրանք մեղք գործեն:

Մի քանի **շաբաթ** անցավ, ինչ նա անհետացավ լեռան կրակի մեջ: Հիմա նա երևի մեռած է:
Այո՛, մենք չենք կարող այս անապատում հավերժ նստել:
Մենք կարիք ունենք, որ Աստված մեզ առաջնորդի, ինչպես Մովսեսն էր անում:
Եկե՛ք ոսկե կուռք շինենք մեր Աստծո համար:

Մովսեսը մեռած է: Ահարոնը մեզ համար ոսկե Աստված կշինի, որպեսզի մեզ հետ տանի Եգիպտոս:
Տվե՛ք ձեր ոսկիները:

Ելից 20.4, 25.8-9, 28.1-3, 32.1-4, Եզեկիել 1.10, 10.14, 28.14

Ահարոնն այնքան հիմար էր: Նա գիտեր, որ այդ կուռքը Աստված չէ, բայց վախենում էր ժողովրդից:
Ահա և ձեր Աստված, որ հանեց ձեզ Եգիպտոսից: Վաղը մենք զոհ կմատուցենք և կերկրպագենք Եհովային:
Աստված նրանց արդեն պատվիրել էր, որ կուռքերի չերկրպագեն, բայց նրանք հետևեցին իրենց հասկացողությանը:

Աստված խոսեց Մովսեսի հետ և ասաց. «Հիմա ցա՛ծ իջիր: Ժողովուրդը մեղանչեց իմ դեմ: Նրանք մերկացած պարում են կուռքի առջև: Ես պետք է ոչնչացնեմ նրանց: Նրանք խստացրել են սրտերը և արդարության մեջ չեն քայլում:

Ելից 32.5-10

Մովսեսը բարկացավ, երբ տեսավ, որ մարդիկ մոռացել են Աստծուն և կուռքի են երկրպագում:
Դուք չպահեցիք Աստծո պատվիրանները:

Մովսեսը
կոտրեց քարե
տախտակները,
որոնց վրա գրված
էին պատվիրանները:

Ելից 20.3-4, 32.15-20

Եթե դուք Եհովային եք պաշտում, իմ կողքը կանգնեք, իսկ եթե Եգիպտոսի աստվածներին եք պաշտելու, ուրեմն մնացեք ձեր տեղերում:
Ավելի լավ է ես հետևեմ այն Աստծուն, ով ծովը կիսեց, թեև նրա դեմքը չեմ տեսել:
Մենք կհետևենք Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն:

Մեղքի վարձքը ***մահ է***: Եհովան ասում է, որ նրանք պետք է մեռնեն: Հանե՛ք ձեր սրերը և ***սպանե՛ք*** բոլոր նրանց, ովքեր երկրպագում են կուռքին:

ՍՊԱՍԵԼ
3000 կռապաշտներ և շնացողներ մահացան այդ օրը:
Ոո՜չ
Խղճացեք մեզ:
Ելից 32.26-28

Մովսեսը գնաց սարը, և Աստված կրկին գրեց տասը պատվիրանները քարե տախտակների վրա: Երբ Մովսեսը իջավ սարից, ցույց տվեց ժողովրդին Աստծո պատվիրանները, և նրանք համաձայնվեցին հնազանդվել:

Աստված ասում է, որ **դուք խստասիրտ** և ըմբոստ ժողովուրդ եք: Երբ դուք մեղանչեցիք, նա ասաց, որ կսպանի բոլորիդ, բայց ես աղոթեցի ձեզ համար, և նա կների ձեր մեղքերը: Եհովան, իրականում, ողորմած և ներող Աստված է:

Աստված մեզ հանձնարարել է ***խորան*** պատրաստել: Եթե մենք այն իր պատվիրածի պես չինենք, նա մեզ հետ այնտեղ կհանդիպի: Քանի որ մենք բոլորս մեղավոր ենք, Աստված ճանապարհ է պատրաստել, որով կկարողանանք մոտենալ իրեն:
ղևտացիները ամեն օր արյան զոհեր կմատուցեն: տարին մեկ անգամ արյունը կդրվի ուխտի տապանակի վրա: երբ աստված դա տեսնի, կների մեր մեղքերը, ինչպես նա եգիպտոսում արեց, և մենք չենք մեռնի: աստված այդպես է ներում շնորհում:

Խորանը պատրաստ էր, և քահանաները սկսեցին ամեն օր զոհ մատուցել: Երբ Աստված տեսավ, որ նրանք հավատքով են կենդանուն զոհաբերում, ներեց նրանց մեղքերը:
Բայց ժողովուրդն ուրախ չէր, որ անապատում էր ապրում և ամեն ժամանակ դժգոհում էր:
Եղավ մի օր, որ նրանց դժգոհությունները և անհավատությունը պատճառ դարձան, որ Աստծո դատաստանը գա նրանց վրա:

Աստված ուղարկեց թունավոր օձերին իսրայելացիների ճամբար: Աստված ողորմած է, բայց թույլ չի տա մեղքը շարունակվի հավիտյան:

Ելից 34.28-32, 39.32, Թվոց 21.5-6

Շուտով ճամբարը լցվեց
թունավոր օձերով:

Աստվա՛ծ, օգնիր մեզ:

Օձերը նույնիսկ գիշերը նրանց գտան իրենց վրաններում:

Օգնեցե՞ք: Ինձ խայթեցին:

Ohhhh~!

Նույնիսկ երեխաները հատուցեցին իրենց ծնողների մեղքի համար:

Թվոց 21.6

Ճամբարի ամեն անկյունից լսվում էին տառապանքի և չարչարանքի աղաղակներ: Մեղքի հատուցումը շատ դաժան է:
Ամբողջ ճամբարում այս նույն պատկերն է, և ամեն որպե իրավիճակն ավելի է վատանում: Շատերն արդեն **մահացել** են:
Մենք պետք է գտնենք **Մովսեսին:** Վստահ, սա Աստված է անում: Նա բարկացել է մարդկանց մեղքի պատճառով:
ԹԸ՛ԽԿ

Դու պետք է խոսես Աստծո հետ: Մենք **արժանի** ենք այս պատժին, բայց խնդրիր, որ նա մեզ ողորմի:
Ե՞րբ պետք է մարդիկ հասկանան, որ Աստված **լուրջ է** վերաբերվում մեղքին: Նրանք պետք է հնազանդվեն պատվիրաններին և սուրբ ազգ լինեն:

Աստվա՛ծ, ողորմի՛ր քո ժողովրդին և ներիր նրանց մեղքերը:
Գնա՛, պղնձից օձ պատրաստի՛ր, նման այն օձերին, որ հիմա խայթում են ժողովրդին: Դի՛ր այն ձողի վրա, որ բոլորը տեսնեն: Ասա՛ նրանց, որ ուղղակի նայեն պղնձե օձին և իսկույն կբժշկվեն:

Թվոց 21.7-8

Աստված ելքը ցույց տվեց: Միայն նայիր պղնձե օձին և դու կբժշկվես:

Նա մահանում է:
Ո՛չ: Աստված ճանապարհ է պատրաստել: Բացի՛ր աչքերդ և նայի՛ր: **Նայի՛ր և ապրի՛ր:**

Սա հրաշք է:
Մենք պետք է ուրիշներին պատմենք:
Դա օգնեց ինձ: Պետք է ուրիշներին էլ ասեմ:

Թվոց 21.9

Ինչո՞ւ եք նրան ծաղրում՝ կեղծ հույսեր տալով:
Ուրիշները նայել են և բժշկվել:
Չե՞ս տեսնում, որ **մեռնում եմ,** ինչո՞ւ ես ինձ անհանգստացնում նման հիմարությունով:

Նա մահացավ:
Ցավում եմ, որ նա չհավատաց:
Նա շատ հպարտ էր:

Ժողովուրդը կրկին տեսավ
Աստծո զորությունը:
Օձերը լքեցին ճամբարը,
և կյանքն իր բնականոն
հունին վերադարձավ:
Բայց մարդիկ
դեռ շարունակում
էին իրենց
ճանապարհով գնալ
և չէին պահում Տիրոջ
պատվիրանները:


Իսրայելի որդիները հետևեցին ամպին: Աստված երկնքից կերակրեց նրանց մանանայով և խմելու ջուր մատակարարեց:
Նա կառաջնորդեր նրանց խոստացված երկիր, բայց իսրայելացիներն անհնազանդ էին և չէին պահում պատվիրանները: Ուստի Աստված թույլ տվեց, որ նրանք թափառեն անապատում քառասուն տարի:
Թվոց 21.9, 32.13

Մովսե՛ս, դու մտածում ես, որ **միայն** դու ես Աստծո հետ մտերիմ: Մենք էլ քո նման **սուրբ ենք:** Իրականում, ամբողջ ժողովուրդն է սուրբ: Մեր մեջ այլևս մեղավորներ չկան: Եվ Աստված մեր մեջ է ապրում: Կարիք չկա, որ դու և Ահարոնը մեզ ասեք, թե ինչ անենք և մեր դատավորները լինեք: Մենք ձեզ նման կարող ենք դատել:
Այո՛, ես հոգնել եմ անապատում թափառելուց, և, որ Աստված սպանում է մեզ **ամեն չնչին բանի** համար:
Այո՛, դա Մովսեսի մեղավորությունն է: Նրա չափանիշները շատ **բարձր են:**

Մովսեսը գնաց խորանը, որ հարցնի Աստծուն ինչ անել:

Աստված խոսել է. «Դո՛ւք, Ղևիի որդինե՛ր, ձեզ վրա մեծ *պատասխանատվություն* եք վերցնում: Դուք ցանկանում եք, որ մարդիկ, որոնց Աստված չի ընտրել լինեն քահանաներ»:
Վաղն **Աստված** դատաստան կանի մեր մեջ, և մենք կիմանանք ովքեր են Աստծո քահանաները, ով է սուրբ, իսկ ով՝ ոչ:

Թվոց 16.2-6

Հաջորդ օրը:
Մո՛տ եկեք, դո՛ւք, որ **բարձրաձայնում** էիք ձեր սրբության մասին և ցանկանում էիք քահանաներ լինել և ղեկավարել ժողովրդին:

Աստված այսօր կայցելի մեզ և կընտրի: Մենք կտեսնենք նրա զորությունն ու փառքը:

Առանձնացրե՛ք
ձեզ այս չար մարդկանցից,
որովհետև ես կոչնչացնեմ
նրանց մեկ վայրկյանում:


Հեռացե՛ք նրանց վրաններից: Չմոտենա՛ք նրանց, այլապես դուք էլ կմեռնեք:

Թվոց 16.19-24


Սրանով կարող եք **փորձել:** Եթե այս մարդիկ բնական մահով մահանան, դուք կիմանաք, որ ես կեղծ մարգարե եմ, և Աստված իմ միջոցով չի խոսում:
Բայց, եթե այսօր արտասովոր բան տեղի ունենա, եթե երկիրը բացվի և **կուլ** տա իրենց ամբողջ ունեցվածքը, և նրանք ողջ-ողջ ընկնեն գուբը, ապա դուք կիմանաք, որ նրանք մեղանչել են Աստծո դեմ, և ես նրա մարգարեն եմ:

Օգնեցե՛ք
Վա՛յ
Ո՛ռոռ՛ռ

Թվոց 16.28-33

Բոլոր այն մարդիկ, որ ձգտում էին քահանաներ լինել, ողջ-ողջ ընկան դժոխքի կրակի մեջ, որ պատրաստված էր սատանայի և իր չար հրեշտակների համար:

Վերցրե՛ք նրանց պղնձե խնկամանները և դրանցից զոհասեղանի **ծածկոց** պատրաստեք:
Երբ զոհասեղանը տեսնեք ծածկված, կհիշեք այս օրը, երբ մարդիկ **արհամարհեցին** Աստծո պատվիրանները և ցանկացան իրենք իրենց քահանաներ դարձնել:
Այդ օրը Իսրայելի որդիները երբեք չեն մոռանա: Աստված պարզ ցույց տվեց, որ Մովսեսն իր մարգարեն է և միայն այն մարդիկ կարող են քահանաներ լինեն, ում Աստված կընտրի:

Աստծո փառքը մեզ հետ է, և նա մեզ կերակուր է ուղարկում երկնքից:
Աստծո փառքը միշտ խորանի վրա էր, և մարդիկ հոժարակամ հետևում էին Մովսեսին անապատում քառասուն տարի:
Աստված շարունակեց երկնքից հաց ուղարկել և ջուր հանել ժայռի միջից: Կրակի սյունը նրանց ծածկում էր գիշերը, իսկ ամպը՝ ցերեկը: Նրանք հանդարտվեցին և սովորեցին Աստծո պատվիրանները պահել:

Թվոց 16.37-38

Քահանաները ծառայում էին խորանում և մատուցում ամենօրյա զոհը, ինչպես Մովսեսը պատվիրել էր:

Անապատում քառասուն տարի մնալուց հետ, երբ բոլորը պատրաստվում էին մտնել խոստացված երկիրը, Աստված Մովսեսին սարը կանչեց: Վերջին անգամ Աստծո հետ խոսելուց հետո Մովսեսը խաղաղությամբ մահացավ:

Մոտավորապես մ.թ.ա. 1451- 2 Օրինաց 34.4-5

Համարյա 500 տարի էր անցել ինչ Աստված կանչել էր Աբրահամին դուրս գալ և գնալ խոստացված երկիր:
Աստված կատարեց իր խոստումը, որ ասել էր, թե Իսահակի միջոցով մեծ ազգ է շինելու: Հակոբի տասներկու որդիները, որի անունը փոխվեց Իսրայել, դարձան տասներկու ցեղեր և բազմապատկվեցին:



Նրանք ազատվեցին ստրկությունից, Մովսեսի հետ թափառեցին անապատում, ստացան Աստծո օրենքները և հիմա վերջապես մտնում են **խոստացված երկիր:** Անապատում մի փոքրիկ տղա միշտ Մովսեսի հետ էր և սովորում էր, թե ինչպես առաջնորդել Իսրայել ժողովրդին:


Այդ տղան մեծացավ
և դարձավ հզոր
պատերազմող:
Նա Հեսուն էր:

Այն բանից հետո, երբ Մովսեսն Աստծո մոտ գնաց, Հեսուն ընտրվեց Աստծո կողմից, որ առաջնորդի ժողովրդին դեպի այն երկիրը, որ Աբրահամին էր խոստացված:
Ժողովուրդը հիշեց մարգարեությունը, որ օտար երկրում իրենք ծառաներ կլինեն, բայց 400 տարի հետ կվերադառնան իրենց հայրերի երկիրը: Աստված պահեց իր խոսքը:

Այն օրը, երբ նրանք անցան Հորդանանը, երկնքից թափվող մանանան դադարեց, և մարդիկ կերան այդ երկրի թարմ կերակուրը:
Սիրելի՛ս, սա **իրաշալի** երկիր է, որ Աստված տվեց մեզ:
2 Օրինաց 34.9, Հեսու 5.12
Այո՛, սա լավ երկիր է մեր երեխաներին մեծացնելու համար և սովորեցնելու, որ ապրեն սրբության և խաղաղության մեջ:

Գլուխ 5

Թագավորությունը

Պաղեստինում բնակվողները, ուր իսրայելացիները եկան, չար էին: Նրանց անվանում էին քանանացիներ և խոսում էին ուրիշ լեզվով: Նրանք մարդկային զոհեր էին անում և պաշտում էին ոսկուց, արծաթից, պղնձից և փայտից պատրաստված աստվածների:

Աստված ուղարկեց մարգարեներ և քահանաներ, որ նրանց հորդորեն ապաշխարել, բայց նրանք շարունակեցին իրենց մեղքերի մեջ ապրել: Ճիշտ այնպես, ինչպես Աստված ոչնչացրեց մարդկությունը Նոյի օրերում և Սոդոմն ու Գոմորը, նույպես էլ հիմա կոչնչացնի քանանացիներին:

Մի օր մենք էլ քահանայապետեր կլինենք և կկարողանանք զոհեր մատուցել:

Սա տհաճ է, բայց **պետք** է անել: Բարի գործի՛ր, բարիք կստանաս, չարություն արա՛, չարիք կստանաս:

Ծննդոց 14.18, 20.7, Թվոց 22.4-8, 2 Օրինաց 18.9-11

Կռապաշտ մարդիկ, որ ապրում
էին խոստացված երկրում,
հակառակվեցին իսրայելացիներին
և պատերազմեցին երկրի համար,
բայց Աստված կարողություն տվեց իր
ժողովրդին հաղթելու թշնամիներին:

Ինչպե՞ս եք համարձակվում այս սուրբ տաճարը մտնել:
Դու սպանեցիր քո վերջին զավակին:

Երբ արյունոտ պատերազմն ի վերջո ավարտեց, եբրայեցիները հաղթեցին իրենց թշնամիներին և գրավեցին երկիրը: Հեսուն խոսեց ժողովրդի հետ:
Մեր նախահայր **Աբրահամը** կռապաշտ ազգից էր: Աստված խոսեց և խոստացավ, որ նրանից մեծ ազգ կշինի:

Աստված նաև ասաց, որ
իր ժողովուրդը կգնա Եգիպտոս և
այնտեղ կմնա 400 տարի, որից հետո
Աստված նրանց կհանի և հետ կբերի այս
նույն երկիրը, որտեղ հիմա գտնվում եք:
Եվ, ահա մենք այստեղ ենք 500 տարի
անց, Աստված պահեց Աբրահամին
տված իր խոստումը: Հիմա գնացեք
և բնակվեք այս երկրում: Չհետևե՛ք
մեղավորների օրինակին, որ սրանից
առաջ ապրում էին այստեղ, որովհետև
Աստված կդատի ձեզ, ինչպես
նրանց դատեց:

Հեսու 24.2-14

Նոր երկրում նրանք խաղաղության մեջ էին ապրում: Ամեն մեկն իր այգին ուներ և շատ ուտելիք: Աստված նրանց բոլոր մարդկանցից ավելի օրհնեց:
Ընթրիքը պատրաստ է:
Հիմա այս քարը հանենք և կգանք:

Ինչպես և Աստված խոստացել էր, եբրայեցիները շատացան և լցրեցին երկիրը: Նրանց քաղաքներն ապրում էին բարեկեցության և արդարության մեջ: Նոր ազգը կոչվեց Իսրայել:
Խաղաղությու՞ն քեզ, քո՛այրս, ձուկը թա՞րմ է:
Թարմ է, ծովից բերված ինչպես միշտ:

Եհովան պարտության մատնեց ձեր թշնամիներին, բայց այս երկրում դեռ **կռապաշտություն** կա: Այսօր ընտրեք, թե ում եք պաշտելու. կամ այս երկրում բնակվող ժողովրդի կեղծ աստվածներին, կամ էլ Աբրահամի Աստծուն: Ես և իմ տունը Տիրոջն ենք պաշտելու:
Աստված չանի, որ մենք թողնենք Տիրոջը և օտար աստվածների պաշտենք, որովհետև զորավոր կերպով ազատեց մեզ Եգիպտոսի ստրկությունից և հոգ տարավ մեր մասին անապատում:
Մենք խոստանում ենք ծառայել Տիրոջը:

Եվ Աստված մեր առջևից հեռացրեց բոլորին, նույնիսկ ամորհացիներին, որ ապրում էին այս երկրում: Դրա համար մենք կծառայենք **Տիրոջը**, որովհետև նա մեր Աստվածն է:
Աստված սուրբ Աստված է: *Նա* նախանձոտ Աստված է, եթե նրան թողնեք և կուռքերի պաշտեք, նա կփչացնի և կոչնչացնի ձեզ:

Դուք վկա եք ձեր դեմ, որ ընտրեցիք Տիրոջը ծառայել:
Վկա ենք:
Ես գրքում կգրեմ, որ դուք այսօր **ուխտ** կնքեցիք Աստծո հետ:
Ինչպես մենք Մովսեսին հնազանդվեցինք ամեն ինչում, այնպես էլ քեզ կհնազանդվենք, միայն Տեր Աստված քեզ հետ լինի, ինչպես Մովսեսի հետ էր: Ով ըմբոստանա Աստծո պատվիրանների դեմ, կմեռնի:

Ժողովրդին ղեկավարում էին դատավորները, ովքեր խոսում էին Աստծո հետ և կարդում Մովսեսի խոսքերը: Նրանք ժողովրդին բացատրում էին Աստծո օրենքը և սովորեցնում էին հնազանդվել Տիրոջը:
Ելից 21.28-29, Հեսու 24.15-24
Ի՞նչ է **օրենքն** ասում եզի համար, որ ցնասել է ինչ-որ մեկին:
Մովսեսն ասել է, որ սեփականատերը պատասխանատու է հասցրած ցնասի համար, իսկ եզին պետք է **սպանել:**

Որոշ ժամանակ ժողովուրդը հիշեց այն հրաշքները, որ Եհովան արել էր Մովսեսի և Հեսուի միջոցով:
Հայրի՛կ, ինչո՞ւ են քահանաները սպանելու մեր **գառնուկին:** Արդյո՞ք կործանիչը նորից է անցնելու այստեղով, ինչպես այն ժամանակ, երբ մեր հայրերն ապրում էին Եգիպտոսում:
Ո՛չ, որդի՛ս, կործանիչը չի գալիս, բայց այս գառնուկի արյունը մաքրում է մեր մեղքերը և մեզ ընդունելի դարձնում Տիրոջ առջև:

Ժովովուրդը խոստացավ Հեսուին, որ կերկրպագեն Աստծուն և կպահեն պատվիրանները, բայց ոչ բոլորը շարունակեցին երկրպագել Եհովային:
Երբ հրաշքները դադարեցին, հաջորդ սերունդը մոռացավ կենդանի Աստծուն և երկրպագեց անկենդան արձանների: Նրանք նաև երկրպագեցին իրենց նախնիներին:

Ինչպես Հեսուն զգուշացրել էր, Աստված ուղարկեց հեթանոսներին, որ կործանեն Իսրայելը:
Ո՛չ, փրկի՛ր ինձ Բաշան:
Վաաա՜
Դատավորաց 3.7-8, 12-13, 4.1-2, 10.6-7

Երբ Աստծո դատաստանն եկավ մարդկանց վրա, նրանք հիշեցին օրենքը և խոստովանեցին իրենց մեղքերը:
Եհո՛վա, **ներիր** մեր մեղքերը և վերականգնիր մեր խաղաղությունը:
Երբ նրանք խոստովանեցին իրենց մեղքերը, Աստված ներեց և վերականգնեց իրենց երկիրը:

Մարդիկ հոգնեցին դատավորներից, որոնք իրենց աստված էին կարծում և մարդկանց Աստծուց հեռացնում, ուստի նրանք որոշեցին թագավոր ունենալ, ով կթագավորեր նրանց վրա:
Ձեր հողերը **կբռնագրավվեն** հանուն թագավորության բարօրության: Դու կարող ես քո **աղջկան այստեղ թողնել,** մենք հոգ կտանենք նրա մասին:

Սամուել անունով մարգարեն և դատավորը, զգուշացրեց նրանց, որ թագավոր ունենալով նրանք մերժում են Աստծուն՝ որպես իրենց առաջնորդի, բայց նրանք չցանկացան հավատքով ապրել: Սավուղ թագավորը բռնության ենթարկեց նրանց, նրանց փողերն ու ունեցվածքը վերցրեց, նրանց տղաներին և աղջիկներին ծառաներ սարքեց:

Երբ Սավուղ թագավորը ծերացավ, նա չար ոգիներով լցվեց և անկառավարելի բնավորություն ձեռք բերեց:
Մի օր նա փորձեց նիզակով հարվածել Դավիթ անունով մի երիտասարդ տղայի, ով տավիղ էր նվագում արքայի համար:
1 Թագավորաց 8
Սավուղն ավելի ու ավելի էր մեղանչում: Նա նախանձում էր բոլորին և վախենում բոլորից: Չար ոգիները խոստացել էին նրան զորություն և հարստություն տալ, բայց միայն տխրություն և տանջանք էին բերել:

Սավուղը թողեց կենդանի Աստծուն և գուշակների մոտ գնաց:
Ես **խավար** եմ տեսնում: Դու **կմեռնես** մարտի դաշտում և ուրիշը կգա քո փոխարեն:
Սավուղը մեռավ ճակատամարտում և նրա հոգին հայտնվեց դժոխքում:

Աստված Սավուղի փոխարեն ընտրեց մի երիտասարդի: Նա սիրում էր Աստծուն և պահում նրա պատվիրանները, նա այն նույն տղան էր, ում Սավուղը փորձեց սպանել:
Տերն իմ հովիվն է, ես ոչնչի կարիք չեմ ունենա: Ինձ հանգստացնում է ինձ խոտավետ արոտներում: Վերականգնում է հոգիս:
Դավիթն արդար էր և սիրված Աստծո կողմից: Կարո՞ղ է նա ազատել մարդկանց մեղքից և մահից: Կարո՞ղ է Դավիթը խոստացված որդին լինել:
1 Թագավորաց 18.10-11, 31.4, 16.1-13, Սաղմոս 23.1-3

Երանելի է այն մարդը,
որ ամբարիշտների
խորհրդի մեջ չի
գնում, և մեղավորների
ճանապարհի մեջ չի
կանգնում, և ծաղր
անողների աթոռի վրա չի
նստում: Այլ նրա կամքը
Տիրոջ օրենքի մեջ է,
և ցերեկ ու գիշեր նրա
օրենքի վրա է մտածում:

Եվ նա ջրերի գնացքում տնկված ծառերի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը չի թափվում, և ամեն ինչ որ անում է հաջողվում է նրան:
Այսպես չեն ամբարիշտները, այլ ինչպես դարմանի մղեղ, որ քամին ցրիվ է տալիս: Սրա համար ամբարիշտները չեն կանգնի դատաստանի մեջ, և ոչ մեղավորները՝ արդարների ժողովի մեջ:Որովհետև Տերը ճանաչում է արդարների ճանապարհը, բայց ամբարիշտների ճանապարհը կկորչի:

Երբ Սավուղը մահացավ, Դավիթը դարձավ թագավոր և առաջնորդեց ժողովրդին Աստծուն երկրպագելու և պատվիրանները պահելու մեջ:
Հե՛տ վերադարձրեք այս կնոջ հողատարածքը և վստահ եղեք, որ ապագայում նրանից հարկ չի գանձվում::
Դավթի թագավորության ժամանակ, ազգը բարգավաճեց և արդարության մեջ ապրեց:
2 Թագավորաց 2.4, Սաղմոս 1, Գործք Առաքելոց 13.22-23

Աստված խոսեց Դավթի հետ և շատ բաներ հայտնեց ապագայի մասին: Դավիթն այդ բոլոր մարգարեությունները գրեց Սաղմոսների գրքում: Դրանցից շատերն արդեն կատարվել են:

Նա քո ժողովրդին դատի արդարությունով և քո խեղճերին իրավունքով: Նա իրավունք անի ժողովրդի աղքատներին. Խեղճերի որդիներին փրկի և զրկողներին ջարդի:
նրա օրերում ծաղկի արդարը. և շատ խաղաղություն մինչև որ լուսին էլ չլինի:
եվ նա տիրապետի ծովից մինչև ծով, և գետից մինչև երկրի ծայրերը:

Դավիթն արդար էր, բայց նա մեղք գործեց, ուստի նա չէր կարող խոստացված փրկիչը լինել: Սա նա գրել է եկող փրկչի մասին:

Եվ ամեն թագավորները երկրպագություն տան նրան. Ամեն ազգերը ծառայեն նրան: Նա կխղճա տկարին և խեղճին, և խեղճերի անձերը կապրեցնի:
եվ աղոթք կանեն նրա համար ամեն ժամանակ: ամեն օր կօրհնեն նրան: նրա անունը կլինի հավիտյան. դեռ քանի որ արեգակը կկենա, նրա անունը կմնա:
եվ կօրհնվեն նրանով. ամեն հեթանոսները երանի կտան նրան:
(սաղմոս 72)

Աստված ասաց Դավթին. «Քո մահից հետո ես կհաստատեմ թագավորությունդ քո որդու միջոցով: Նա տաճար կկառուցի, որտեղ ինձ կերկրպագեն, և ես հավիտյան կհաստատեմ նրա թագավորությունը»:

Դավթի մահից հետո նրա որդի Սողոմոնը դարձավ թագավոր (մ.թ.ա. 971) : Սողոմոնը կառուցեց տաճարը այնպես, ինչպես Աստված Դավթին պատվիրել էր (մ.թ.ա. 966), որը պետք է փոխարիներ անապատում օգտագործվող հին խորանին:

Իսրայել ժողովուրդը բարգավաճեց՝ ինչպես երբեք: Իսկապես Աստված կատարեց իր խոստումը. նրանց բերեց այդ երկիր և օրհնեց այնտեղ:



2 Թագավորաց 7.12-16, Սաղմոս 72.1-20

Բայց դեռ փրկչի մասին խոստումը կար, որ պետք է գար և քանդեր սատանայի գործերը, որը Աստված դեռ չէր կատարել: Բայց մարդիկ դեռ մեղք էին գործում, և կենդանու արյունը թափվում էր մեղքերի թողության համար: Բայց նրանք շնորհակալ էին Աստծուն, որ դրանով կարողանում էին ծածկել մեղքերը, մինչև խոստացված փրկիչը կգար և կմաքրեր մեղքերը հավիտյան:

Մարդիկ գնում էին տաճար սուրբ գրություններից ուսմունքներ լսելու համար: Նրանց հատկապես դուր էր գալիս գալիք փրկչի մասին մարգարեությունները:



Դավիթը շատ բաներ գրեց գալիք փրկչի մասին:

տէրն ասեց իմ տիրոջը, իմ աջ կողմը նստիր մինչեւ քո թշնամիները քո ոտների կոխելիք դնեմ:
(սաղմոս 110.1)

ով աստուած, քո աթոռը յաւիտեանս յաւիտենից կայ. քո թագաւորութեան գաւազանը ուղիղ գաւազան է: դու սիրում ես արդարութիւնը եւ ատում ես անօրէնութիւնը. սորա համար, ով աստուած, օծեց քեզ քո աստուածը ուրախութեան իւղովը աւելի քան քո ընկերներին:
(սաղմոս 45.6-7)

Ավելի շատ մարգարեություններ գալիք փրկչի մասին

Եվ ես առաջնեկ կդնեմ նրան՝ երկրի թագավորների վրա բարձրացած:
(սաղմոս 89.27)

քո կամքը կատարյալ կամեցա, ո՛վ աստվածս. եվ քո օրենքն իմ սրտի մեջ է:
(սաղմոս 40.8)

առակներով կբանամ իմ բերանը և դուրս կբխեմ աշխարհի սկզբից ծածկվածները:
(սաղմոս 78.2, մատթեոս 13.34-35)

Դավիթը **տարօրինակ** բաներ է գրել գալիք մեսիայի մասին:

ես ջրի պես թափվեցի, և իմ ամեն ոսկորները հոդերից դուրս եկան. սիրտս որովայնումս հալած մոմի պես եղավ:զորությունս չորացավ հողե ամանի պես, և լեզուս քիմքիս է կպած, և դու մահվան հողի մեջ դրիր ինձ: որովհետև շները պատեցին ինձ, և չարերի ժողովքը շրջապատեցին ինձ, **իմ ձեռքերն ու ոտքերը ծակեցին:** ես համարում եմ իմ ամեն ոսկորները, բայց նորանք նայում և դիտում են ինձ:շորերս բաժանում են իրանց մեջ, և պատմուճանիս վրա վիճակ են գցում:
(սաղմոս 22.14-18)

Սողոմոնը երկար և բարգավաճ թագավորություն ունեցավ, բայց իր մահից հետո երկրի հյուսիսային հատվածը առանձնացավ և թագավոր դարձավ չարագործ Հերոբովամը (մ.թ.ա. 975):
Սա այն Աստվածն է, որ ձեզ դուրս բերեց Եգիպտոսից, իսկ սրանք նրա քահանաներն են:
Իսկ ո՞ւր է Մովսեսի Օրենքը և տաճարը, որ Աստված կառուցեց Երուսաղեմում:
3 Թագավորաց 12.20, 28-29, Սաղմոս 2.7,12, 22.6, 14-18, 40.8, 45.6-7, 78.2, 89.27, 110.1, 4, 132.11, Մատթեոս 13.34-35

Հյուսիսային թագավորությունը հեռու էր գտնվում Երուսաղեմի տաճարից, ուստի նրանք իրենց համար կառուցեցին երկրպագության վայրեր, որոնք լցված էին կուռքերով՝ ոսկե հորթի պատկերներով :
Աստծուն հասնելու շատ ճանապարհներ կան: Որոշ մարդիկ կանչում են Եհովա, ուրիշներն՝ Ալլահ, մյուսները՝ Չեմոշ, իսկ մենք Նրան կանչում ենք Բահաղ:
Իսկ այն սուրբգրային խոսքե՞րը, որ Աստված տվեց իր մարգարեներին: Այն պատվիրում է մեզ ուրիշ Աստված չունենալ: Այն ասում է, որ միայն մեկ Աստված կա և մեկ ճանապարհ՝ դեպի Նա:

Կարծում
ես Աստված այդքան
անհմանափա՞կ է
մտածում:
Այլևս նման բան չլսեմ:
Բահաղին երկրպագելը այս
երկրի միակ պետական կրոնն
է: Անհավատները մահվան
կդատապարտվեն:

Քահանաները անգիտակցաբար ընտրեցին երկրպագել այն ցուլի պատկերով կուռքին, որը հենց նույն մեղավոր քերովբեն էր՝ Արուսյակը: Նրանք երկրպագեցին սատանային, և նա շատ գոհ էր, քանի որ կարողացավ մարդկանց հեռացնել այն խոստումից, որ Աստված տվել էր գալիք փրկչի մասին:
Ո՛վ Բահաղ, ընդունիր այս զոհը մեր խոնարհ ձեռքերից:
Օրհնյա՛լ ես դու, երկնքի թագուհի, Աստծո մա՛յր: Լսի՛ր մեր աղոթքները և ների՛ր մեր մեղքերը:

Ի՞նչ եք անում այս սուրբ վայրում:
Եհովայի անունով, ումից դուք հեռացաք, լսե՛ք Տիրոջ խոսքը: Դավթի սերմից մի որդի կծնվի և նրա սերնդից կգա ազատագրողը: Նրա անունը Հովսիա կլինի և այս զոհասեղանի վրա նա կայրի Բահաղի քահանաներին:
3 Թագավորաց 12.28, 13.1-2, Երեմիա 44.17-25, Եզեկիել 1.10, 10.14, 28.14

Ինչպե՞ս կարող ես նման բան ասել: Ոչ ոք չի կարող **ապագան** իմանալ, բացի **աստվածներից:**
Աստծո խոսքն եմ ձեզ ասում, որ Հովսիան այս նույն քահանաների ոսկորները կայրի հենց այս զոհասեղանին:

Աստված ձեզ նշան կտա, որ
ես նրա խոսքն եմ խոսում: Այդ նույն
օրը այս հրաշալի զոհասեղանը, որ
դուք կառուցել եք համր կուռքերին
երկրպագելու համար կճեղքվի և
վրայի մոխիրը կթափվի:

Քա՜հ, քա՜հ, քա՜հ: Լսե՛ք այս բարեպաշտ հիմարի խոսքերը: Նա կարծում է, որ միայն ինքն է ճիշտ, իսկ մնացածները՝ սխալ:
Բռնե՛ք նրան: Սպանե՛ք նրան: Ինչպե՞ս է համարձակվում ուրիշների **կրոնի** դեմ խոսել:

Իմ ձեռքը չորացավ: Եհովան պատժեց ինձ: Աղոթեք, որ նա բժշկի ինձ:

Տե՛ր Աստված, ճանաչեցրու քեզ այսօր: **Բժշկի՛ր** արքայի ձեռքը:

3 Թագավորաց 13.2-6

ԶՐՀԱՖՖՖ
ԲՈՈՈՈՀԷՄ
ՎԱՍԿՅ
ՈՈՈՀՉ
Այսքան շո՞ւտ, Եհովա՛:


Իսկապես դու **Աստծո** մարդ ես: **Բահաղի** ոչ մի մարգարե երբեք նման բան չի արել: Ե՛կ միասին գնանք ուտենք և խմենք, հետո ես քեզ պատիվ և հարստություն կտամ այն ծառայության համար, որ Աստծուն մատուցեցիր այսօր:
Ո՛չ, ես չեմ կարող քեզ հետ գալ: Աստված ինձ պատվիրել է Իսրայելում եղած ժամանակ չուտել և չխմել և հետ չդառնալ այն նույն ճանապարհով, որով եկա:

3 Թագավորաց
13.5, 7-9

Ինչպես և Աստված պատվիրել էր, մարգարեն վերադարձավ ուրիշ ճանապարհով: Նա չէր կերել և խմել երկու շաբաթ և հիմա շատ սոված ու ծարավ էր: Երկու երիտասարդներ, որ այդ օրը երկրպագում էին ոսկե հորթին, հետևեցին նրան, որ տեսնեն, որ ճանապարհով է գնում:

Հայրի՛կ, ես չէի հավատա, եթե ինքս տեսած չլինեի: **Դա նման էր նրան, ինչ Իսրայելի հին մարգարեներն էին անում:**
Արագացրե՛ք: Թամբե՛ք էշը, ես պետք է գտնեմ նրան:
Հայրի՛կ, կարծում ե՞ս **ճշմարիտ** են նրա ասածները: Արդյո՞ք Եհովան է **միակ** կենդանի Աստվածը: Մի՞թե մեր կուռքերը միայն ոսկի և փայտ են և ուրիշ ոչինչ:

Նա Եհովայի մարգարեին գտավ ծառի տակ նստած: Նա ցանկանում էր մոտ լինել նման զորության տեր մարդու հետ: Նա մի ժամանակ Եհովայի մարգարեն է եղել, բայց երբ թագավորությունները բաժանվեցին, նա իր ժողովրդի նման հետևեց կռապաշտությանը: Նա պատճառաբանել էր. «Մի՞թե բոլոր կրոնները նույնը չեն»:

Դու պետք է, որ Աստծո մարդը լինես Հուդայից: Դու հոգնած տեսք ունես: Ե՛կ միասին իմ տուն գնանք և քեզ կհյուրասիրեմ **ուտելիքով և խմելիքով:**
Ես չեմ կարող, Աստված ինձ պատվ**իրե**լ է **այստե**ղ չուտել և չխմել:
Բայց գիտես, ես էլ քեզ նման մարգարե եմ, և այս առավոտ Եհովայի հրեշտակն ինձ ասաց, որ քեզ իմ տուն տանեմ և հյուրասիրեմ:
Փա՜ռք Աստծուն, ես այնքան ծարավ եմ:

Համեղ կերակուր էր, բայց ես պետք է Հուդա հետ վերադառնամ:
Եհովան խոսեց. «Քանի որ **դու չհնազանդվեցիր** Եհովա Աստծո պատվիրաններին, բայց կերար և խմեցիր այստեղ, քո **մեռած** մարմինը չի հասնի Հուդա, որ թաղվի քո ընտանեկան գերեզմանատանը»:
Հայրի՛կ, դու **մարգարեանում ես**: Մի՞թե Աստված քո հետ էլ է խոսում:
Այո՛, որդի՛ս, այսքան տարի անց առաջին անգամ:

3 Թագավորաց
13.10-22

Մարգարեն հեռացավ ծանրացած սրտով, քանի որ գիտեր, որ Աստված միշտ հավատարիմ է իր խոսքին: Նա գիտեր, որ կմեռնի: Նա ուղղակի այդքան շուտ չէր սպասում և այն էլ այդ ձևով:

Սա Հուդայից եկած մարգարեն է:
Շատ ավելի տարօրինակ է, որ առյուծն ու էշը միասին նստել են այստեղ, ասես **իսկում** են մարմինը:
Ես **երբեք նման** բան չէի տեսել: Առյուծը սպանեց նրան, բայց ուղղակի նստել է այնտեղ և չի ուտ**ում** նրան:

Կեղծ մարգարեն Աստծո ծառայի մարմինը թաղեց իր գերեզմանատանը՝ Բահաղի քահանաների կողքին: Այն շատ մոտ էր այն վայրին, ուր Աստված կործանեց զոհասեղանը:
Աստված նրան սպանեց իր **անհնազանդության** համար: Անշուշտ, այն ամենը, ինչ նա մարգարեացավ, կկատարվի:
Աստծո ծառային թաղեցին, և շուտով բոլորը մոռացան նրա մասին, բացի մի քանիսից: Զոհասեղանը վերականգնվեց և շուրջ երեք հարյուր տարի անց էլ օգտագործվում էր Բահաղին երկրպագելու համար, բայց ոչ ոք չայրեց նրանց ոսկորները ինչպես Աստծո ծառան կանխատեսել էր:
3 Թագավորաց 13.23-31, 4 Թագավորաց 21.24, 22.8-11, 23.1-3

Երեք հարյուր տարի անց Հուդայում թագավոր դարձավ Հովսիա անունով մի մարդ (մ.թ.ա. 640): Նա գնաց տաճար և գտավ Աստվածաշնչի կրկնօրինակը: Նա անհանգստացավ, երբ հասկացավ, որ մարդիկ մոռացել են կենդանի Աստծուն և հետևում են կուռքերի, ուստի նա հրամայեց բոլոր ավագներին, մարգարեներին, քահանաներին և բոլոր բնակիչներին հավաքվել և լսել, թե ինչ է գրված գրքում:

Մարդիկ ամաչեցին իրենց մեղքերից և համաձայնվեցին հնազանդվել գրքում գրված ամեն մի խոսքին:

Սուրբ մա՛յր, **փրկի՛ր մեզ:**
Ժողովուրդը հնազանդվեց Աստծո օրենքին և կործանեց երկրի բոլոր կուռքերին: Նրանք սպանեցին բոլոր քահանաներին, որ խունկ էին վառում արևի, լուսնի, մոլորակների և երկնքի թագուհու համար:

Մովսեսի կողմից տրված Աստծո օրենքը արգելում էր միասեռականությունը, ուստի բոլոր սոդոմացիները դուրս շպրտվեցին երկրից:
Անհանդուրժող հիմարներ:

4 Թագավորաց
23.5. 7. 10. 24

Հովսիան բարձրացավ այն նույն բարձր տեղը, ուր մարգարեն հանդիպել էր Հյուսիսային թագավորության առաջին թագավորի հետ երեք հարյուր տարի առաջ:
Նրանք ջարդեցին զոհասեղանը, կործանեցին բոլոր կուռքերին և կտրեցին ծառերը՝ փոշիացնելով ամեն բան:
Միայն մեկ Աստված կա և նրան պատկերների միջոցով չեն պաշտում: Այս կեղծ քահանաները մարդկանց հեռացրել են **Եհովայից:**

Դուք պետք է մեռնեք:
Կրկին անգամ զոհասեղանը ճեղքվեց և մոխիրը թափվեց:

4 Թագավորաց 23.15-16

Վառե՛ք բոլոր ոսկորները:
Եվ, այսպիսով, 300 տարվա մարգարությունը կատարվեց, ինչպես Աստծո ծառան խոսել էր:
Ուրեմն թողեք միայն նրա ոսկորները, մնացածը վառեք: Այս կռապաշտությունը պետք է վերջանա, եթե ուզում ենք, որ Աստված մեզ օրհնի:
Բայց, ձե՛ռդ մեծափառություն, **սա Աստծո ծառայի գերեզմանն է,** ով երեք հարյուր տարի առաջ եկավ Հուդայից և կանխատեսեց այս օրը: Նա ասաց, որ Հովսիա անունով մեկը, որը որ դուք եք, կգա և կանի այն բաները, որ հիմա անում եք:

Օրհնյա՛լ ես դու, մեր Տեր Աստված, տիեզերքի թագավոր, ով հաց է տալիս երկրից:
Այժմ կռապաշտությունը վերացել էր, և Հովսիա թագավորը հրամայեց բոլոր մարդկանց զատիկը տոնել ի հիշատակ Եհովայի, ով նրանց հայրերին դուրս բերեց Եգիպտոսից և տվեց այս երկիրը:

Հայրը պատմեց նրանց վաղեմի պատմությունը, թե ինչպես Աստված ազատեց նրանց Եգիպտոսի ստրկությունից և տվեց օրենքն ու խորանը: Նա պատմեց, թե ինչպես դռան վրա քսված արյունը փրկեց բոլոր նորածին տղաներին մահվան հրեշտակից: Դա երբևէ եղած ամենամեծ զատիկն էր:

Գլուխ 6

Եղիա

Մի թուլամորթ մարդ կար՝ Աքաաբ անունով, ով դարձավ Իսրայելի թագավորության հյուսիսային մասի թագավորը մ.թ.ա. 918: Նա ապրում էր Սամարիայում՝ սիդոնացիներից ոչ շատ հեռու: Սիդոնացիները Բահաղին էին երկրպագում: Աքաաբն ամուսնացավ Հեզաբելի՝ Բահաղի քահանաներից մեկի դստեր հետ:

Հեզաբելը հայտնի էր իր կրոնական նախանձախնդրությամբ: Նա արհամարհեց Իսրայելի Աստծուն և նպաստեց Բահաղի երկրպագությանը երկրի ամբողջ տարածքում:

Գտե՛ք Եհովայի բոլոր մարգարեներին և **սպանեք:** **Բահաղը** կլինի մեր Աստվածը:
Թագավորը Աբադիա անունով մի ծառա ուներ, ով Եհովային էր երկրպագում:
Ես պետք է Եհովայի մարգարեներին գտնեմ և զգուշացնեմ:

3 Թագավորաց 16.28, 31, 18.4

Բայց կենդանի Աստծո մեկ մարգարե կար, ով չթաքնվեց. Եղիան էր:

Ո՛վ Աքաաբ թագավոր, քանի որ դու թողեցիր քո հայրերի Աստծուն և հետևեցիր կնոջդ չար ճանապարհներին, Եհովան ասում է, որ Իսրայելի երկրում այլևս անձրև կամ ցող չի լինի մինչև ես չհրամայեմ:
Քա՜հ, քա՜հ, դու քեզ մարգարեի տեղ ե՞ս դրել: Ես հազարավոր մարգարեներ ունեմ, և նրանք ոչինչ չեն ասել երաշտի մասին: Մենք առատ անձրևներ ենք ունեցել վերջին տարիներին: Դո՛ւ, բարեպաշտ սրիկա, հեռացի՛ր իմ ճանապարհից:

Երբ սովը սաստկացավ, մարդիկ սկսեցին սովամահ լինել: Կեղծ մարգարեները Բահաղին դիմեցին, բայց Բահաղը չպատասխանեց: Երաշտը շարունակվում էր առանց մի կաթիլ անձրևի կամ ցողի: Աստված Եղիային ուղարկեց քաղաք՝ մի որբևայրի կնոջ տուն, և նրան ասաց, որ այդ կինը մի սենյակ կտա նրան և կկերակրի, մինչև երաշտը կավարտվի:


Մի՛ վախեցիր, Աստված հոգ կտանի քո համար:
Հացը թխի՛ր և առաջինը ինձ բեր: Դրանից հետո դու և քո որդին կարող եք ուտել: Սրա համար, ասում է Եհովան՝ Իսրայելի Աստվածը. « Քո ալյուրի տակառն ու ձեթի ամանը չեն դատարկվի, մինչև այն օրը, որ Աստված անձրև կուղարկի Իսրայելի վրա»:

3 Թագավորաց 17.1, 10-16

Մենք չենք հասցնում ամբողջը դատարկել: Այն ուղղակի լցվում է:
Սա հրաշք է: Աստված բարի է:
Հաջորդ երկու տարիներին նրանք երեքով հաց պատրաստեցին և կերան այդ մեկ ման ալյուրով:

Մի օր Եղիան իր սենյակում որբևայրու որդուն մեռած գտավ:
Նա տաքություն ուներ և **մահացավ:**

Ի՞նչ եմ արել, որ քեզ **նեղացրել** է: Դու եկել ես այստեղ, որ ինձ հիշեցնես իմ **մեղքի** մասին և, որ Աստված **սպանի՞** որդուս:
Իսրայելում դեռ Աստված կա:

Ո՛վ Եհովա, թող այս տղայի հոգին վերադառնա նրա մարմնի մեջ:

Աստված լսեց Եղիայի աղոթքը և ուղարկեց տղայի հոգին հետ մարմնի մեջ:

3 Թագավորաց
17.17-24

Սովը շարունակվեց երեք տարի: Մարդիկ սովամահ էին լինում, բայց շարունակում էին երկրպագել կեղծ աստված Բահաղին:
Ինչո՞ւ Բահաղը չի լսում մեզ և անձրև ուղարկում:
Միգուցե **Բահաղը համր կուռք** է և չունի **ականջներ:**

Հեզաբելն ու Աքաաբը մեղադրեցին Եղիային սովի համար: Նրանք զինվորներ ուղարկեցին ամբողջ քաղաքով մեկ, նույնիսկ հարևան երկրներ, որ գտնեն Եղիային: Նրանք հրամայեցին տեղում սպանել նրան:


Աքաա՛բ, դու ի՞նձ ես որոնում:
Դո՞ւ ես Իսրայելին անհանգստացնում **սովով:**
Դու ես, որ անհանգստացնում ես Իսրայելին քո կեղծ կուռքերով: Ե՛կ մրցենք Եհովայի և Բահաղի միջև: Բե՛ր քո 850 մարգարեներին Կարմեղոս սարի վրա, ես այնտեղ կսպասեմ:
Ասում ես մրցո՞ւյթ: **Հետաքրքիր է:** Այնտեղ կհանդիպենք:

3 Թագավորաց
18.1, 17-21


Դու կաղոթես քո Բահաղին, իսկ ես կաղոթեմ Եհովային: Այն Աստված, ով զոհի վրա կրակ կուղարկի, կլինի ճշմարիտ Աստված, և մենք բոլորս նրան կերկրպագենք: Քանի որ դուք ավելի շատ եք, կարող եք առաջինը դուք սկսել:
Դու Բահաղի համար զոհասեղան կառուցիր, ես էլ Եհովայի համար կկառուցեմ: Մենք զոհասեղանին փայտ կդնենք, իսկ դրա վրա զոհը կդնենք, **բայց կրակ չենք վառի:**

Ո՛վ Բահաղ,
լսի՛ր այսօր մեզ:
Մենք այս զոհը
ընծայում ենք քո մեծ
անվանը:

Ո՛վ Բահաղ, մեծ և **ամենակարող:**
Ո՛վ երկնքի **թագուհի**, այսօր ե՛կ և **օգնի՛ր** Բահաղին:

3 Թագավորաց 18.22-27

Ճիշտ այդպես, նա քնած է, և դուք պետք է բարձր բղավեք, որ արթնացնեք նրան:
Տղանե՛ր, եկե՛ք չհուսահատվենք: Հնարավոր է, եթե կտրենք ինքներս մեզ, Բահաղը գոհ կմնա:

Բահաղի մարգարեները հուսահատվեցին և սկսեցին ցած նետվել գետնին, մարմինը կտրատել և բարձր բղավել, որ Բահաղը լսի իրենց:
ԱԱԱԱ՜Յ
ԱԱԱԱ՜Խ
Ես տալիս եմ քեզ իմ արյունը, ո՛վ Բահաղ: Կրակ ուղարկի՛ր: **Արդարացրո՛ւ քեզ**:
ԱԱԱԱԱ՜Յ

3 Թագավորաց
18.28-30


Ինչո՞ւ է նա այսքան խորը փոս փորում:
Նա պարզապես ժամանակ է շահում, հույս ունի, որ շուտով կմթնի:
Ե՞րբ ես պատրաստվում **աղոթել:** Սա **փորելու** մրցույթ չի:
Գնացեք և չորս սափոր ջուր բերեք և լցրեք զոհի և փայտերի վրա:
Ձո՞ւր: Այն չի այրվի, եթե թրջես:

Այն բավականաչափ թաց չէ: **Լցրե՛ք ևս չորս սափոր** ջուր:
Այս մարգարեն **խելագար է:** Նա չի ապրի մինչև արևի մայր մտնելը:
Նա խելքը թռցրե՞լ է: Ինչո՞ւ է թագավորը համբերում սրան:
3 Թագավորաց 18.32-34

Քահ, քահ, մի՞թե որևէ **դժվար** բան կա կենդանի Աստծո համար: Լցրեք ևս չորս սափոր ջուր և դուք կտեսնեք, որ Իսրայելն Աստված ունի, և նրա անունը **Բահաղ** չէ:
Աքաաբը նրա գլուխը կկտրի սրա համար:

Հե՛տ կանգնեք:
Հեռու
Հե՛տ գնացեք:

Եհովա՛, Աբրահամի, Իսահակի և Իսրայելի Աստված, թո՛ղ այսօր բոլորը իմանան, որ դու ես ***միակ ճշմարիտ Աստվածը,*** և ես քո ծառան եմ, և հետ դարձնես նրանց սրտերը դեպի քեզ:



3 Թագավորաց 18.35-38

Աբրահամի Աստված
ՇԱՏ ՏԱՔ Է
Երկնքից կրակ է թափվում:
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամի և Իսահակի Աստված պատասխանեց կրակով:
Այն նույնիսկ այրեց **քարերն ու կեղտը:**
Ի՞նչ Աստված է սա, որ անգամ պատկեր չունի, բայց նման բաներ է անում:

2 Օրինաց 17. 2-5, 3 Թագավորաց 18.38-40

Սպանե՛ք նրանց: Բոլոր 850-ին
Բայց մենք չգիտեինք:
Սրո՛վ սպանել, հիմա՛:
Բահաղի բոլոր մարգարեները սպանվեցին:

Ո՛վ թագավոր, դու պետք է ուտես, խմես և շտապես տուն: Ես լսում եմ առատ անձրևի ձայն:

Երեք ու կես տարի առաջ Եղիան Աքաաբին ասաց, որ Երուսաղեմում էլ անձրև չի լինի, մինչև ինքը չհրամայի: Երբ Բահաղի մարգարեները մեռան, իսկ ժողովուրդը կրկին սկսեց երկրպագել ճշմարիտ Աստծուն, Եղիան հրամայեց, որ անձրև գա:
Ուժեղ անձրևը կհեղեղեր գետերը և նրանք չէին կարողանա վերադառնալ տուն, ուստի նրանք պետք է շտապեին, այլապես վտանգ կար հայտնվելու ջրհեղեղի մեջ:
Եղիան, Աստծուց զորություն ստացած, վազեց քսան մղոն ճանապարհ՝ առաջ անցնելով ձիերից և հասավ թագավորի պալատը:

3 Թագավորաց 18.40-41, 44-46, 19.1

Ես նրանց բոլորին սպանեցի: Բոլորը *ստախոսներ և խաբեբաներ էին:*

Դու ի՞նչ: Դու
հիմար ես: Դու պետք է
Եղիային սպանեիր:

Բայց նրա Աստված կրակով պատասխանեց: **Դա հրաշք էր:** Մեր քահանաները անզոր *էին: Ժողով*ուրդը հետ շրջվեց դեպի Եհովա Աստված:


Սիրելի՛ս, բայց ուրիշ ի՞նչ կարող էի անել: *Ես* վախեցա ժողովրդից:
Դու սպանեցիր իմ քահանաներին:
ԴՈՒ, ՀԻՄԱ՛Ռ:


Ոչ մի հրաշք չի փրկի Եղիային Բահաղի բարկությունից:
Եթե ես սրա համար չսպանեմ Եղիային, թող աստվածները նույնն անեն ինձ հետ և ավելին:
Ես պետք է հեռանամ:

Եղիան չվստահեց
Աստծուն և փախավ,
որ փրկի իր կյանքը:

3 Թագավորաց 19.1-4

Ո՛վ Աստված, սրանից ավել չեմ կարող դիմանալ: Թո՛ւյլ տուր հիմա մեռնեմ, մինչև Հեզաբելը կգտնի ինձ:
Ես ինքս ինձանից ամաչում եմ: Ես չվստահեցի քեզ: Ես իմ մեղավոր հայրերից ավելի լավը չեմ: Թո՛ւյլ տուր **մեռնեմ:**


Եղիան փախավ անապատ և թաքնվեց քարայրում քառասուն օր: Նա եկավ Սինա սարի մոտ, որտեղ Մովսեսը ստացավ տասը պատվիրանները: Այնտեղ Աստված խոսեց նրա հետ:

Եղիա՛, ի՞նչ ես անում այստեղ:
Բոլորը թողեցին քո օրենքը, բացի ինձանից: Բոլոր քո մարգարեներին սպանեցին: Միայն ես եմ մնացել քեզ երկրպագողներից, և հիմա փնտրում են, որ սպանեն ինձ:
Գնա՛ և կանգնի՛ր սարի վրա՝ Աստծո առջև:

3 Թագավորաց 19.4, 8-12
Երբ Եղիան կանգնեց Աստծո առջև, ուժեղ քամի բարձրացավ, բայց Աստված քամու մեջ չէր:
Հետո երկրաշարժ եղավ, բայց Աստված այնտեղ էլ չէր:
Վերջապես երկնքից կրակ իջավ, բայց նորից Աստված կրակի մեջ չէր:
Աստված փորձում էր Եղիային ցույց տալ, որ ինքն ավելի սարսափելի է, քան Հեզաբելը:

Երբ քամին, երկրաշարժը և կրակը դադարեց, Եղիան լսեց Աստծո հանդարտ և մեղմ ձայնը: Նա նույն հարցը տվեց Եղիային:
Եղիա՛, ի՞նչ ես անում այստեղ:
Եղիան ոչինչ չհասկացավ: Նա շարունակեց խղճալ ինքն իրեն և նույն պատասխանը տվեց:
Բոլորը թողեցին քո օրենքը, բացի ինձանից: Բոլոր քո մարգարեներին սպանեցին: Միայն ես եմ մնացել քեզ երկրպագողներից, և հիմա փնտրում են, որ սպանեն ինձ:

Լավ, եթե այսպես ես շարունակելու, ուրեմն գնա և օծիր Եղիսեին քո փոխարեն մարգարե:
Չնայած դու չգիտես, բայց Իսրայելում 7000 մարդ կա, որ չի խոնարհվել Բահաղի արձանի առջև և նրա ոտքերը չի համբուրել: Հիմա գնա քո ճանապարհով. Աքաաբի ողջ ընտանիքը պետք է մեռնի:

3 Թագավորաց 19.12-21

Նաբովթը խաղողի այգիներ ուներ Աքաաբի պալատի մոտ: Աքաաբը հաճախ նայում էր պատուհանից և հիանում այգու գեղեցկությամբ, երազում էր, որ այն իրենը լիներ: Ինչքան մտածում էր դրա մասին, այնքան փափագում էր ունենալ իր հարևանի ունեցվածքը: Պատվիրանն ասում է. «Մի՛ ցանկացիր», բայց Աքաաբը չէր հարգում Եհովային:

Աքաաբը շատ հարուստ էր և որոշեց, որ պետք է գնի խաղողի այգին:
Վաճառի՛ր այս այգին ինձ: Այն իմ տան մոտ է գտնվում, ես քեզ **ավելի լավ** այգի կտամ մի ուրիշ տեղ:
Աստված նման բան թույլ չէր տա:

Սա **500** տարի է մեր ընտանեկան ունեցվածքն է: Օրենքը պատվիրում է մեզ չվաճառել ունեցվածքը ընտանիքից դուրս որևէ մեկին:

Սիրելի՛ս, ինչո՞ւ չես **ուտում:** Ինչո՞ւ ես այսքան տխուր:
Քանի որ **Նաբովթն** իր այգին ինձ չի վաճառում:

Ելից 20.17, 3 Թագավորաց 21.1-7
Դու թագավոր ես: Դու իշխանություն ունես անելու **այն, ինչ ցանկանում ես:** Թույլ մի՛ տուր, որ հասարակ գյուղացին խանգարի քո **երջանկությանը:** Ես այդ այգին կվերցնեմ քեզ համար:

Ես քեզ ավելի կվճարեմ, երբ աշխատանքն ավարտես: Հիմա բերանդ **փակ պահիր,** այլապես նույն **բախտին** կարժանանաս:

Մովսեսի օրենքն ասում է. «Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր»:

Այնտեղ: Ահա՛ նա:
Այո՛, նա ասաց, որ թագավորը պետք **է մեռնի:**
Եվ ասաց, որ Աստված ուղարկել է դևերին, որ տիրեն թագավորին:
Նա արժանի է մահվան:
Նրանք տարան Նաբովթին և սպանեցին նրան:

Ահա, սիրելի՛ս, այգին քոնն է: Դու չես կարող առաջ շարժվել այս աշխարհում, եթե **անողոք** չլինես: Ուժեղներն են գոյատևում:
Այն գեղեցիկ է, այնպես չէ՞: Ես *արժանի* եմ սրան, այնպես չէ՞:
Ելից 20.16, 3
Թագավորաց 21.10-16
Հեզաբելը գիտեր, որ իր Բահաղ աստվածը աչքեր չունի, որ տեսներ, բայց երկնքում կա Աստված, ով տեսնում է ամեն բան և չի մոռանում ոչինչ:

Եղիա՛, Աքաաբը գնացել է Նաբովթի այգին, որ տիրի դրան: Գնա՛ և հանդիպի՛ր նրան այնտեղ: Փոխանցի՛ր նրան իմ խոսքը:

Աքաա՛բ, Աստված ինձ ասաց, որ դու **սպանել** ես անմեղ մարդու և տիրացել ես նրա ունեցվածքին: Այս և ուրիշ շատ մեղքերի համար, այն նույն տեղում, որտեղ շները լիզեցին Նաբովթի արյունը, կլիզեն նաև քո արյունը:
Իմ թշնամին ինձ այստե՞ղ գտավ:

Դու չես կարող **Աստծուց** թաքնվել: Որովհետև դու ծախեցիր քո հոգին ունեցվածքի համար, Աստված չարիք կբերի քո ընտանիքի վրա: Բոլոր քո երեխաներն ու ազգականները կմեռնեն, նույնիսկ ամենափոքրերը:
Դու **բարկացրել** ես Աստծուն: Շները Հեզաբելին կուտեն քո տան պատի մոտ: Երբ քո ընտանիքից որևէ մեկը մեռնի քաղաքում, շները կուտեն նրանց մարմինները: Եթե դաշտում մեռնեն, երկնքի թռչունները կուտեն նրանց: Ոչ ոք պատվով չի թաղվի:

3 Թագավորաց 21.17-26

Այն, ինչ Եղիան ասել է, կկատարվի:
Աքաաբը հիմա զոհ էր մատուցում Եհովային, բայց նա անկեղծ սրտով չէր հետևում Աստծուն:

Ավելի ուշ կեղծ մարգարեները ռազմական հարցում խորհուրդ տվեցին Աքաաբ թագավորին:
Գնա՛ և պատերազմի՛ր Ռամովթ-գաղաադում, և Աստված քեզ մեծ **հաղթանակ** կտա:
Բոլոր մարգարեները *կո՞ղմ են* սրան:

Աքաա՛ք թագավոր, Եհովան խոսեց ինձ հետ: Դու կգնաս Ռամովթ-գաղաադի և **կսպանվես մարտի դաշտում:**
Ուշադրություն մի՛ դարձրու **Միքիային:** Միայն նա չէ Եհովայի մարգարեն: Մենք՝ 400 մարգարեներս, ասում ենք, որ մեծ հաջողություն և հարստություն է սպասվում Ռամովթ-գաղաադում:
Ես ատում եմ Միքիային: Նա ամեն ինչում **վատատես է:**


Աքսա՛ք թագավոր, դու **չարիք** ես գործել Աստծո առաջ: Դու **խորհրդակցում** ես կեղծ մարգարեների հետ, ովքեր գումար են վերցնում իրենց ծառայությունների համար: **Նրանք սուտ են** խոսում:

Ես տեսա Աստծուն գահի վրա նստած, և երկնքի հրեշտակներին նրա առջև կանգնած: Նա հարցրեց. «Քանի որ Եղիան ասաց Աքաաբին, որ նա մահանալու է, նա զգուշավոր է դարձել, որ չֆսասի իրեն: Նրան պետք է համոզել, որ պատերազմի գնա: Ո՞վ կհամոզի Աքաաբին գնալ Ռամովթ-գաղաադ պատերազմի, որտեղ նա պետք է սպանվի»:
Մեկը մի բան էր ասում, մյուսն ուրիշ բան էր առաջարկում: Քննարկելուց հետո հրեշտակներից մեկն առաջ եկավ և ասաց.

3 Թագավորաց 21.27, 22.6-22

Կարծում ես Եհովայի հոգին թողել է ինձ և քեզ հե՞տ է խոսում:
ՉԸՀ
ՖՖՖ

Այն օրը կիմանաս,
թե ով ունի Տիրոջ հոգին,
երբ թաքնվես քո սենյակում՝
վախենալով կյանքիդ համար:
Ի՞նչ է սա: Մեկ ա՞յլ
մարգարեություն:
ՔԱ՛Հ:

Այս մարդուն բանտ նետե՛ք և կերակրե՛ք այնքա*ն, որ չմահա*նա, մինչև ես կվերադառնամ պատերազմից: **Հետո մենք կսպանենք նրան:՝**
Եթե դու պատերազմից կենդանի վերադառնաս, ուրեմն ես կեղծ մարգարե եմ և **արժանի** եմ մահվան:

Շատ լավ միտք էր հագնվել սովորական զինվորի նման: Նրանք երբեք չեն մտածի, որ դու թագավոր ես, և մեր մարդիկ լավ են կռվում: Չեմ համբերում տեսնել այն մարգարեի դեմքը, երբ դու ողջ-առողջ կվերադառնաս:
Այո՛, և այս սպառազինությունը կպաշտպանի ինձ ցանկացած նետերից:
3 Թագավորաց 22.24-30

Զինվորը նետը օդ բաց թողեց՝ հույս ունենալով հարվածել թշնամուն՝ չնայած, որ այն ուղղված չէր որևէ մեկի կողմ:





ԹՈՒՐԱՖ
Ասասա՛ս
Ի՞նչ:

3 Թագավորաց 22.34

Նետը հարվածեց այն մասը, որ պաշտպանված չէր: Կարծում եմ նրա մահանալու ժամանակն էր:
Կարծում եմ նա մեռած է:
Աստվա՛ծ իմ, ո՛չ:

Նրա մարմինը դրեք Նաբովթի այգում, մինչև կարողանանք պատշաճ կերպով թաղել այն:

Ինչպես Եղիան ասել էր, շները լիզում էին Աքաաբի արյունը Հեզաբելի պատուհանի տակ: Նա առաջինն էր իր ընտանիքից, մնացածին նույնն էր սպասվում:

Աքաաբի կառքի վրայի արյան հետքերը մաքրելուց հետո, զինվորը վերադարձավ պալատ:
Որտե՞ղ է Աքաաբ թագավորը: Արդյո՞ք նա իր հաղթանակն է տոնում:
3 Թագավորաց 22.37-38, 4 Թագավորաց 9.8-10

Հիմա՛ր, դու Աստծո մարգարե չես: Դու **ստախոս** ես: Աքաաբը մահացավ, ինչպես Եհովայի մարգարե Միքիան հռչակել էր:
Չի՛ կարող պատահել: Բոլոր Աստծո մարդիկ **համաձայնվեցին:** Աքաաբը պետք է հաղթեր:
Ոչ *բոլորը:* **Միքիան**, ում դու ապտակեցիր և բանտ ուղարկեցիր, չհամաձայնվեց: Երբ մարդիկ իմանան, նրանք քո գլուխն են պահանջելու:

Դու ազատ ես, կարող ես գնալ: Աքաաբը մեռած է:
Ես գիտեմ և չեմ կասկածում, որ շները լիզեցին նրա արյունը, ինչպես Աստված ասել էր: **Հեզաբելը հաջորդն** է, և բոլոր նրանք, ովքեր կապ ունեն Աքքաբի հետ:

Ես պետք է թաքնվեմ:

Օ՜, ո՛չ: Միքիան ասաց, որ ես կիմանամ, թե ով ունի Տիրոջ հոգին այն օրը, երբ կթաքնվեմ մի փոքր սենյակում:

Աքաաբի որդիները թագավորելու էին նրա փոխարեն, և տասներկու տարի անց Հեզաբելը դեռ թագուհի էր լինելու: Իսրայելը շարունակելու էր երկրպագել կեղծ աստվածների և չհետևել Աստծո օրենքին:

Աստված խոսեց Աքաաբի տան դեմ՝ ասելով. « Աքաաբի ողջ ընտանիքը կոչնչանա, նույնիսկ ամենափոքր երեխան: Ոչ ոք կենդանի չի մնա: Շները կուտեն Հեզաբելին, և մեկը չի գտնվի, որ կսգա նրա մահը կամ կթաղի նրան»:

12 տարի անց:
Ես պետք է ներկեմ երեսս, որ գրավիչ լինեմ գեներալ Հեուի համար, երբ նա մարտի դաշտից վերադառնա:
4 Թագավորաց 9.30

Ես կկանգնեմ այստեղ, որպեսզի նրանք տեսնեն, որ ես եմ գլխավորը:

Ո՞վ է իմ կողմից:

Մենք քեզ հետ ենք, գեներա՛լ:
Ուրեմն, Հեզաբելին ցած նետե՛ք:
Դուք չեք կարող դա անել: **Ես թագուհի եմ:**

4 Թագավորաց 9.32-33

Թողե՛ք մարմինն ընկած մնա:

Շները կերան Հեզաբելին և լիզեցին նրա արյունը ճիշտ նույն տեղում, որտեղ նրա ամուսնունը լիզեցին, ինչպես Աստծո մարգարեն ասել էր:


4 Թագավորաց 9.33-37
Բայց շները չէին ուտի այն կեղտոտ ձեռքերը, որ այդքան չարություն էին գործել:
Ինչպես և մարգարեները ասել էին, Աքաաբի զավակները և ողջ ընտանիքը սպանվեցին ժողովրդի կողմից: Ոչ ոք կենդանի չմնաց:
Նրանք, ովքեր մահացան դաշտերում, թռչունները կերան նրանց, իսկ ովքեր մահացան քաղաքում՝ շները: Ոչինչ չմնաց թաղելու համար: Իսկապես, մեղքի վարձքը մահ է:

Երբ Եղիան աղոթում էր, երիտասարդ մարգարեներ եկան Եղիսեի մոտ, որպեսզի ուղերձ փոխանցեն:
Աստված խոսեց մի քանի երիտասարդ մարգարեների հետ: Գիտե՞ս արդյոք, որ քո տերն այսօր երկինք է գնալու:
Այո՛, Աստված ինձ էլ է հայտնել, բայց լո՛ւռ մնա, ոչինչ մի՛ ասա:

Եղիսե՛, դու այստեղ մնա: Ես պետք է Երիքով գնամ:
Կենդանի է Տերը, եթե ես քեզ թողնեմ: Ես կգնամ այնտեղ, ուր դու ես գնում:

Դու գիտե՞ս, որ քո տերը՝ Եղիան, այսօր երկինք է հափշտակվելու:
Այո՛, ես գիտեմ: Հիմա մի՛ անհանգստացրեք մեզ: Թո՛ղ դա ձեր մեջ մնա: Ես չպետք է նրան իմ տեսադաշտից բաց թողնեմ:

Դու մնա Երիքովում:
Ես պետք է գնամ
Հորդանան գետի մոտ:
Կենդանի է Տերը,
և կենդանի է քո հոգին, եթե
ես քեզ թողնեմ:

4 Թագավորաց 2.3-7

Թռ՛ինկ
Օոոո՜
Տեսա՞ք դա: Ձրերը կանգնեցին, որ նրանք անցնեն:
Այո՛, ինչպես Մովսեսն արեց:
Ես ոչ մի դեպքում բաց չէի թողնի սա:
Երանի Բահաղի մարգարեները կարողանային տեսնել սա:

Ի՞նչ կցանկանաս, որ քեզ համար անեմ, մինչև գնալս:
Դու դժվար բան խնդրեցիր, բայց կտրվի քեզ, եթե դու կարողանաս ինձ տեսնել վեր բարձրանալիս:
Տո՛ւր ինձ **կրկնապատիկը** այն հոգուց, որ քո վրա կա:

Աստծո կառքը:
4 Թագավորաց
2.8-11
Եվ մրրկահողմ

Ուրարտու՝ Կրակե կառքը բաժանեց Եղիային Եղիսեից:

Եղիան մրրկահողմով երկինք հափշտակվեց:

4 Թագավորաց 2.11-13

Որտե՞ղ է Եղիայի Աստված:

Եղիայի հոգին հիմա Եղիսեի վրա է:
ԹՐՄՓ
Ա՜յ մարդ, սա ինչ օր է:

4 Թագավորաց
2.14-16



Գլուխ 7

Մարգարեություններ Քրիստոսի մասին

Եղիսեից հետո Աստված բարձրացրեց այլ մարգարեների՝ Եսայիային, Երեմիային և Ամովսին, որ կոչ անեն մարդկանց դարձի գալ իրենց կռապաշտությունից և մեղքից: Աստված խոսել է այս մարգարեների միջոցով, և նրանք շատ մարգարեություններ են գրել գալիք իրադարձությունների մասին:



Եսայիան մարգարե էր Ոզիա, Հովաթամ, Աքազ և Եզեկիա թագավորների օրոք (մոտավորապես մ.թ.ա. 760-700): Աստված Եսայիա մարգարեի միջոցով ասաց. «Ես կերակրել և մեծացրել եմ երեխաների, բայց նրանք ըմբոստացան իմ դեմ: Համր եզը ճանաչում է իր տիրոջը, բայց Իսրայելը ինձ չգիտի: Դուք մեղավոր ազգ եք՝ լցված անօրինությամբ, չարագործների զավակներ»:

«Եթե հետ կանգնեք ձեր չարությունից և ազատեք գերիներին, հոգ տանեք որբերի և որբևայրիների համար, ես կվերականգնեմ և կբժշկեմ ձեզ, բայց, եթե չդառնաք դեպի ինձ, սրով պիտի մեռնեք: Ձեր երկիրը ամայի կլինի և քաղաքները կրակով կայրվեն: Եվ ձեր որդիներին կտանեն Բաբելոն, որտեղ նրանք կծառայեն արքային»:



Եսայիա 1.2-4, 7, 16, 20, 39.7,
Երեմիա 21.8-10

Երեմիան մարգարե էր Հովսիա, Հովաքին և Սեդեկիա թագավորների օրոք (մոտավորապես մ.թ.ա. 630-590): Նա ասաց. «Այպես է ասում Տերը. Ահա ձեր առջև դնում եմ կյանքի ճանապարհը և մահվան ճանապարհը: Այս քաղաքում մնացողը սրով, սովով ու համաճարակով պիտի մեռնի, բայց դուրս եկող, ձեզ պաշարող քաղդեացիներին հանձնվողը, օիտի ապրի, և նրա կյանքն իրեն պարգևի պես պիտի լինի: Քանի որ Ես իմ երեսը հաստատել եմ այս քաղաքի դեմ չարիքի համար և ոչ թե՝ բարիքի,- ասում է Տերը.- Բաբելոնի թագավորի ձեռքն է տրվելու, և նա էլ հրի ճարակ է դարձնելու այն»:



Տերը խոսեց
Երեմիայի միջոցով
և ասաց. «Ես ինքս
պատերազմելու
եմ ձեր դեմ՝
մեկնված ձեռքով ու
զորավոր բազկով,
բարկությամբ,
սրտմտությամբ ու
մեծ ցասմամբ:
Հարվածելու եմ
այս քաղաքի
բնակիչներին՝ մարդ
թե անասուն.

մեծ համաճարակով պիտի մեռնեն նրանք: Եվ դրանից հետո,- ասում է Տերը,- Հուդայի թագավոր Սեդեկիային և նրա ծառաներին և ժողովրդին ու այս քաղաքում համաճարակից, սրից ու սովից վերապրածներին Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի ձեռքն եմ մատնելու՝ իրենց թշնամիների ձեռքը, իրենց կյանքերը փնտրողների ձեռքը. սրի ծայրով կոտորելու է նրանց, չի խնայելու, չի գթալու ու չի ողորմելու: Իմ բարկությունը կրակի նման պիտի այրի, և հանգցնող չի լինի: Ձեզ գերի պիտի տանեն Բաբելոն և սրով կոտորեն: Նրանք, ովքեր կգնան Բաբելոն, այնտեղ կմեռնեն և կթաղվեն»:

Երեմիա 20.4-6, 21.5-7, 10-12

Ամովսը մարգարե էր Ոզիա և Հերոբովամ 2 թագավորների օրոք (մոտավորապես մ.թ.ա. 765-750) : Աստված խոսեց Ամովսի միջոցով. « Ձեր կանայք նախրի պես իրենց ամուսիններից պահանջում են խմիչք մատակարարել: Դուք այլևս չեք տիրի ձեր ամուսիններին: Ձեզ կարթով կքաշեն և կտանեն Բաբելոն՝ ստրկության»:

«Դուք պառկում եք թանկարժեք կահույքի վրա և ուտում եք ճարպոտ կերակուր: Դուք լսում եք երաժշտություն, մինչ մեծ քանակությամբ գինի եք խմում: Դուք արդարությունը գետնին գցեցիք, ոտնահարեցիք աղքատին, կեղեքեցիք արդարին և կաշառք վերցրեցիք, աղքատին իրավունք չարեցիք: Դուք խաղողի այգիներ կտնկեք, բայց ձեր թշնամին կխմի դրանից: Ձեր բանակը կոչնչանա, և դուք գերության կմատնվեք օտար երկրում»:

Աստված ասում է. «Ես կկործանեմ Բեթելի զոհասեղանները և կքանդեմ ձեր տները ձեր ամառանոցների հետ միասին: Դուք կեղեքում եք աղքատին, կաշառք վերցնում և ոտնահարում կարիքավորներին:Ես անձրև չտեղացրի, սով և հիվանդություն ուղարկեցի, բայց դուք չեք ապաշխարում: Դուք տնկում եք խաղողի այգիներ, բայց չեք խմելու դրանից»:

Ամովս 4-6

Մ.թ.ա. 753

Ովսեեն մարգարե էր Ոզիա, Հովաթամ, Աքազ և Եզեկիա թագավորների օրոք (մոտավորապես մ.թ.ա. 785-725): Նա մարգարեացավ. «Իսրայելը սրով պիտի ընկնի, նրանց երեխաները քարերի պիտի զարնվեն և նրանց հղի կանայք պիտի պատռվեն»:

«Կգա օր, երբ Աստված կների նրա մեղքերը և ձրիաբար կսիրի Իսրայելը: Իսրայելը կրկին կծաղկի շուշանի պես: Ձիթենու նման կտարածվի և նրա բույրը Լիբանանի գինու պես կլինի»:

Բաբելոնից հետո դուք կցրվեք ազգերի մեջ, այնտեղ նույնպես նրանք կհետապնդեն ձեզ, կբռնագրավեն ձեր ունեցվածքը, և դուք հանգստանալու տեղ չեք գտնի»:

Եսայիա 10.21, գլուխ 35, 51.11, Երեմիա 30.11, Եզեկիել 17.21, Ովսեե 13.16, 14.1-6, Հովել 3.2

Այս փաստաթղթի համաձայն՝ բոլոր հրեաները պետք է լքեն երկիրը, և դուք չեք կարող ձեզ հետ **վերցնել ձեր** ունեցվածքը:
Ես միշտ ցանկացել եմ այս կոֆն ունենալ:
Քանի որ Իսրայել ժողովուրդը մերժեց Աստծո խոսքը, նրանք կցրվեն ազգերի մեջ, բայց հանգիստ չեն գտնի, մինչև Աստված նրանց հետ չբերի իրենց հայրերի երկիրը:

«Իսրայելի ամբողջ երկիրն ավերակ կդառնա, և դուք ***յոթանասուն տարի կծառայեք Բաբելոնի թագավորին:*** Յոթանասուն տարի հետո ես կպատժեմ Բաբելոնը իրենց անօրենության համար և ֆսացորդը հետ կբերեմ այս երկիր, որ կառուցեն այն»:
«Երուսաղեմն այնքան լքված պետք է լինի, որ դաշտի պես հերկվի»:

Այս մարգարեությունը կատարվեց: Թշնամին իսկապես հերկեց Երուսաղեմը: Բայց վերջին օրերին տաճարը կվերակառուցվի, և ժողովուրդները հոսքով նրա մոտ են գնալու:
Միքիա մարգարեն, ով ապրել է մ.թ.ա. 750-686, մարգարեացել է.

«Եվ շատ ազգեր են գալու և ասելու են, եկե՛ք բարձրանանք Տիրոջ լեռն ու Հակոբի Աստծո տունը, որպեսզի իր ճանապարհները մեզ սովորեցնի, և մենք նրա շավիղներով քայլենք, որովհետև Սիոնից է դուրս գալու օրենքը, և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից»:
«Եվ նա շատ ժողովուրդների մեջ դատաստան է անելու ու հզոր ազգերին հանդիմանելու է, մինչև իսկ հեռավորներին.

և նրանք իրենց սրերից
խոփեր են ձուլելու,
իրենց նիզակներից
՝ հոտոցներ, ազգ
ազգի վրա սուր չի
բարձրացնելու, ու այլևս
պատերազմել չեն
սովորելու: Այլ ամեն
մարդ իր որթատունկի
և իր թզենու տակ
է բնակվելու, և
վախեցնող չի
լինելու, որովհետև
Զորաց ՏԻՐՈՋ
բերանն է ասել»:

Երեմիա 25.11-12,
Միքիա 3.12, 4.1-7



«Եվ մենք
կքայլենք մեր Տեր
Աստծո անունով,
հավիտյանս
հավիտենից: Այն
օրը,-ասում է Տերը,-
պիտի հավաքեմ
հեռու քշվածին
և զորեղ ազգ
շինեմ: Եվ Տերը
թագավորելու է
նրանց Սիոն լեռան
վրա՝ այսուհետև
մինչև հավիտյան»:


Երեմիան և ուրիշները մարգարեացել են:
«Սեդեկիա թագավորը չարիք գործեց Տիրոջ առաջ: Նրան չեն սպանի: Նա կգնա Բաբելոն և այնտեղ կապրի իր ժողովրդի հետ, բայց իր աչքերով երբեք չի տեսնի Բաբելոնը: Նա կկուրանա: Դուք Բաբելոնում կմնաք 70 տարի:
«70 տարի անց հյուսիսից եկած զորքը կգրավի Բաբելոնը, և մեր ժողովրդի մնացորդը հետ կվերադառնա այս երկիր և կկառուցի տաճարը»:


«Դատաստանից հետո Աստված կների նրանց մեղքերը, և Երուսաղեմը բնակեցված կլինի բոլոր սերունդների ընթացքում»:
«Այս Գիրքը քեզ հետ Բաբելոն տար և կարդա ժողովրդի համար: Թո՛ղ նրանք իմանան ինչ է նրանց սպասվում, մինչ վերադառնալը»:
«Ես կվերականգնեմ Դավթի աթոռը, և դուք կգաք ու կտիրեք ձեր երկրին»:

Եզեկիելը մարգարեացել է. «Նրանք կցրվեն ազգերի մեջ, բայց ինչպես Աստված կցրի, այնպես էլ ի վերջո հետ կբերի իրենց երկիր»:
«Աստված խոստացավ Աբրահամին, որ նրա սերունդը հավիտյան ժառանգելու է երկիրը, և նա չի խախտի իր խոստումը: Բայց, քանի որ մարդիկ մեղավոր են, Աստված նրանց գերության կուղարկի ազգերի մեջ, որտեղ նրանք կծառայեն օտար աստվածների, բայց վերջում հետ կբերի իրենց երկիր»:
Երեմիա 34.3, 39.7, 51.60-61, 52.11, Եզեկիել 12.13-16, Հովել 3.20-21, Ամոս 9.11-15

«Եգիպտոսը կդատապարտվի Բաբելոնի կողմից և 40 տարի ամայացած կմնա: Բաբելոնից նրանց վերադառնալուց հետո Եգիպտոսն այլևս երբեք այնպես հզոր չի լինի, ինչպես նախկինում, բայց այն մինչև վերջ կլինի: Եվ վերջին օրերին Եգիպտոսն ու Ասորեստանը կմիանան իմ Իսրայել ժողովրդին՝ եռակողմ խաղաղության համաձայնագրով, և ես կօրհնեմ նրանց»:

«Փղշտացիները կոչնչանան և այլևս գոյություն չեն ունենա: Ասկաղոնը, Ակկարոնը և Ամմոնը նույնպես կվերանան: Եդոմը լիովին կամայանա: Տյուրոսը կոչնչանա, և բոլոր քարերն ու փայտերը կգցվեն ծովը: Այն այլևս երբեք չի բնակեցվի, և հողը քարի պես հարթ կմնա, որտեղ ձկնորսները կարող են գցել իրենց ցանցերը»:

«Բայց Պարսկաստանը (Իրան), Թուրքիան, Եթովպիան և Լիբիան կմնան մինչև վերջ և, երբ փորձեն հարձակվել Իսրայելի վրա, կմահանան Իսրայելի լեռներում»:

Աստվածաշնչի մարգարեությունները ճշգրիտ են: Այն քաղաքներն ու ազգերը, որոնց ոչնչացման մասին մարգարեացել էին, դրանք հիմա չկան: Այն ազգերը, որ պետք է մինչև վերջ մնային, այսօր մեզ հետ են:
Երեմիա 25.15-26, Եզեկիել 25, 26.15-19, 29.12-16, 30.1-8, Ամոս 1

Մ.թ.ա.605 Բաբելոնը գրավեց Իսրայելը, ինչպես կանխատեսել էին մարգարեները:
Ո՛վ Տեր, մեր հայրերի մեղքերի համար մենք պատժվում ենք: Օգնի՛ր մեզ հիմա հնազանդվել քո օրենքին այս օտար երկրում:

Ավելի քան 5000 հրեաներ բերվեցին Բաբելոն՝ որպես ռազմագերիներ: Նրանք բերեցին երիտասարդներին և կրթվածներին՝ հույս ունենալով, որ նրանք օգտակար կլինեն թագավորության մեջ ծառայելիս: Նրանց մեջ Դանիել անունով մի երիտասարդ կար: Նա միշտ պահում էր պատվիրանները և հնազանդ էր Աբրահամի Աստծուն:

Մենք շնորհակալ ենք քեզ, ո՛վ երկնքի և երկրի տեր, տիեզերքի տիրակալ, որ դու օրհնում ես այս կերակուրը:
Դանիելը գերի էր օտար երկրում, բայց նա որոշեց հավատարիմ մնալ իր Աստծուն: Նրա տերերը նկատեցին, որ Դանիելը բարի հոգի ուներ, ուստի նրան բարձրացրեցին և դարձրեցին Բաբելոնի իմաստուններից մեկը:

Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը արտասովոր երազ է տեսնում:
Ի՞նչ է նշանակում այս երազը: Անշուշտ **աստվածներն** են նման երազ ուղարկել, որ մեզ հայտնեն **ապագան:**

Դանիել 1.2-7, 17-21, 2.1-11

Ես գիտեի, որ բոլորդ ***խաբեբաներ եք:*** Աստվածները ձեզ հետ չեն խոսում: Դուք բոլորդ ձեր ընտանիքների հետ ***կսպանվեք***, և ձեր տները ***կվերածվեն աղբանոցի:***

Ցավում եմ, Դանիե՛լ, բայց վաղը դու և Բաբելոնի բոլոր իմաստունները ***կմահանաք:*** Թագավորը չի հավատում իր քահանաներին:
Բայց **Եհովա** Աստված կարող է հայտնել թագավորի երազը և դրա մեկնությունը: Ես պետք է առանձին աղոթք անեմ: Փորձիր համոզել նրան մեկ օր սպասել:

Տե՛ր, միայն դու ես Աստված և տիեզերքի թագավորը: Խնդրում եմ քո ծառային ցույց տուր գալիք բաները: Քեզանից բացի ուրիշ աստված չկա:
Դանիե՛լ, լսի՛ր ինձ...

Արագացրո՛ւ, տա՛ր ինձ թագավորի մոտ:
Եթե դու չկարողանաս թագավորին պատմել երազը, նա ինձ տեղում կսպանի:

Դանիել 2.12-30


Ո՛վ թագավոր, դու երազում մի մեծ արձան ես տեսել: Այդ արձանը խորհրդանշում է քո թագավորությունը, և երեք ուրիշ թագավորություններ, որ դեռ գալու են:
Դու ճիշտ ես: Ես ոչ ոքի չեմ պատմել: Քո Աստված միակ Աստվածն է:

Դու այս ոսկի
գլուխն ես՝ արքայից արքան:
Նախքան Հուդան գրավելը, մեր
մարգարեները մեզ ասել են, որ Աստված
պատրաստվում է դատել մեզ մեր
մեղքերի համար և թագավորությունը
քեզ տալ: Հիմա քո թագավորությունը
փառավոր կլինի:

Արծաթյա կրծքավանդակը խորհրդանշում է մեկ այլ թագավորություն՝ *մարերն ու պարսիկները:* Քո մահից հետո նրանք նվաճելու են Բաբելոնը և թագավորելու են ամբողջ աշխարհում, ինչպես դու:



Դանիել 2.31-33, 39-43

Հետո, ո՛վ թագավոր,
դու տեսար, թե ինչպես սարից
առանց մարդու ձեռք դիպչելու մի քար
պոկվեց: Այն գլորվեց և հարվածեց
արձանի ոտքերին ու կործանեց
բոլոր թագավորությունները մի
ակնթարթում:

Այդ քարը Աստծո որդու խորհրդապատկերն է, որ գալու է այս աշխարհ և հաստատելու է փառավոր թագավորություն:
Վերջին օրերում բոլոր մահացածները կարթնանան, որ կանգնեն դատաստանի առաջ: Չարիք գործողները կստանան ամոթ և հավիտենական արհամարհանք: Բարիք գործողները կժառանգեն հավիտենական կյանքը:

Դանիելը ապրեց Բաբելոնում 68 տարի: Նա շատ երազներ մեկնեց և հայտնեց գալիք բաների մասին: Նաբուգոդոնոսոր թագավորի մահից հետո նրա որդի Բաղդասարը դարձավ թագավոր:

Մի գիշեր, երբ Բաղդասար թագավորը խնջույք էր կազմակերպել, մի խորհրդավոր ձեռք հայտնվեց և պատի վրա ինչ-որ բան գրեց: Դանիելին կանչեցին, որ մեկնի գրվածը: Աստված նրան գիտություն տվեց, որ հասկանա անծանոթ լեզվով գրվածը:





Ժողովող 12.13-14, Եսայիա 9.6-7, 45.1, Դանիել 2.34-35, 44-48, 5.1-29, Հայտնություն 20.11, 21.5

Մարգարեները կանխատեսել էին, որ այս թշնամին նվաճելու է Բաբելոնը՝ գաղտնի ներթափանցելով այն երկու դարպասներով, որտեղով ջուր է մատակարարվում քաղաքին: Բաբելոնացիները շատ արբած կլինեն և չեն նկատի: Պատմությունը հենց այդպես է արձանագրում Բաբելոնի անկումը:

Այն բանից հետո, երբ մարերն ու պարսիկները նվաճեցին Բաբելոնը, Դանիելը մի հին գիրք հայտնաբերեց՝ գրված Երեմիա մարգարեի կողմից, որը Աստվածաշնչի գրքերից մեկն է: Կարդալով գիրքը՝ Դանիելն ապշեց, որովհետև Աստված վաղուց հայտնել էր, որ բաբելոնյան գերությունը 70 տարի կտևի:

Դրանից հետո ժողովրդի մնացորդը պետք է վերադառնա Իսրայել և վերակառուցի պատերն ու տաճարը: Նա նաև բացահայտեց, որ 200 տարի առաջ Եսայիա մարգարեն նույնիսկ հայտնել է պարսից թագավորի անունը, ով պետք է հրամայի նրանց հետ վերադառնալ:


Արդեն անցել է 69 տարի... մնաց **միայն մեկ տարի:** Այստեղ ասվում է, որ Կյուրոսը Աստծո ծառան է և Աստծո կամքն է անում: Նա կհրամայի, որ մենք **մեր հայրենիք վերադառնանք:** Օրհնյա՛լ ես դու, Տե՛ր Աստված, տիեզերքի թագավոր:


Ինչպես Աստված խոստացավ Աբրահամին, նա այս երկիրը տվել է մեզ, **որ հավիտյան տիրենք:** Նա զգուշացրեց մեր հայրերին, որ կմատնի մեզ մեր թշնամիների ձեռքը, եթե ուրիշ աստվածների պաշտենք, բայց նա խոստացավ, որ երբեք չի մոռանա իր ժողովրդին: Աստված պահեց իր խոստումը: Հիմա, երբ մենք վերադարձել ենք, պետք է հնազանդվենք նրան:
Կյուրոսը հրեաներին ազատ արձակեց գերությունից 70 տարի անց, ինչպես որ կանխատեսել էին մարգարեները, և 52.000 հրեաներ վերադարձան իրենց երկիր և սկսեցին շինել:

Մենք պետք է կազմակերպվենք: Նախ պետք է շինենք **պատերը**, նոր հետո սկսենք **տաճարի** վերակառուցումը:
Ո՛վ Աբրահամի Աստված, դու մեզ հետ բերեցիր, ինչպես որ խոստացել էիր: Սովորեցրու մեզ քայլել քո ճանապարհներով:
Ես սառը ջուր եմ բերել: Եկե՛ք սկսենք աշխատանքը:
Եսայիա 44.28, Երեմիա 25.11-12, 29.10, Դանիել 9.1-2

Դանիելը շատ ծեր էր և հետ չվերադարձավ ժողովրդի հետ: Նա առաջվա պես կարևոր մարդ էր համարվում պարսից կայսրությունում, որը գտնվում էր Բաբելոն քաղաքում: Աստված նրան դեռ մի քանի տեսիլք էլ ցույց տվեց վերջին ժամանակների վերաբերյալ: Երազներից մեկում նա տեսավ մետաղյա գազանի: Հրեշտակը հայտնեց դրա նշանակությունը:

Աստված քեզ ցույց է տալիս, թե ինչ է լինելու վերջին օրերում: Նա Նաբուգոդոնոսորին հայտնեց, որ չորս թագավորություն է լինելու: Երկուսն արդեն եղել են: Այժմյան պարսից կայսրությունից հետո կգա հունականը, որը շատ արագ կնվաճի, բայց շուտով կընկնի և կբաժանվի չորս թագավորությունների: Սրանք էլ կմարտնչեն միմյանց դեմ այնքան, մինչև կմնան երկուսը: Նրանք տարիներով կմարտնչեն, մինչև կնվաճվեն չորրորդ թագավորության կողմից, որն էլ հենց այս մետաղյա գազանն է լինելու:

Դանիել 7.17-28, Մատթեոս 24.4-25

Չորրորդ թագավորությունը երկաթի նման կլինի՝ **ավելի հզոր և կատաղի,** քան բոլոր նախկին թագավորությունները: Այն կհաղթի բոլորին, բայց վերջին օրերին այն կբաժանվի տասը ազգերի: Հետո մի մարդ կբարձրանա, ով **խաղաղություն** կքարոզի: Նա գազանի գլխի վերջին եղջյուրն է: Վերջին օրերին նա կեղծ խաղաղություն է խոստանալու, որ միայն կարողանա հաղթել և ոչնչացնել: Նա հրեական տաճարի սուրբ վայրում գարշելի բան կտեղադրի՝ դարձնելով այն պիղծ և կդադարեցնի զոհաբերությունները: Դրանից հետո **աշխարհում դժվար** ժամանակներ կլինեն, բայց արդարները կփրկվեն:

«Դանիել Աստված ցանկանում է, որ դու իմանաս, թե ինչ է լինելու և երբ: Այն պահից, երբ տաճարը վերականգնելու և վերակառուցելու հրաման տրվի, կանցնի 483 տարի, որից հետո Մեսիան կսպանվի մարդկանց մեղքերի համար, և տաճարը նորից կքանդվի:

Այս մարգարեությունը կկատարվի և Մեսիան կօծվի: Մեղքերի թողություն կլինի, և մարդկանց հավիտենական արդարություն կշնորհվի»:

Ինչպես և Դանիելն ասել էր, Մեսիան իր հաղթական մուտքն Երուսաղեմ կատարեց այն նույն օրը, երբ լրացավ 483-րդ տարին:

Աստված ասաց Ադամին և Եվային, որ կնոջ սերունդը կգա և կոչնչացնի չարին: Նա ասաց Նոյին, որ Մեսիան կգա Սեմի ընտանիքից, այլ ոչ Քամի և Հաբեթի:

Ծննդոց 49.9-10, Սաղմոս 22, 53, Եսայիա 7, 9.1-2, 42.1, 49.6, գլուխ 53, Դանիել 9.25-26, Միքիա 5.2, Զաքարիա 9.9, Մատթեոս 24.1-2, Եբրայեցիս 2.9

Աստված ասաց Աբրահամին, որ փրկիչը կգա իր սերունդից՝ իր որդի Իսահակի միջոցով: Աստված ասաց Իսահակին, որ խոստացված որդին կգա Հակոբի միջոցով, իսկ Հակոբին ասաց, որ Քրիստոսը կգա Հուդայի միջոցով:

Աստված տարբեր մարգարեների խոստացված փրկչի կյանքի մասին հատուկ մարգարեություններ էր տվել:

Նրանք ասել են, որ նա կույսից կծնվի Հուդայի Բեթլեհեմ քաղաքում, խոնարհ կլինի և էշի վրա կնստի:

Աստված իր հոգին կթափի նրա վրա, և նա կդատի հեթանոսներին:

Նա լույս կլինի հեթանոսների համար և փրկություն բոլոր աշխարհի համար:

Նա կլինի չարչարվող Մեսիան՝ մերժված իր ժողովրդի կողմից և կմահանա խոցված ձեռքերով և ոտքերով:

Նա մերկ կախված կլինի փայտից և կծարավի, բայց ջրի փոխարեն քացախ կտան, որ խմի:

Նա կմահանա ավազակների կողքին, բայց կթաղվի հարուստ մարդու գերեզմանում:

Դանիելի մարգարեությունները չորս թագավորությունների մասին կատարվեցին ամենայն ճշգրտությամբ, ինչպես նա ասել էր: Մ.թ.ա. 330թ. Ալեքսանդր Մեծը Հունաստանից արշավ սկսեց, որը տևեց 7 տարի, որի ընթացքում նա նվաճեց հայտնի աշխարհը, ներառյալ մարո-պարսկական կայսրությունը: Հունաստանն իշխանությունը պահեց մինչև մ.թ.ա. 167թ., երբ չորրորդ համաշխարհային թագավորությունը՝ Հռոմը, սկսեց նվաճել այն:

Հռոմը, որը Նաբուգոդոնոսորի երազում ներկայացված էր որպես երկաթե ոտքեր, իսկ Դանիելի տեսիլքում՝ մետաղյա գազան, ավելացրեց իր զորությունն ու տարածքները, ինչպես մարգարեներն էին կանխատեսել: Մինչև մ.թ.ա. 5թ. Հռոմը երկաթե ձեռքով կառավարեց Իսրայելը:

500 տարի անց

դանիելի մարգարեություններից անցել էր ավելի քան հինգ հարյուր տարի: մ.թ.ա. 6 թ. հռոմեացիները հրեաներին դավանանքի ազատություն տվեցին, բայց ծանր հարկեր պարտադրեցին: տաճարը վերականգնվեց և դարձավ հրեական կյանքի կենտրոնը: շատերը մոռացել էին մեսիայի մասին մարգարեությունները, բայց ոմանք դեռ պահում էին օրենքը և սպասում քրիստոսին: նրանց մեջ էր սիմեոն անունով մի ծերունի: նա սուրբ մարդ էր և փափագում էր տեսնել այն մեկին, ում մասին մարգարեները խոսում էին: տարիներ շարունակ նա կարդացել էր մարգարեությունները և գիտեր, որ ժամանակը մոտ է: բայց հիմա նա ծեր է և, միգուցե երկար չապրի: արդեն 4000 տարի էր անցել, երբ աստված առաջին անգամ խոստացավ եվային, որ նրա սերունդը կգա և կկործանի չարի գործերը:

հիմա էր ժամանակը:
ավելի քան 350 մարգարեություններ պատրաստ էին իրականանալ:

Գլուխ 8

Նոր Կտակարան

Մ.թ.ա. 6

Ո՛վ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված, ես սպասել եմ փրկչին, բայց երկար չեմ ապրելու:
Ճիշտ է, դու երկար չես ապրի, բայց մինչև մեռնելդ կտեսնես խոստացված որդուն:

Սիմեո՛ն, դու *ամեն օր գալիս ես այստեղ:* Երանի բոլոր քահանաները քո նման **նվիրված** լինեին:
Սիմեոնը ուսումնասիրեց գրվածքները և գտավ բազմաթիվ մարգարեություններ Քրիստոսի մասին:
Ի՞նչ եք կարծում Քրիստոսին վերաբերող այս մարգարեության մասին: Այստեղ Եսայիան ասում է, որ **կույսը** կհղիանա և մի որդի կծնի: Սա պետք է լինի կնոջ սերունդը, ինչպես ասվել էր Եվային:
Այո՛ և Եսայիան նույնպես ասել էր, որ նա կկոչվի հզոր Աստված: Բայց մարգարեությունները դժվար է հասկանալ:

Միքիա 5.2-ում գրված է, որ որդին ***հավիտյան է,*** ինչպես Աստված: Իսկ ի՞նչ կասեք Սաղմոս 45.6-ում գրված մարգարեության մասին, որտեղ Աստված որդուն կոչում է Աստված:
Շատ քչերը կհամաձայնվեն քեզ հետ, դրա համար ավելի լավ է չբարձրաձայնես այս ամենի մասին, այլապես քեզ կքարկոծեն:
Կտեսնես, մինչև իմ մեռնելը Մեսիան կմտնի այս նույն տաճարը, և ես կտեսնեմ նրան:

Հնարավոր է նա **ճիշտ է**:
Իսկ *դու* ո՞վ ես: Ի՞նչ գիտես այս ամենի մասին:


Ես չէի կարող չլսել ձեր խոսակցությունը: Ես նույնպես ուսումնասիրել եմ սուրբ գրությունները, և 500 տարի առաջ Դանիելը շատ հետաքրքիր բաներ է ասել Մեսիայի գալստյան ժամանակների մասին:
Ծննդոց 3.15, Սաղմոս 45.6, Եսայիա 7.14, 9.6, Դանիել 9.25-26, Միքիա 5.2, Ղուկաս 2.25-26
Ի՞նչ գիտես դու, որ դպիրները չգիտեն դրա մասին:


Իմ հայրը դպիր է և ինձ ցույց է տվել մարգարեությունները: Աստված ասաց Դանիելին, որ Երուսաղեմը վերակառուցելու պատվիրանը ստանալուց մինչև Մեսիայի մահը ընկած ժամանակահատվածը կլինի 483 տարի:
Արդեն 449 տարի անցել է, ինչ այդ հրամանագիրը կա: Մնացել է ընդամենը 34 տարի, ինչը նշանակում է, որ Մեսիան հնարավոր է հիմա քայլում է փողոցում:
Ո՛չ, ոչ հիմա: Սուրբ Հոգին հայտնել է ինձ, որ մինչև մեռնելս ես կտեսնեմ նորածին Մեսիային հենց այս տաճարում:
Ինչո՞ւ ես այդքան վստահ:
Կտեսնես:

Երբ Սիմեոնը արդեն բավականին ծեր էր և դեռ տաճարում սպասում էր խոստացված Քրիստոսին, Զաքարիա անունով մի քահանա եկավ տաճար աղոթք անելու: Նա և իր կինը արդեն ծեր էին, բայց երեխաներ չունեին:

Հանկարծակի մի հրեշտակ հայտնվեց խորանի աջ կողմում:
Մի վախեցի՛ր: Քո աղոթքները լսվել են, և քո կինը կհղիանա և մի որդի կծնի, նրան **Հովհաննես** կկոչեք:
Շատերը կուրախանան նրա ծնունդով, որովհետև նա մարդկանց պատրաստելու է **Մեսիայի** գալստյանը: Նա գինի չի խմի, բայց կընդունի այն նույն հոգին և զորությունը, ինչ եղիան ուներ:

Ինչպե՞ս վստահ լինեմ, որ դու ճիշտ ես խոսում: Ես և կինս շատ ծեր ենք զավակ ունենալու համար, և նա ամբողջ կայնքում անպտուղ է եղել:
Ես Գաբրիելն եմ, նա, ով կանգնում է Տիրոջ ներկայության մեջ, և ինձ ուղարկել են քեզ մոտ այս ամենը հայտնելու: Դու նշա՞ն ես ուզում: Ահա քեզ նշան. դու այլևս չես խոսի, մինչև այս ամենը չկատարվի:


Ես ուրախ կլինեմ, որ կխոսենք սրա մասին: Այս տունն այնքան լուռ է: Կարծում եմ դու չպետք է հակաճառեիր **հրեշտակներին:**
զաքարիա՛, դեռ դժվարանում եմ հավատալ: աստված լսեց մեր աղոթքները, ինչպես սառայի աղոթքները, և հիմա ես պատրաստվում եմ դառնալ **մեծ մարգարեի մայր:**

4000 տարի շարունակ մարգարեները կանխատեսում էին Մեսիայի գալուստը: 700 տարի առաջ Եսայիա մարգարեն ասել է. «Ահա կույսը կհղիանա և մի որդի կծնի, նրա անունը Էմանուել կկոչվի, որ նշանակում է Աստված մեզ հետ»:

Մարիամը նշանված էր Հովսեփի հետ և պատրաստվում էր ամուսնանալ: Նա կույս էր և պահում էր Մովսեսի օրենքը:

Հանկարծ հրեշտակը հայտնվեց Մարիամին:

Աստծո Սուրբ Հոգին կծածկի քեզ: Դու կհղիանաս, և այդ սուրբը Աստծո որդին կլինի: Քո զարմուհի Եղիսաբեթը, որ ամուլ էր, արդեն վեցերորդ ամիսն է երեխայի է սպասում:

Եսայիա 7.14, Ղուկաս 1.5-20, 26-40

Եղիսաբե՛թ
Մարիա՛մ, իմ երեխան:

Օրհնյա՞լ ես դու կանանց մեջ և ***օրհնյա՞լ*** է քո որովայնի պտուղը: Ինչպե՞ս պատահեց, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ եկավ, քանի որ երբ քո ողջույնի ձայնն իմ ականջին հասավ, մանուկը որովայնիս մեջ ուրախությունից խաղաց:
Իմ անձը փառավորում է Տիրոջը, և իմ հոգին ուրախացավ Աստծով՝ իմ Փրկչով: Այսուհետև բոլոր սերունդները ինձ երանելի պիտի կոչեն, քանի որ նա մեծ բաներ արեց:
Աստված ընտրել է մեզ նման խոնարհներին: Ինչպես խոստացել էր հայր Աբրահամին, նա այցելել է մեզ իր **ողորմությամբ:**
Մարիամը Եղիսաբեթի մոտ մնաց երեք ամիս:

Եղիսաբեթի ծննդաբերելու ժամանակը լրացավ:
Զաքարիան վստահ էր, որ տղա է ծնվելու, քանի որ հրեշտակը նրան արդեն հայտնել էր:
Եթե տղա է ծնվելու, կարծում եմ անունը Զաքարիա կլինի:
Ահա նա գալիս է, ե՛կ հարցնենք:

Նա ասաց, որ հրեշտակը նրան համր դարձրեց, քանի որ չհավատաց նրա խոսքին:
Երեխայի անունը ի՞նչ ես դնելու:
Նա գրելու համար տախտակ է ուզում:

Նա ասում է անունը Հովհաննես պետք է լինի, ինչպես որ հրեշտակը պատվիրել է:
Բայց ընտանիքում ոչ ոք չկա Հովհաննես անունով:

Իսկապես տղա է, շատ մազոտ տղա:

Ղուկաս 1.41-64

Այդ ընթացքում Հովսեփը հայտնաբերեց, որ Մարիամը հղի է և հասկացավ, որ դա իր երեխան չէ:
Մայրի՛կ, ես մինչև հիմա չեմ կարողանում **հավատալ:** Նրա շուրջը ուրիշ տղամարդիկ չկային: Նա ամեն ժամանակ իր ընտանիքի հետ է եղել և բոլորը գիտեն, թե ինչ բարեպաշտ աղջիկ է Մարիամը: ***Ես, իհարկե, դա չեմ արել:*** Բայց փաստն այն է, որ նա հղի է:

Հովսե՛փ, ի՞նչ ես պատրաստվում անել:
Ես չեմ կարող հիմա ամուսնանալ նրա հետ, բայց չեմ ցանկանում մեծ աղմուկ բարձրանա դրանից: **Նրան կքարկոծեն** շնության համար: Միգուցե կարողանանք առանց աղմուկի չեղարկել նշանադրությունը:

Նա չասա՞ց, թե ով է հայրը:
Նա ասաց, որ հայրը հենց Աստված է, և ինքը հղիացել է Սուրբ Հոգուց առանց ֆիզիկական կապի:

Ի՞նչ է, գժվե՞լ է նա:
Նա ասում է, որ երեխան աշխարհի փրկիչն է լինելու, Աստծո որդին:
Նման բան ասելը սրբապղծություն է կնոջ համար: Ես պետք է հեռանամ նրանից ինչքան հնարավոր է շուտ և անաղմուկ:


Այդ նույն երեկո, երբ Հովսեփը քնած էր, հրեշտակը հայտնվեց նրան:
Հովսե՛փ, Դավթի որդի, մի՛ վախեցիր կին առնել նշանածիդ՝ Մարիամին, որովհետև նրանում ծնվածը Սուրբ Հոգուց է: Նա որդի կծնի և Նրա անունը պիտի դնես Հիսուս, որովհետև նա պիտի փրկի իր ժողովրդին իր մեղքերից:


Սա Եսայիայի մարգարեության կատարումն է. «Կույսը կհղիանա և որդի կծնի, և Նրան կկոչեն Էմմանուել, որ նշանակում է Աստված մեզ հետ»:

Մարիա՛մ, կներե՞ս ինձ քեզ կասկածելու համար:
Գիտեմ, սա անհավանական է թվում, որ Աստված Իսրայելի բոլոր կանանցից ընտրել է հենց ինձ Մեսիային այս աշխարհ բերելու համար:

Ինչպիսի՞ն կլինի փոքրիկը: Քանի որ նա Աստված է մարմնով, արդյո՞ք նա կարողանալու է խոսել միանգամից, կամ կարդալ:
Չգիտեմ Հովսեփ, միայն Աստված գիտի: Մենք պետք է սպասենք և տեսնենք:

Ծննդոց 3.15,
Եսայիա 7.14. 9.7,
Մատթեոս 1.18-23,
Ղուկաս 1.32-33
Մենք երկուսս էլ Դավթի տոհմից ենք: Մարգարեներն ասել են, որ Մեսիան Դավթի սերնդից է լինելու:
Ես ուրիշ բան եմ մտածում: Եդեմի պարտեզում Աստված խոստմունք տվեց, որ կնոջ սերմը կջախջախի օձի գլուխը: Հիմա հասկանում եմ: Այս երեխան տղամարդու սերմից չի լինի, այլ միայն կնոջ: Հրաշալի՜ է: Աստված ամեն բան հենց սկզբից պլանավորել էր:



Հովսեփն ու Մարիամն ապրում էին Գալիլեայի Նազարեթ քաղաքում, բայց հին մարգարեությունն ասում էր, որ Մեսիան ծնվելու է Հուդայի Բեթլեհեմ քաղաքում (Միքիա 5.2): Շուտով երեխան պետք է ծնվեր, բայց սխալ վայրում: Նրանք չգիտեին մարգարեությունը, ուստի պատճառ չկար այդքան երկար ճանապարհ կտրել և հասնել Բեթլեհեմ:

Հովսե՛փ, նշանակում է դու պետք է գնաս Բեթլեհեմ: Դու այստեղ չես լինի, երբ երեխան ծնվի:
Մարդիկ չեն հասկանա, եթե ես այստեղ չլինեմ: Ես քեզ ինձ հետ կտանեմ:

Մարիա՛մ, չպետք է ինձ հետ գայիր: Միգուցե մենք պետք է հետ դառնանք:
Ո՛չ, ես պետք է քեզ հետ լինեմ, երբ երեխան ծնվի: Ոչ ոք չի հասկանա ինձ:

Մենք պետք է **շտապենք**, եթե հնարավոր է: Կարծում եմ **ժամանակն** է:
Ավելի քան մեկ շաբաթ պահանջվեց 100 մղոն ճանապարհ անցնելու համար:
Կփորձեմ ազատ սենյակ գտնել իջևանատանը:

Մարիա՛մ, ես մանկաբարձ եմ գտել, նա կօգնի մեզ:
Իջևանատանը ազատ սենյակ չկա՞ր:
Ո՛չ, ամեն տեղ զբաղված էր:

Շնորհավորում եմ ձեր առաջնեկի ծնունդը: Ափսոս, որ նա մսուրում ծնվեց:
Մի՛ տխրիր դրա պատճառով: Մի օր նա **կթագավորի աշխարհում:**
Նա, կարծես թե սովորական երեխա է:

Ղուկաս 2.1-7

Ի՞նչ: Դա հրեշտակ է:
Հազարավոր հրեշտակներ:
Մի՛ վախեցեք, որովհետև Աստված ինձ ուղարկել է ավետելու, որ այսօր ձեզ համար Դավթի քաղաքում փրկիչ է ծնվել, հրեա Մեսիան, Տերը:
Փա՜ռք Բարձրյալ Աստծուն, երկրի վրա խաղաղություն և մարդկանց մեջ հաճություն:

Սա կլինի ձեզ նշան. մի երեխա կգտնեք խանձարուրներով պատած և մսուրի մեջ դրված:

Պատկերացնո՞ւմ ես, **հրեշտակներ են հայտնվել մեզ:**
Սպասի՛ր, ես պետք է պատմեմ կնոջս:
Դու լսեցի՞ր թե նա ինչ ասաց: **Մեսիան** ծնվել է Իսրայելում:
Ուզում եմ տեսնել:
Փրկի՜չ: Խաղաղություն բոլոր մարդկանց: Երեխա՞, ***եկեք գնանք գտնենք նրան:***

Մեսիան:
Կներեք, որ անհանգստացնում ենք, բայց հրեշտակը մեզ այստեղ բերեց:
Ո՞վ կմտածեր, որ **Աստված երեխա** կդառնար:
Ղուկաս 2.8-20

Ժամանակն էր, որ Հովսեփն ու Մարիամը նորածին երեխային տաճար տանեին և օրենքով նախասահմանված զոհը կատարեին:
Հովսե՛փ, նա առաջին անգամ է տաճարում լինում, և ոչ ոք չգիտի որ Հիսուսը հենց Քրիստոսն է:
Կարծում եմ մենք էլ չպետք է ասենք: Սպասենք մինչև մեծանա:

Սիմեոնը տաճարում էր:
Ո՞վ է նա, Մարիա՛մ:
Ես չգիտեմ: Մեզ այստեղ ոչ ոք չի ճանաչում:
Ահա նա: Մենք շատ երկար ենք սպասել:

Օրհնյա՜լ ես դու, Տե՛ր Աստված: Հիմա կարող եմ խաղաղությամբ ննջել, քանի որ տեսա քո փրկությունը, ինչպես որ խոստացել էիր: Նա կլինի լույս հեթանոսների համար և փառք Իսրայելի համար:
Որտեղի՞ց գիտես:

Լսի՛ր ինձ, այս փոքրիկը Իսրայելում շատերի համար ընկնելու և կանգնելու նշան կլինի, և շատերը կհակառակվեն նրան:
Այո՛, և քո սիրտը կկոտրվի՝ տեսնելով այն, ինչ կատարվում է նրա հետ:

Տեսե՛ք, Մեսիան է: Նա եկել է իր տաճարը: Նրա մասին են մարգարեները պատմել:
Սա Աննան է: Նա իր ողջ կյանքում սպասել է Մեսիային:

Ղուկաս 2.27-38

Իսրայելից արևելք գտնվող երկրներում իմաստուններ կային, որոնք ուսումնասիրում էին հին գրվածքները և ձգտում էին ճանաչել Աստծուն: Նրանք գիտեին Մեսիայի մասին վկայող մարգարեությունները: Երազներով և տեսիլքներով Աստված հայտնել էր նրանց, որ խոստացված որդին ծնվել է: Դրանից հետո նրանք հայտնաբերեցին մի անսովոր աստղ, որը ցույց էր տալիս Իսրայել ժողովրդին:


Հերովդե՛ս արքա, հեռավոր արևելքից այստեղ են եկել երեք **հարուստ** մարդիկ: Նրանք ասացին, որ փնտրում են Իսրայելի **նոր թագավորին,** փոքրիկ երեխայի:
Երեխա՞, թագավո՞ր: Ես եմ թագավորը: Նրանց ներս հրավիրիր և այստեղ կանչիր քահանաներին և դպիրներին:
Այդ ժամանակ Իսրայելը թագավոր չուներ, քանի որ Հռոմի կայսրությունն էր կառավարում, բայց կար Հռոմի կողմից նշանակված թագավոր՝ Հերովդեսը: Իմաստունները որոշեցին նորածին թագավորի մասին հարցնել Հերովդեսին:

Դուք ասում եք, որ եկել եք տեսնելու փոքրիկ թագավորի՞ն: Որտեղից եք լսել նման բան:
Մենք նրա աստղն ենք տեսել արևելքում և եկել ենք նրան երկրպագելու:
Որտե՞ղ է նա:
Մենք հստակ **չգիտենք:** Այդ պատճառով եկել ենք քո մոտ:
Ես կանչել եմ իմաստուններին: Տեսնենք նրանք ինչ գիտեն: Եկեք առանձին սենյակում զրուցենք:

Նրանք ասում են, որ եկել են երկրպագեն հրեաների թագավորին, ում համար մարգարեացել էին, որ պետք է գա և փրկի մարդկանց: Ձեր գրվածքներում ինչ-որ բան ասվո՞ւմ է թագավորի մասին:
Այո՛, շատ մարգարեներ հայտնել են նրա գալստյան մասին, բայց մենք կարծում ենք, որ նման մարգարեությունները պետք չէ բառացիորեն հասկանալ:
Ինձ չեն հետաքրքրում ձեր կարծիքները: Հստակ ի՞նչ են ասում մարգարեությունները:
Միքիա մարգարեն ասում է, որ Մեսիան կծնվի Բեթլեհեմում, Հուդայի ցեղից:

Մատթեոս 2.1-8, Միքիա 5.2

Հերովդեսը վախեցել էր, որ նոր թագավոր էր ծնվել, ուստի նա ցանկանում էր սպանել փոքրիկին, որտեղ որ գտներ նրան:

Մի խորհրդավոր բան կար նրա մեջ, որ դպիրները գիտեին, թե երեխան հստակ որտեղ պետք է ծնվեր: Սակայն նրանք այնքան անտարբեր էին իրենց մարգարեների նկատմամբ:
Իսրայելի մարգարեների գրվածքները նման չեն ուրիշների գրվածքներին: Ես երբեք նման մանրակրկիտ ներկայացված մարգարեության չեմ հանդիպել:

Նայե՛ք, նույն աստղը, որ տեսանք արևելքում:
Եվ այն նման չէ մեր տեսած որևէ այլ աստղի: Այն չի տեղաշարժվում մնացած աստղերի հետ և շատ ավելի պայծառ է:
Հիշի՛ր դրա ուղղությունը, վաղը մենք կհետևենք դրան:

Ահա՛, այն ցույց է տալիս հենց այդ տունը: Դա **Բեթլեհեմը** չէ: Մի քանի շաբաթ է անցել, հնարավոր է նրանք տեղափոխվել են:
Սա բավականին երկար ճամփորդություն էր, և մենք կարծես թե տեղ ենք հասնում:
Այս աստղը իրականում **տարօրինակ** է: Այն ապերի բարձրության է:

Չէինք ցանկանա անհանգստացնել, բայց մենք **երկար ճանապարհ ենք անցել,** որ տեսնենք և երկրպագենք նորածին թագավորին:
Դուք որտեղի՞ց գիտեք:
Մենք կարդացել ենք բոլոր ժամանակների սուրբ գրությունները: Ձեր մարգարեները կանխատեսել էին նրա գալուստը, և նույնպես աստղն է հայտնվել և մեզ առաջնորդել այստեղ: Այն մինչև հիմա էլ ձեր տան գլխավերևում է:

Մատթեոս 2.9-12

Արևելքից եկած մարդիկ **խաբեցին** ինձ: Նրանք ուրիշ ճանապարհով են վերադարձել տուն: Դա նշանակում է, որ նրանք **գտել են** երեխային և վախեցել են այս նույն ճանապարհով գնալ:
Ուղարկի՛ր իմ հատուկ ջոկատը Բեթլեհեմ: Պատվիրիր **սպանել երկու տարեկանից ցածր** յուրաքանչյուր տղա երեխայի:



Շատ տարիներ առաջ մարգարեները կանխատեսել էին այս սարսափելի իրադարձությունը, որ տեղի ունեցավ Բեթլեհեմում:

Հովսեփն ու Մարիամը փոքրիկ Հիսուսին տարան Եգիպտոս: Իմաստունների ընծաների շնորհիվ նրանք հնարավորություն ունեցան ճամփորդել և այնտեղ ապրել երկու տարի:
Հերովդեսի մահից հետո, երբ Հիսուսը երկու տարեկան էր, Աստված պատվիրեց նրանց հետ գնալ Իսրայել: Սրա մասին նույնպես մարգարեություն կա Աստվածաշնչում. «Ես Եգիպտոսից կանչեցի իմ որդուն»:



Երեմիա 31.15, Ովսեե 11.1, Մատթեոս 2.13-23

Երբ Հիսուսը տասներկու տարեկան էր, Հովսեփն ընտանիքին տարավ Երուսաղեմ, որ զատիկը տոնեն: Նրանք գառնուկ էին զոհելու իրենց մեղքերի թողության համար:
Հիսո՛ւս, դու կարող ես գառնուկին քահանաների մոտ տանել: Նրանք պետք է թույլտվություն տան, որ կարողանանք վաղը զոհաբերել: Մենք պետք է գիշերելու համար հարմար տեղ գտնենք:
Հայրի՛կ, կարո՞ղ եմ Հիսուսի հետ գնալ, ուզ**ում եմ** տաճարը տեսնել:

Զոհաբերությունից մի քանի օր անց...
Հովսե՛փ, Հիսուսին ոչ մի տեղ **չեմ կարողանում գտնել:** Ամբողջ օրն ոչ ոք չի տեսել նրան:
Կարծում եմ նա **Երուսաղեմում** է մնացել:
Բայց նա **գիտեր**, որ մենք գնում ենք: Մտածեցի կարող է մեր բարեկամներից մեկի հետ լինել:
Մենք հետ կգնանք և կգտնենք նրան:

Դուք բոլորդ ընդունում եք, որ Մեսիան Դավթի որդին է լինելու ինչպես մարգարեներն են ասում: Դուք նաև ընդունում եք, որ Դավիթը նրան Տեր է կոչում, ընդունում է որպես իր Աստված: Ուրեմն, ինչպես կարող է Մեսիան միևնույն ժամանակ լինել Դավթի որդին և նրա Տերը, եթե...
Զգո՛ւյշ եղիր ենթադրություններ անելիս, դա կարող է հայհոյանք համարվել Աստծո առջև:
Բայց դու պնդում ես, որ քո մեկնությունները ճշմարիտ են: Ավագներին է տրված հասկանալ այդ խորը ճշմարտությունները:

Եսայիա 9.7, Ղուկաս 2.42-46, 2 Տիմոթեոս 3.16-17

Գրությունները կամ **ճշմարիտ** են, կամ՝ **ոչ:** Մենք միայն հավատում ենք այն ամենին, ինչ համապատասխանում է մեր ավանդույթների՞ն:

Ահա՛ նա:

Մի՞թե ճշմարտությունն այդքան խորն է: Չէ՞ որ սուրբ գրությունները տրված են, որ մենք **հասկանանք** դրանք:

Բայց ամեն բան բառացիորեն չի **կարելի ընկալել:** Մեր վարդապետներն ասում են...

Հիսո՛ւս, մենք ամեն տեղ փնտրեցինք քեզ: Ինչո՞ւ այդպես վարվեցիր մեզ հետ:
Նա երկու օր է այստեղ է: Դուք արտասովոր որդի ունեք:

Ինչո՞ւ եք ամեն տեղ փնտրել: Մի՞թե չգիտեիք, որ ես իմ հոր տանը պետք է լինեմ:

Ես **երբեք** չէի հանդիպել երիտասարդի, ով այսքան լավ գիտեր սուրբ **գրությունները:**
Ի՞նչ նկատի ուներ նա ասելով՝ *«իմ հոր տանը պետք է լինեմ»*, մի՞թե **հայրը** չէր նրան փնտրողը:


Հիսուսը վերադարձավ տուն իր ծնողների հետ և հնազանդ էր նրանց: Նա շարունակեց աշխատել արհեստանոցում: Տղան զարգանում էր իմաստությունով և հասակով:
Քանի որ նա միշտ արդարությամբ էր վարվում և բարիք կամենում մերձավորներին, բոլորը նրան սիրում էին:

Ղուկաս 2.46-52

Դուք պետք է հետ դառնաք ձեր **չար ճանապարհներից** և **հնազանդվեք Աստծուն,** քանի որ երկնքի թագավորությունը մոտ է: Եթե պատրաստեք ձեր սրտերը Մեսիային ընդունելու համար, ես ձեզ ջրով կմկրտեմ:
Չմոռանանք, որ էլիզաբեթի որդին ծնվել էր Մարիամի որդուց վեց ամիս առաջ: Հրեշտակը Զաքարիային պատվիրել էր տղային անվանել Հովհաննես, և որ նա պետք է մարդկանց սրտերը պատրաստեր Մեսիայի գալստյանը: Սա նույնպես կանխատեսել էին մի քանի մարգարեներ դեռևս հինգ հարյուր տարի առաջ:

Բայց ինձանից հետո գալիս է մեկը, ով ինձանից առաջ է եղել: Նա ձեզ կմկրտի ոչ թե ջրով, այլ Աստծո Սուրբ Հոգով: Ապաշխարե՛ք, քանի դեռ ուշ չէ:
Ի՞նչ պետք է անենք, Հովհաննե՛ս: Ի՞նչ է Աստված ուզում, որ անենք **արդարանալու համար:**

Եթե դուք երկու հանդերձ ունեք և տեսնում եք կարիքավոր մեկին, տվե՛ք մեկը նրան: Եթե կերակուր ունեք, և ինչ-որ մեկը քաղցած է, կերակրե՛ք նրան:
Արդարությամբ վարվե՛ք բոլորի հետ:

Հովհաննե՛ս, մենք, որ աշխատում ենք կառավարությունում, ի՞նչ կարող ենք անել Աստծուն հաճեցնելու համար: Ես հարկ եմ հավաքում, իսկ Նաբալը մաքսավոր է:
Կաշառք մի՛ վերցրեք: Մի՛ օգտագործեք ձեր պաշտոնը ուրիշներից դրամ գանձելու համար: **Ազնիվ և արդար եղեք** ձեր բոլոր գործերում:

Ես քո ազգին և դավանանքին չեմ պատկանում, բայց ուզում եմ **հաճեցնել Աստծուն:** Ի՞նչ պետք է անեմ հիմա:
Դաժանությամբ մի՛ վարվիր նրանց հետ, ում ղեկավարում ես, մի՛ գողացիր կամ օգտագործիր պաշտոնդ գումար կամ գույք ձեռք բերելու համար: Բավարարվի՛ր քո աշխատավարձով:

Մաղաքիա 3.1, Ղուկաս 3.2-18, 7.24, 27

Ես Մեսիան չեմ:
Ո՞վ ես **դու,** որ խոսում ես Մեսիայի մասին: Ո՞ւմ տեղն ես քեզ դրել:
Ո՛չ, այլ ինչպես Եսայիա մարգարեն ասել է. «**Ես եմ** անապատում կանչողի ձայնը, պատրաստի՛ր Տիրոջ ճանապարհը»:
Դու այն մարգարե՞ն ես, որի մասին **Մովսեսն** ասել է, թե կգա մեկը և կառաջնորդի մարդկանց դեպի Աստված:

Այդ դեպքում ի՞նչ **իրավունքով** ես շրջանցում մեր կրոնական իշխանությունը և **մկրտում** այս մարդկանց:
Ես ընդամենը ճանապարհ եմ պատրաստում Մեսիայի համար, իսկ դուք իժերի զավակներ եք: Դուք կարծում եք, որ Աստծո զավակներ եք միայն նրա համար, որ հրեա եք և **Աբրահամի** սերունդն եք:
Դուք պետք է մի կողմ թողնեք ձեր մեղքերը, հպարտությունն ու **ամբարտավանությունը:** Կացինն արդեն ծառերի արմատին է հասել, և դուք կկտրվեք և կրակի մեջ կգցվեք, եթե չապաշխարեք և չփոխեք ձեր սրտերը:

Հովհաննե՛ս, դու ասում ես, որ Մեսիան շուտով գալիս է: Ինչպե՞ս ես ճանաչելու նրան:
Հրեշտակն ինձ հայտնել է, որ ում վրա տեսնեմ Աստծո **Հոգին աղավնու նման իջնելիս,** նա է Իսրայելի Մեսիան, աշխարհի փրկիչը:


Ես գիտեի, որ այս ժամանակը գալու էր: Գաբրիել հրեշտակն ասել էր ինձ, որ մեծ վիշտ եմ ունենալու: Այնքան կուզեի, որ խորթ հայրդ ողջ լիներ և տեսներ սա:
Հովհաննեսն արդեն վեց ամիս է ինչ սովորեցնում էր, և Հիսուսն երեսուն տարեկան էր:
Ի՞նչ ես անելու: Ինչպե՞ս ես սկսելու: Արդյո՞ք **տաճար** ես գնալու:
Ես չգիտեմ: Իմ հայրը կհայտնի ինձ: Նախ պետք է հանդիպեմ **Հովհաննեսին**, որ նա **մկրտի** ինձ: Նա շատերին է պատրաստել վերստին ծնունդի համար:

2 Օրինաց 18.15, Եսայիա 40.3, Մատթեոս 3.1-12, Ղուկաս 3.15-18, 23, Հովհաննես 1.19-27, 33

Պատրաստվեք **Մեսիայի** գալստյանը: Հայրե՛ր, ձեր սրտերը թո՛ղ հետ դառնան դեպի ձեր զավակները: Իմաստուն եղեք և ժամանակ տրամադրեք Աստծո պատվիրանները ձեր որդիներին սովորեցնելու համար: Եթե ձեր անհնազանդ երեխաները տեսնեն ձեր անկեղծությունը, իրենց սրտերը հետ կդառնան դեպի հայրերը: Եվ ձեր ընտանիքները **կբժշկվեն:**
Եթե դուք սրտանց փափագում եք հետևել Մեսիային, երբ նա գա, ուրեմն ես ձեզ կմկրտեմ ջրով՝ ապաշխարության համար, իսկ, երբ Մեսիան գա, **կների ձեր մեղքերը:**

Հովհաննե՛ս, կմկրտե՞ս ինձ:
Ավելի տեղին կլիներ, եթե դու ինձ մկրտեիր: Դու իսկապես արդար մարդ ես:
Հովհաննե՛ս, ես պետք է հնազանդվեմ Աստծո օրենքին: Ես կանեմ այն, ինչ իմ հայրը պատվիրել է իր ժողովրդին:

Մատթեոս 3.13-17, Ղուկաս 3.21-22

Դու ես Մեսիան: Ես պետք է ճանաչեի քեզ:

Սա է իմ սիրելի որդին, որին ես հավանում եմ:
Ահա նա է Աստծո գառը, ով իր վրա կվերցնի ամբողջ աշխարհի մեղքերը:

Ղուկաս 3.22, Հովհաննես 1.29-34,
1 Հովհաննես 2.1-2

Դրա ժամանակը կգա, բայց նախ նա պետք է **փորձությունը** հաղթահարի:
Ո՞ւր է նա գնում: Մի՞թե նա չի պատրաստվում փրկել այս ազգը:
Ի՞նչ փորձություն:
Այն փորձությունը, որ Ադամն ու իր բոլոր սերունդները ձախողեցին: Նա պետք է հանդիպի խավարի իշխանին:

Հայրը ասել էր Հիսուսին, որ քառասուն օր ծոմ պահի: Նա ոչինչ չէր կերել: Եվ, քանի որ մարմինը տկար էր, սատանան փորձեց համոզել նրան չհնազանդվել Հորը և հագեցնել քաղցը:

Առաջին մարդը՝ Ադամը, չհնազանդվեց Աստծուն և կորցրեց իր արտոնյալ դիրքը: Հիսուսը, որպես Աստված հավիտենից կար, բայց հիմա նա մահկանացու մարդ էր: Կհաջողվե՞ր նրան դիմակայել գայթակղությանը, երբ մնացած բոլորը ձախողվել էին:

Քառասուն օրվա ծոմապահությունից հետո Հիսուսը քաղցած էր և տկար: Այժմ նա հասկանում էր, թե ինչ է նշանակում աղքատ լինել, ուժասպառ լինելու աստիճան քաղցած լինել: Այժմ նա հասկանում էր ինչ է նշանակում լինել միայնակ, լքված, հիվանդ և տկար:

Երկար ժամանակ սատան հարձակվում էր Հիսուսի մտքի վրա՝ բերելով կասկածներ և վախեր: Հասկանալով, որ փորձությունը վերջանում է, և Հիսուսն այժմ թույլ է, սատանան արեց մի բան, որ հազվադեպ է անում. նա հայտնվեց Հիսուսի առաջ:

Մատթեոս 4.1-3, Ղուկաս 4.1-3, Հռովմայեցիս 3.23, 5.12-21, Եբրայեցիս 4.15

Սատանան գայթակղեց Ադամին, որ նա ուտի արգելված պտուղը: Այժմ նա նույն ձևով փորձում էր գայթակղեցնել քաղցած և տկարացած Աստծո որդուն:
Դա իրականում գայթակղություն էր մի մարդու համար, ով քառասուն օր հաց չէր կերել:

Դու կարող ես այս քարերը հացի կտորներ դարձնել և կշտանալ դրանցով:

Ո՛չ, ես չեմ անի, քանի որ գրված է, որ ոչ միայն հացով կապրի մարդ, այլ Աստծո բերանից դուրս եկած ամեն խոսքով:
Ե՛կ ինձ հետ, ես քեզ մի տեղ կտանեմ, որտեղ կարող ես հնազանդվել Աստծուն:

Գրված է նաև. «Մի՛ փորձիր քո տեր Աստծուն»:
Եթե այստեղից ցած նետվես, և հրեշտակները գան ու վեր բարձրացնեն քեզ, մարդիկ դա տեսնելով՝ կընդունեն քեզ որպես Մեսիա: Ես գիտեմ, որ հենց դրա համար ես եկել:
քո մեջբերած սուրբգրային հատվածում ասվում է, որ հրեշտակները իրենց ձեռքերի վրա կտանեն քեզ և կպահեն, որ ոտքդ քարին չդիպչի: հիմա քո զորությունը ցույց տալու ժամանակն է:

Ես գիտեմ դու **սիրում** ես աշխարհը և եկել ես, **որ փրկես** այն, դրա համար քեզ մի բան ցույց կտամ, կարծում եմ քեզ դուր կգա:

Մատթեոս 4.3-7


Եվ այսպես,
այստեղից կարող ենք տեսնել աշխարհի
ամենահզոր թագավորությունների մեծ մասը: Մի՞թե
դրանք փառահեղ չեն: Այն պահից, երբ Ադամը
հակառակվեց ձեր իշխանությանը, ես դարձա այս աշխարհի
տերը: **Մարդիկ իշ**խանությո*ւնը* շարունա*կաբա*ր ինձ են տալիս:
Այս ամենն ինձ է պատկանում: Ես եմ այս աշխարհի *աստվ*ածը,
ոչ թե դու: բայց ես այն քեզ կտամ միայն մե*կ ա*յսմանով:
եթե մեկ անգամ ծնկի գաս և երկրպագես ինձ, ես իմ
ի*շխանութ*յունը քեզ կտամ: ի՞նչ կասես:

Գրված է. «**Միայն քո Տեր Եհովային** *երկրպագիր և ուրիշ ոչ մեկին»:* Դու ձախողվեցիր, հիմա հեռացի՛ր այստեղից:
Սատանան չքվեց Հիսուսի ներկայությունից: Մարդկության պատմության մեջ առաջին անգամ նա հանդիպեց մեկին, ում չկարողացավ խաբել: Հիսուսը հաղթահարեց փորձությունը: Այժմ աշխարհում կար մի մարդ, ով լիովին հնազանդվեց Աստծուն:

Քառասուն օր տևած
փորձություններն
ավարտվեցին,
բայց Հիսուսը
չափազանց թույլ էր
և չէր կարողանում
տեղաշարժվել:

Հրեշտակները եկան, որ սնունդ ու ջուր մատակարարեն: Երբ նրա մարմինը զորացավ, նա վերադարձավ այնտեղ, որտեղ Հովհաննեսն էր քարոզում:

Մատթեոս 4.8-11,
Ղուկաս 4.14

Գլուխ 9

Ծառայության սկիզբը

Նայե՛ք, Աստծո գառն է գ**ալիս, որ պե**տք է ողջ աշխարհի մեղքերը իր վրա վերցնի:
Նա Մեսիան է:
Նրա մասին են մարգարեներն ասել:
Ի՞նչ է նա անելու:

Բայց ես չեմ կարող քեզ թողնել, ուսուցի՛չ:
Հետևի՛ր Հիսուսին:
Ես քո ուսուցիչը չեմ: Ես պետք է ցածրանամ, և նա բարձրանա: Նա է ճշմարիտ Մեսիան, աշխարհի փրկիչը: Նրա՛ն հետևեք:

Ուսուցի՛չ, մենք կհետևենք քեզ և քո ***աշակերտները*** կլինենք: Որտե՞ղ ես ապրում:
Եկեք և տեսեք:

Փիլիպպո՛ս, հետևի՛ր ինձ:
Այո՛, ուսուցի՛չ, մենք սպասում էինք քեզ: Բայց նախ ես պետք է **Նաթանայելին** գտնեմ:
Նա նույնպես պահել է Աստծո օրենքները և սպասել Մեսիայի գալստյանը:

Հովհաննես 1.35-39, 43-45, 3.30-31

Որտե՞ղ ես Նաթանայել:
Այստեղ եմ, եղբա՛յր:
Նաթանայե՛լ, մենք գտել ենք նրան, ում մասին Մովսեսն ու մարգարեներն ասել են՝ Նազովրեցի **Հիսուսին**, Մարիամի որդին:

Մեսի՞ան: Դու խոսեցի՞ր նրա հետ: Բայց ***Նազարեթի՞ց:*** Նազարեթից երբեք որևէ լավ բան դուրս չի եկել: Ինչպե՞ս կարող է Մեսիան այդքան աղքատ և տգետ միջավայրից դուրս գալ: Նա պետք է ծնվեր Հուդայի **Բեթլեհեմ** քաղաքում:
Արի՛ և ինքդ տե՛ս: Հովհաննեսը վկայեց նրա մասին, և Անդրեասը հիմա նրա հետ է:

Ճշմարիտ եմ ասում, ահա գալիս է **մաքուր** սրտով իսրայելացին:
Փիլիպպո՛ս, դու նրան ինչ-որ բան պատմե՞լ ես իմ մասին:
Ոչինչ չեմ ասել:

Դու ինձ չես ճանաչում, ինչպե՞ս կարող ես ասել, որ սիրտս մաքուր է:
Մինչև Փիլիպպոսը քեզ կկանչեր, ես տեսա քեզ թզի ծառի տակ նստած:
Ինչպե՞ս ես տեսել: **Ոչ ոք** չգիտեր, թե ես որտեղ եմ:

Հովհաննես 1.45-51

Անդրեասը նույնպես գնաց եղբորը փնտրելու, որ պատմի Հիսուսի մասին:
Սիմո՛ն, մենք գտել ենք ***Մեսիային***, ում մասին Հովհաննեսը պատմում էր:
Ե՞րբ: Որտե՞ղ: Ինչպիսի՞ն է նա: Նա հետևորդներ ունի՞:
Ե՛կ և տե՛ս:

Դու **Սիմոնն** ես, Հոգեսանի որդին, բայց այսուհետ քեզ **Պետրոս** կկոչեն:
Ես իմ նավակը կհանձնեմ ընտանիքիս և քեզ կհետևեմ:

Եվ Հիսուսը տասներկուսին ընտրեց, ովքեր հետևեցին նրան և նրա ուսմունքին: Նրանք կոչվեցին տասներկու աշակերտներ և սկսեցին շրջել քաղաքից քաղաք և Աստծո արքայության ավետարանը քարոզել:

Մարկոս 3.16, Հովհաննես 1.40-42, 2.12-14

Ի՞նչ է նա անում: Գրեթե մեկ ժամ է, ինչ նա առանց մի բան ասելու կանգնած է նույն տեղում և այդ պարանն ամրացնում է ինչ-որ բանի:
Մենք այսօր բավականին շահույթ ունեցանք: Սա շատ ավելի շահավետ է, քան քրտնաջան աշխատելը:

Մտրա՞կ:
Նա մտրակ է
պատրաստում:


Իմ հոր տունը ***աղոթքի*** տուն պետք է լինի, բայց դուք այն դարձրել եք ավազակների որջ: Դուրս գնացեք այստեղից: ***Հենց հիմա՛:***
Նրա հոր տունը: Ո՞ւմ տեղն է իրեն դրել: Կարծում է **Մեսիա՞ն է:**

Իմ հոր տունը մի՛ դարձրեք առևտրի տուն: Դուք ավազակներ եք:
ԴԸՐԸ՝ ԽԿ
Հովհաննես 2.15-16

ԵԼԼ՞ԽԿ
Դուք ***իժերի*** զավակներ եք: Դուք սովի եք մատնում ***որբևայրիներին:***
Ասա՞խ
Ո՞ւմ տեղն է իրեն դրել:

Մատթեոս 6.5-7, 12.34,
Հովհաննես 2.15-16, 1
Տիմոթեոս 6.10

Հաջորդ անգամ միայն մեղքերի թողության համար կգաք հորս տուն:

Հիշո՞ւմ ես, թե Դավիթն ինչ է ասել Մեսիայի մասին:
Դպիրները սովորեցնում են, որ երբ Մեսիան հայտնվի, նա անսպասելի կայցելի իր տաճարը:
Այո. «Քո տան նախանձը կերավ ինձ, որովհետև Աստծո թշնամիները մոռացել են Աստծո խոսքը»:

Ենթադրում եմ դու *Հիսուս Նազովրեցին* ես, ում մասին խոսում էր Հովհաննեսը: Դու այսօր շատ ***խնդիրներ*** ես առաջացրել: Ի՞նչ նշան մեզ ցույց կտաս:
Դուք կհամոզվեք, որ ես Մեսիան եմ, երբ քանդեք այս տաճարը: ***Ես այն երեք օրում կշինեմ:***

Սաղմոս 69.9, 119.139, Հովհաննես 2.17-22

Հիսուսը և իր աշակերտները դուրս եկան Երուսաղեմից
և գնացին Նազարեթ՝ Հիսուսի հայրենի քաղաքը:

*Շաբաթը հանգստի օրն է, որն Աստված հաստատել է յոթերորդ օրը և ընդգրկել տաս պատվիրանների մեջ (Ծննդոց 2.2-3, Ելից 20.10), Եսայիա 42.7, 61.1-2, Ղուկաս 4.16-21


Հիսուսը բացեց Եսայիայի մարգարեությունը և գտավ Մեսիայի մասին հայտնի մարգարեությունը:
«Տիրոջ հոգին ինձ վրա է, ըստ որում Տերն օծել է ինձ, որ աղքատներին ավետարանեմ, կույրերին տեսողություն տամ, կապվածներին ազատեմ և հռչակեմ, որ Տիրոջ փրկության ժամն է եկել»:

Այսօր այս մարգարեությունը կատարվեց:

Դա Աստծո դեմ հայհոյանք է:
Դու ընդամենը հյուսնի որդի ես:
Հանգստացե՛ք, մենք արդեն գնում ենք:
Քարկոծե՛ք նրան: Նա պնդում է, որ Մեսիան է:

Հիսուսը և իր աշակերտները եկան Կափառնայում, որտեղ նրա մի քանի աշակերտներն էին ապրում: Կրկին նրանք մտան ժողովարան:

Եվ մարգարեն ասել է, որ Մեսիան լույս կլինի հեթանոսների մեջ, և նրանք կվստահեն նրան: Երանելի է սրտով մաքուր մարդը, որովհետև նա Աստծուն կտեսնի: Աստված չի մերժում նրանց, որ գալիս են դեպի իրեն, լինի հրեա թե հեթանոս:
Դո՛ւ, որ սուրբ ես, մեզ հանգի՛ստ թող:

Գիտեմ քեզ, թե ով ես: Դու Աստծո ***սուրբն*** ես:
Նա դիվահարված է: Նրան այստեղից դուրս տարեք :

Եկել ես ժամանակից շուտ մեզ տանջե՞ս: Ի՞նչ ես ուզում մեզանից:
Ո՞վ է նրան ներս թողել: **Զգո՛ւյշ եղեք,** նա **վտանգավոր** է:

Պի՛ղծ ոգի,
հրամայում եմ քեզ դո՛ւրս
արի այս մարդու միջից և
այլևս մի՛ տանջիր նրան:

Ղուկաս 4.28-35

Դո՛ւրս եկ
Վաաա՜յ

Ի՞նչ արեցիր նրա հետ:
Նա մահացա՞վ:

Հանկարծ նա ոտքի կանգնեց:
Փառք Աստծուն:
Դևերը **գնացին:** Հիմա դու ազատ ես: Գնա և այլևս մեղք մի՛ գործիր:
Հիսուսը լիարժեք իշխանություն ունի դևերի վրա: Այս մարդն ազատագրվեց:

Մենք կգնանք:
Պետրո՛ս, կինդ քեզ տուն է կանչում: Նրա մայրը **բարձր ջերմությունից տանջվում է:**

Պետրո՛ս, ես շատ եմ վախենում: Ջերմությունն ավելի է բարձրանում:
Մի՛ **վախեցիր:** Վարդապետն այստեղ է:

Վե՛ր կաց, կի՛ն, դու բժշկված ես:

Մարկոս 1.25-30,
Ղուկաս 4.35-38
Նա վեր է կենում: Նա բժշկվեց:
Նա անկողնուց վեր կացավ և սկսեց ծառայել Հիսուսին և նրա աշակերտներին:

Բժշկության մասին լուրը արագ տարածվեց, և մարդիկ շատ հիվանդներ բերեցին Հիսուսի մոտ:
Վարդապե՛տ, հայրս **անդամալույծ** է դարձել, երբ ես դեռ փոքր տղա էի: Գերանը ընկել է նրա վրա և ճնշել մեջքը: **Խնդրում եմ**, եթե կարող ես, օգնիր նրան:
Վե՛ր կաց և քայլի՛ր:

Փառք Աստծուն:

Մարկոս 1.30-34, Ղուկաս 4.38-40

Ինչպես Աստծո խոսքն է ասում. «*Կույրը կտեսնի*», հիմա քո աղջիկը տեսնում է:

Հայրի՛կ, դա դո՞ւ ես:

Հայրի՛կ, ես չգիտեի, թե ինչպիսի տեսք ունես դու: Դու շատ ավելի գրավիչ ես, քան ես պատկերացնում էի:

Հիսուսն ու իր աշակերտները տոնի օրերին գնացին Երուսաղեմ, և տաճարում սովորեցնում էր:
Երբ մարդիկ անօրենություն են գործում ձեր նկատմամբ, պետք է ներեք նրանց: Դուք օրհնված կլինեք, եթե սրտով մաքուր լինեք, որովհետև Աստծուն կտեսնեք: Եվ առավել օրհնված կլինեք, եթե խաղաղություն գործեք:
Երբ ինչ-որ մեկը անիծում է ձեզ, նույն ձևով մի՛ պատասխանեք, այլ փոխարենը աղոթեք և օրհնեք նրանց: Եվ ինչպես ուզում եք, որ մարդիկ ձեզ անեն՝ նույնպես էլ դուք արեք նրանց:

Ձեզ դեռևս հին ժամանակներից սովորեցրել են սիրել ընկերներին և ատել թշնամիներին, բայց ես ասում եմ, որ պետք է սիրեք ձեր թշնամիներին և բարիք անեք նրանց:
Ի՞նչ կասես սրա մասին. «*Աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ*»:

Եթե մեկը
ապտակի ձեզ, երեսի մյուս
կողմն էլ դարձրեք նրան: Դաժան
մի՛ եղեք: Եթե կողքինդ բաճկոնի
կարիք ունի, և դու երկուսն ունես,
մեկը տո՛ւր նրան: Եթե քաղցած է,
կերակրի՛ր: Քո երկնային հայրն էլ,
որ տեսնում է դա, կօրհնի քեզ:

Մատթեոս 5.8, 21-22, 38-44, 6.12, Մարկոս 1.34, Ղուկաս 4.40

Լսել եք, որ ասվեց մի՛ **շնացիր**, բայց ես ասում եմ, եթե որևէ կնոջ **նայես ցանկանալու** համար, արդեն քո սրտում **շնացել ես:**

Կրոնական առաջնորդներն արտաքուստ շատ լավն են երևում, բայց ներսից նրանք լցված են չարությունով:
Նրանք ասես սպիտակ ներկված գերեզմաններ լինեն: Արտաքուստ լավ տեսք ունեն, բայց ներքուստ լցված են մեռած ոսկորներով: Եթե դուք նրանցից ավելի արդար չլինեք, չեք մտնի իմ արքայության մեջ:

Լայն է ճանապարհը, որ տանում է դեպի կործանում, և շատերն են դրանով գնում:
Ես եմ դուռը, որ երկինք է տանում: Եթե մտնեք ինձանով, հավիտենական կյանք կունենաք: Եթե այլ ճանապարհով գնաք, կմեռնեք ձեր մեղքերի մեջ:

Ինչո՞ւ բժշկեցիր շաբաթ օրը: **Մովսեսը պատվիրել** էր **ոչինչ** չանել շաբաթ օրը:
Իմ հայրն ինձ ուղարկել է այս աշխարհի իր գործերն անելու: Ես միայն անում եմ այն, ինչ նա ասում է ինձ:
Դու քեզ հավասարեցնում ես Աստծուն: Դա Աստծո դեմ **հայհոյություն** է և արժանի **մահվան:**

Երկնային հոր կամքն է, որ բոլորը երկրպագեն և պատվեն որդուն, ինչպես հորը:
Կգա ժամանակ, երբ մեռելները կլսեն իմ ձայնը և կկենդանանան: Ոմանք կտեղափոխվեն դեպի հավիտենական կյանք, իսկ ոմանք էլ՝ դեպի հավիտենական տանջանք:

Մատթեոս 5.27-28, 7.13-14, 28-29, 23.27-28,
Հովհաննես 5.18-19, 23, 29-30, 14.6

*հին հրեական աղանդի անդամ, ով խստորեն հետևում էր հրեական ավանդույթներին

Մինչև վերստին չծնվես, չես կարող մտնել Աստծո արքայությունը:
Վարդապե՛տ, մենք՝ հրեաների առաջնորդներս, գիտենք, որ դու Աստծուց ես ուղարկված, որովհետև ոչ ոք չէր կարող անել այն, ինչ դու ես անում, եթե Աստված նրա հետ չլինի:

Դու ասում ես, որ պետք է ինձ երկրորդ անգամ մտնել մորս արգանդը և նորի՞ց ծնվել:
Ո՛չ, մարմնից ծնվածը մարմին է, իսկ հոգուց ծնվածը հոգի է: Նիկոդեմո՛ս, լսիր, թե ինչ եմ ասում: Դու պետք է վերստին ծնվես:
Ինչպե՞ս պետք է վերսին ծնվել:

Ինչպես Մովսեսն անապատի մեջ օձը բարձրացրեց, այդպես էլ ինձ կբարձրացնեն:
Հոգևոր ծնունդը, որի մասին խոսում եմ, քամու նման խորհրդավոր է, բայց մենք միևնույն է վերապրում ենք այն: Դու պետք է վերստին ծնվես, եթե ցանկանում ես մտնել Աստծո արքայությունը:
Թվոց 21.5-9, Հովհաննես 3.1-14

Բայց նրանք մահանում էին օձի խայթոցից, որովհետև մեղանչել էին Աստծո դեմ: Երբ նայում էին պղնձե օձին, անմիջապես բժշկվում էին:


INRI
Նույնիսկ հիմա բոլոր մարդիկ **մահանում** են **մեղքի** «խայթոցից»: Բայց այս անգամ ինձ կբարձրացնեն, որպեսզի բոլորը տեսնեն: Ինչպես անապատում մարդիկ փրկվեցին ուղղակի նայելով պղնձե օձին, նույնպես էլ մեղքի մեջ մահացողները **կփրկվեն**, եթե ինձ հավատան:

Որովհետև Աստված այնպես սիրեց այս *աշխարհը*, որ իր *միածին որդին տվեց,* որ ամեն նրան հավատացողը չմեռնի, բայց ***հավիտենական*** կյանք ունենա: Նա, ով հավատում է ինձ, հավիտենական կյանք ունի, բայց ինձ չհավատացողն արդեն իսկ դատապարտված է:
Հովհաննես 3.14-18

Փաստորեն, մեղքի դեմ միակ դեղամիջոցը վերստին ծնունդն է, և քեզ պատրաստվում են փայտից կախել, որ փրկությունը հայտնվի:
Ե՞րբ կլինի վերստին ծնունդը:
Երբ ինձ կբարձրացնեն բոլորի աչքի առաջ:

Սամարացիներն ապրում էին Երուսաղեմի և Գալիլեայի միջև: Իսրայելացիներն ամեն կերպ խուսափում էին սամարացիներից, նույնիսկ նրանց երկրի միջով չէին անցնում, քանի որ նրանց պիղծ էին համարում: Մի օր Հիսուսը զարմացրեց իր աշակերտներին՝ ասելով.
Եկեք անցնենք Սամարիայի միջով:
Հոր կամքն է, որ ես գնամ Սամարիա:
Տե՛ր, նրանք անմաքուր և տգետ մարդիկ են: Նրանք աղքատ են և անբարոյական:

Կեսօրին նրանք հասան քաղաքից ոչ հեռու գտնվող ջրհորի մոտ:
Գնացեք քաղաք և ուտելու բան բերեք: Ես ձեզ այս ջրհորի մոտ կսպասեմ:
Մենա՞կ ես մնալու այստեղ:
Այո՛, պետք է հորս գործը կատարեմ:

Հիսուսը հոգնած էր, քաղցած և ծարավ: Չնայած ժամը չէր եկել, որ կանայք ջուր բերելու գնային, բայց մի սամարացի կին եկավ ջրհորի մոտ:

Հովհաննես 4.1-8

Ինձ խմելու ջուր կտա՞ս քո սափորից:
Դու հրեա ես, ինչո՞ւ ես ինձանից խմելու ջուր ուզում, որ ես մի սամարացի կին եմ: Ես կարծում էի հրեաները մեզ հետ որևէ առնչություն չունեն:
Եթե դու իմանայիր Աստծո պարգևը և թե ով եմ ես, դու ինձ կխնդրեիր, և ես քեզ **կենդանի ջուր կտայի:**

***Դու** ինձ* ջո՞ւր կտաս: Դու նույնիսկ սափոր չունես, և ջրհորը խորն է: Որտեղի՞ց ես կենդանի *ջրեր հանելու:*
Երբ դու այս ջրհորից ջուր ես խմում, *կրկին ծարավում ես:* Ձուրը, որ քեզ կտամ քո ներսում հավիտենական կյանքի աղբյուր կլինի:
Ուրեմն տուր ինձ, որ խմեմ այդ ջրից և այլևս չծարավեմ:

Գնա՛ և կանչիր **ամուսնուդ,** և ես կպատմեմ այդ ջրի մասին:
Ես ամուսին չունեմ:
Դու **հինգ** ամուսին ես ունեցել և հիմա նա, ում հետ ապրում ես քո ամուսինը չէ:

Անկասկած, դու մարգարե ես, որ գիտես իմ *գաղտնի մեղքը*:
Հրեաները երկրպագում են **Երուսաղեմում**, իսկ մեր հայրերը այս սարի վրա: Ո՞ր սարն է երկրպագելու համար ճիշտ տեղը:

Աստված **հոգի է:** Աստծուն չեն երկրպագում մարդու ձեռքով շինված *տաճարներում:* Աստված փնտրում է մարդկանց, ովքեր կհավատան ճշմարտությանը և հոգով կերկրպագեն նրան:
Մենք գիտենք, որ **Մեսիան** պետք է գա, և, երբ նա գա, կհայտնի մեզ ***ճշմարտությունը:***

Դու հիմա խոսում ես Մեսիայի հետ:

Հիսուսը Սամարիայում ևս երկու օր մնաց և մարդկանց սովորեցնում էր Աստծո խոսքը:

Հովհաննես 4.7-29, 40


Մի անգամ Հիսուսն իր աշակերտների հետ կանգնած էր մի սարալանջի վրա՝ Գալիլեայի դիմաց:
Երբ գումար եք տալիս մարդկանց, մի՛ արեք դա բոլորի աչքի առաջ, որ դուք երևաք:
Երբ դուք հոգևոր գործունեություն եք անում, որպեսզի մարդահաճո լինեք և ուրիշները գովեն ձեզ, դուք Աստծուց վարձք չեք ստանա: Ուրեմն, թող ձեր աջ ձեռքը չիմանա, թե ձախն ինչ է անում:
Հազարավոր մարդիկ եկել էին քաղաքներից, որ լսեն նրա խոսքը:


Երբ աղոթք եք անում, մի՛ եղեք կրոնական կեղծավորների նման, որ աղոթում են բոլորի աչքի առաջ, որ իրենց նկատեն:
Եվ, երբ աղոթք եք անում, թո՛ղ **կրկնողություն** չլինի, ինչպես անում են ձեր հոգևոր առաջնորդները, որոնք փորձում են հասարակությանը ցույց տալ իրենց նվիրվածությունը:


Մի՛ վատնեք ձեր ամբողջ ժամանակն ու կարողությունը ***հարստություն դիզելու համար:*** Հարուստներն ավելի ***շատ խնդիրներ*** ունեն, քան որևէ մեկը և նրանց համար դժվար է մտնել երկնքի արքայությունը, որովհետև իրենց հարստությունն ավելի շատ են սիրում:
Գանձեր մի՛ դիզեք *այս աշխարհում,* այլ դիզեք ***երկնքում***, որտեղ այն հավիտյան կմնա: Չեք կարող երկու տիրոջ ծառայել, որովհետև մեկին կատեք, և մյուսին կսիրեք:


Վարդապե՛տ, արդեն ուշ է, և այս մարդիկ ամբողջ օրը մեզ հետ էին: Հավանաբար ***քաղցած*** կլինեն: Դժվար կլինի սնունդ հայթայթել, որովհետև քաղաքից հեռու են:
Դու պետք է արձակես նրանց, որ գնան սնունդ գտնեն:

Վարդապե՛տ, վերցրու իմ ճաշը: Մայրիկս պատրաստել էր երկու փոքր ձուկ և հինգ կտոր հաց:

Մատթեոս 6.1-7, 19-21, 14.15

Տեսնենք, տեսնենք: Կարծես թե ձուկ և հաց ունենք:
Վերցրո՛ւ **տասներկու մեծ կողով** և պատրաստվիր սնունդ մատակարարելուն:
Բայց, վարդապե՛տ, սա նույնիսկ բավարար չէ մեկ մարդուն կերակրելու համար, առավել ևս ***5000-ին:***

Մեր Տե՛ր
և տիեզերքի
թագավոր,
օրհնի՛ր այս
հացը:


Ի՞նչ է պատրաստվում անել՝ մի քանի հացն ու ձուկը լցնելով այդ մեծ կողովի մեջ:

Մատթեոս 14.19-21, Ղուկաս 9.16-17


Փա՜ռք Աստծուն:
Նա մեզ երկնքից կերակուր է մատակարարում, ինչպես **Մովսեսն** էր անում:
Մայրիկս չի հավատա սրան:

Մարդիկ կողոպտներից ձուկ և հաց էին վերցնում: Ուտելիքն անընդհատ բազմապատկվում էր:

Վարդապե՛տ, բոլորը կշտացան, բայց կողոֆները դեռ լիքն են: ***Մենք չենք կարողանում դատարկել դրանք:***
Հավաքեք այն, ինչ մնացել է և նավակով ծովի այն կողմն անցեք: Ես ավելի ուշ կմիանամ ձեզ: Ես պետք է սար բարձրանամ *աղոթք անելու:*

Հիսուսը միայնակ սար բարձրացավ, իսկ աշակերտները նավակով ծովի մյուս ափն անցան:
Հիսուսը հաճախ էր միայնակ սար բարձրանում աղոթք անելու:
Մատթեոս 14.20-23

Երբ աշակերտները հասան ծովի մեջտեղը, ուժեղ քամի բարձրացավ: Նրանք շատ վախեցան, քանի որ կարծեցին, թե խորտակվում են:
Ես երբեք այսքան ուժեղ քամի չեմ տեսել:
Մենք չենք դիմանա:

Մենք կխորտակվենք:
Տեսե՛ք, այնտեղ ջրի վրա ինչ-որ բան կա:

Ուրվական է
Ուրվական է
Մարդ է **քայլում ջրի վրայով:**

Մատթեոս 14.24-29

Քայլում եմ, տե՛ր:
Ո՛չ, Պետրո՛ս:

Պետրոսը իսկապես
քայլեց ջրի վրայով
դեպի Հիսուսը:

Երբ Պետրոսը հայացքը
շեղեց Հիսուսից և նայեց
ալիքներին, շատ վախեցավ:

Մատթեոս 14.29-30

Պետրո՛ս, դու սկսեցիր կասկածել:

Հիսուսը, Պետրոսի հետ քայլելով, մոտեցավ նավակին:
Պետրո՛ս, դու քայլեցիր ջիր վրայով:

Մատթեոս 14.31-33, Մարկոս 4.38-41

Հեռացի՛ր ինձանից, Տե՛ր, որովհետև ***մեղավոր*** մարդ եմ:
Իսկապես, դու ***Աստծո որդին ես:***
Իմ ***տեր*** և իմ ***Աստված:***
Իսրայելի ***Քրիստոսը:***

Որոշ ժամանակ անց...
Այս տոնի օրերին այստեղ այնքան մարդաշատ է: Այստեղ ամբողջ երկրից և նույնիսկ հեռավոր Հռոմից և Եգիպտոսից մարդիկ են հավաքվել:
Եկեք գնանք ավազանի մոտ:

Ես նրան միշտ այստեղ նստած եմ հիշում :

Ցանկանո՞ւմ ես բժշկված լինել:
Մեկը չունեմ, որ ինձ օգնի:

Հովհաննես 5.1-8

Ինչպիսի **դաժան կատակ**: Խեղճ մարդը **38** տարի կաղ է եղել:
Այսօր մեր սուրբ շաբաթն է: Նա իրավունք չունի մեր անդորրը խանգարելու:

Լսել եմ աշխատանքներ են տարվում նրան հեռացնելու համար: Նա արդեն շատ է ուշադրություն գրավում:
Իրեն ո՞ւմ տեղն է դրել այս Հիսուսը: Կարծում է թե Մեսի՞ան է:
Այո՛, նա համոզել է մարդկանց, որ կարող է **հրաշքներ** անել:

Նրա ոտքե՞րը:
Դրանք աճում են:

Նա վեր է կենում:
Դա անհնար է:

Փա՜ռք **Աստծուն:** Վերջապես այսքան տարի անց:
Հիսուսը ***Մեսիան է:***

Ինչո՞ւ բժշկեցիր **շաբաթ** օրը:
Մովսեսը պատվիրել է մեզ **հանգստանալ** շաբաթ օրը:
Շաբաթ օրը կարելի ձեր եզին ջրհորից դուրս հանել, բայց ես օրե՞նքն եմ խախտում, որ շաբաթ օրը բժշկում եմ մարդկանց:
Իմ հայրը բժշկում է շաբաթ օրն էլ, և ես անում եմ այն, ինչ նա է անում:
Ղուկաս 14.5-6, Հովհաննես 5.9-17

Նա ասում է, որ **Աստված** իր **հայրն** է: Նա իրեն **Աստծուն հավասար** է անում:
Բռնե՛ք դրան: Նա պետք է քարկոծվի:
Սպանե՛ք նրան:

Դուք ուզում եք **սպանել** նրան, *որովհետև* բժշկել է շաբաթ օ՞րը:
Նա մեր օրենքի դեմ է խոսում:
Լսեք, թե նա ինչ է ասում:
Նա օրենքի դեմ ***ոչինչ*** չասաց:

Լսե՛ք ինձ: Դուք զարմանում եք, որովհետև այս մի հրաշքը գործեցի: Դուք սրանից մեծ հրաշքներ կտեսնեք: Իմ հայրը կարող է հարություն տալ մեռելներին, և այդ նույն իշխանությունը ինձ է տվել: Հայրն ինձ **կատարյալ իշխանություն** է տվել այս աշխարհի վրա:
Եթե ինձ չեք ընդունում, ուրեմն Աստծուն էլ չեք ընդունում: Ճշմարիտ ասում եմ, նա, ով հավատում է ինձ, հավատում է նաև ինձ ուղարկողին, և հավիտենական կյանք ունի:
Ինչպե՞ս կարող ես հավիտենական կյանք շնորհել:

Կգա ժամանակ, երբ մեռելները կլսեն իմ ձայնը և դուրս կգան գերեզմաններից: Նրանք, ովքեր բարիք են գործել, կտեղափոխվեն դեպի հավիտենական կյանք, բայց չարիք անողները կգցվեն կրակի լճի մեջ հավիտենական տանջանքի համար:
Սա ***հայհոյություն*** է: Ոչ ոք չի կարող հարություն տալ: Միայն ***Աստված*** կարող է հավիտենական կյանք շնորհել:
Հովհաննես 5.18-29

Դուք չեք հավատում ինձ, բայց ***Հովհաննեսը*** *կանխատեսել* է իմ գալը, ինչպես նաև սուրբ գրությունները: Ուսումնասիրեք գրվածքները, քանի որ շատ մարգարեներ խոսել են իմ մասին:
Մի՛ մտածեք, որ կմեղադրեմ ձեզ Աստծո առաջ: Մովսեսի օրենքները, որ չկարողացաք պահել, ձեր դեմ վկայություն կլինեն:
Սա այն մարդն է, որին փորձում են սպանել, բայց նա համարձակ խոսում է, և նրանք ոչինչ չեն ձեռնարկում: Իշխանավորները գիտե՞ն, որ նա ճշմարիտ Քրիստոսն է, Իսրայելի Մեսիան:
Դպիրները մեզ սովորեցրել են, որ մենք չենք իմանա որտեղից է եկել Մեսիան, բայց գիտենք, որ նա գալիլեացի հյուսնի որդի է:

Դուք ասում եք, որ գիտեք ինձ և գիտեք, թե որտեղից եմ եկել: Ես **ինքս** չեմ եկել այս աշխարհ: Իմ հայրն է ինձ ուղարկել, բայց դուք նրան չեք ճանաչում: Ես ճանաչում եմ նրան, և նա է ինձ ձեզ մոտ ուղարկել:
Ինչպե՞ս նա լսեց ինձ:

Նա ամեն բան գիտի:
Նա Մեսիան է, որ պետք է գար:
Մի՞թե սպասում էիք, որ Մեսիան ավելի շատ հրաշքներ կգործեր, քան այս մարդը:

Հովհաննես 5.30-39, 45, 6.42-43, 7.25-32, 40-41

Երանի նրանց, որ **ծարավ** են **արդարության**, որ նրանք կկշտանան:
Եթե մեկը ծարավ է, թող գա և խմի ինձանից: Սուրբ Հոգին նրա մեջ կլինի ինչպես ջրի աղբյուր, որ հոսում է դեպի հավիտենական կյանք:
Երանի **խաղաղություն** անողներին, որ նրանք Աստծո որդիներ կկոչվեն: Սիրեք ձեր **թշնամիներին** և օրհնեք նրանց:
Նա նման չէ հանցագործի:
Ասում են, որ նա 4000 տարվա մարգարեությունների պատասխանն է:

Ինչո՞ւ նրան այստեղ չբերեցիք:
Նա ձեր առջև կանգնած էր:
Ինչո՞ւ նրան ***չբռնեցիք:***
Ոչ ոք երբեք նրա նման չի խոսել:
Նա խոսում է սիրո և ներողամտության մասին:
Նա ձեզ էլ է խաբե՞լ: Կառավարիչներից և փարիսեցիներից որևէ մեկը հավատացե՞լ է նրան: Այս Հիսուսը պետք է ***մեռնի:***

Նիկոդեմոսը, որ գիշերով այցելել էր Հիսուսին, խոսեց:
Արդյո՞ք մեր օրենքը դատապարտում է որևէ մեկին, նախքան նրան լսելը:
Նիկոդեմո՛ս, դու նույնպե՞ս նրա հետևորդներից ես: Կարդա գրվածքները, այնտեղ ասվում է, որ Մեսիան պետք է գա Բեթլեհեմից, ոչ թե Գալիլեայից, և նա պետք է Դավթի որդին լինի:
Մատթեոս 5.6, 9, Հովհաննես 4.14, 7.45-52

Նա իր ստերով խաբում է հասարակ ժողովրդին:
Ինչո՞ւ նրա մոտ չենք ուղարկում լավագույն փաստաբաններից մեկին, որ շփոթեցնի իր իսկ խոսքերի մեջ:
Կարծես թե նա ամեն ինչի համար պատասխան ունի:

Ես ճանաչում եմ մի **հրաշալի** և **անխիղճ** փաստաբանի:

Փաստաբանը եկավ Հիսուսին փորձելու:
Օրենքն ի՞նչ է ասում:
Վարդապե՛տ, ի՞նչ անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ:
Սիրի՛ր քո տեր Աստծուն քո ամբողջ սրտով, մտքով և զորությամբ և սիրիր քո մերձավորին քո անձի պես:

Ահա և քո պատասխանը: ***Սերը*** օրենքի կատարումն է: Եթե սիրես քո մերձավորին քո անձի պես, դրանով կհաճեցնես Աստծուն:
Բայց **ո՞վ** է իմ մերձավորը: Ուզում ես ասես բոլորի՞ն, նույնիսկ հեթանոս հռոմեացիների՞ն:
Մի պատմություն կպատմեմ քեզ:

Ղուկաս 10.25-31

Ղևտացին էլ, *որ տաճարում* ծառայող էր, անցավ այդտեղով և, տեսնելով վիրավոր մարդուն, չօգնեց նրան:
Ի՞նչ օգուտ, եթե ասես սիրում ես, բայց գործերով ցույց չտաս: Եթե դու չես սիրում քո մերձավորին, ուրեմն Աստծուն էլ չես սիրում:

Հետո **սամարացին** է անցնում այդ նույն տեղով: Մի մարդ, ով **արհամարհված** է հրեաների կողմից և **անմաքուր** է համարվում: Երբ նա նկատեց վիրավոր մարդուն՝ ընկած ճանապարհի եզրին, չմտածեց, որ նա հրեա է:
Սամարացին **խղճաց** այդ մարդուն և օգնեց նրան:

Սամարացին լվաց և
փաթաթեց այդ մարդու վերքերը:
Նա իր սերը ցույց տվեց գործերով,
ոչ թե խոսքերով:

Հետո սամարացին այդ մարդուն դրեց էշի վրա և տարավ իջևանատուն, որտեղ նա կհանգստանար և կառողջանար:
Ես քեզ բռնել եմ: Շուտով դու քո անկողնում կլինես:

Ղուկաս 10.32-35

Դու ինձ հարցրեցիր ով է քո ընկերը: Հիմա ասա այս երեքից ո՞վ ընկեր եղավ վիրավոր մարդու համար :
Իհարկե նա, ով ողորմություն ցույց տվեց:
Հիասքանչ է:

Ուրեմն գնա և այս **սամարացու** նման վարվիր. սիրիր մերձավորիդ:

Հիմարի՛ մեկը: Դուրս հանիր նրան այստեղից քանի դեռ Հիսուսը չի վերափոխել նրան:
Ի՞նչ խելահեղ ուսմունք է սա: Դա գործնական չէ: Որոշ մարդիկ պարզապես չեն արձագանքի սիրելուն:

Մատթեոս 5.43-44,
Ղուկաս 10.36-37



Գլուխ 10

Հրաշքներ և առակներ

Մեկ այլ վայրում...
Արդեն մի քանի օր է հաց չեմ կերել:
Դու կմեռնես, եթե առնետներ և միջատներ ուտել չսովորես: Միայն այդպես կարող ես ողջ մնալ:
Կարծում եմ ***առաջինը ես կմեռնեմ:*** Մեկ տարի առաջ ես հարուստ և *հարգված* մարդ էի: Իսկ հիմա ինձ նայեք:
Դու այլևս հարգված մեկը չես, այլ պարզապես մի ***վտարված*** բորոտ:

Սկզբում ես հույս ունեի, որ մի օր կլավանամ և կվերադառնամ կնոջս և ընտանիքիս մոտ: Բայց ես այստեղ եմ ավելի քան տաս տարի և չեմ տեսել, որ որևէ մեկը բժշկվի և վերադառնա հասարակության մեջ:


Սկզբում կինս երեխաներիս հետ այցելում էր ինձ, հեռվից տեսնում և խոսում էի նրանց հետ, բայց նրանք սկսեցին ուշ-ուշ այցելել ինձ: Երեխաներս հիմա մեծացել են և դժվար ***ճանաչեն*** ինձ, եթե տեսնեն: ***Սա ավելի վատ է, քան մեռնելը:***

Դե բավակա՛ն է *խղճաս ինքդ քեզ:* ***Ոչ ոք չի*** մտածում քո մասին, նույնիսկ ***Աստված:*** Արի՛ գնանք տեսնենք ինչ կարող ենք մուրալ ուտելու համար:

Մենք գնում ենք դեպի գլխավոր ճանապարհ, տեսնենք կարող ենք մի փոքր խղճահարություն առաջացնել մարդկանց մոտ:
Գուցե ավելի անվտանգ կլինի, եթե միասին գնանք:

Ես ճանապարհին մարդիկ եմ տեսնում:

Զգո՞ւյշ: Նորից այն տղաներն են:
Դո՛ւրս այստեղից, **կեղտոտ** բորոտներ: Գնացեք ուրիշ տեղ և այնտեղ **մեռեք:**
Կեղտո՛տ մարդիկ: Աստված պատժում է քեզ:
Վազի՛ր, վազի՛ր

Անմաքուր, անմաքուր, մենք անմաքուր ենք:
Բորոտներ են: Չթողնե՛ս մոտենան քեզ, հնարավոր է դու էլ վարակվես:

Ողորմեք մեզ:
Մի կտոր հաց չէի՞ք տա ամեն մեկիս:
Տո՛ւր նրանց մի բան, թող հեռանան:
Հեռո՛ւ գնա: **Դու անմաքուր ես**:

Հեռու կանգնեք, և մենք այն գետնին կդնենք:
Հիմա մի՛ մոտեցեք, սպասեք ես առաջինը հեռանամ նոր:

Հա՜ց
Ինձ էլ տվեք:
Ուտելի՞ք
Ամենը մի՛ վերցրու:

Սա իմն է:
Հե՛յ, խոզ
Հա՜ց, հա՜ց
Աստված իմ

Մի խումբ մարդիկ են այս կողմ գալիս:
Մենք պետք է ուշադիր լինենք, նրանք շատ են:
Եվ բոլորը տղամարդ են:


Նազովրեցի ***Հիսուսն*** է: Ես մինչև հիվանդանալս նրան մեկ անգամ հանդիպել եմ: Նա ***բժշկում*** է մարդկանց:
Նա պնդում է, որ Աստված է ուղարկել իրեն: Ասում է, որ ինքը և Աստված մեկ են: Ես տեսել եմ, թե նա ինչպես է բժշկում կույրին և կաղին:

Հիսո՛ւս, օգնիր մեզ:
Վարդապե՛տ, նրանք **բորոտներ** են:
Թույլ մի՛ տուր, որ մոտենան քեզ:

Ի՞նչ եք ուզում, որ անեմ:
Ողորմիր և բժշկիր մեզ:
Եթե կամենաս, ***կմաքրես*** ինձ:

Մի՛ դիպչիր ինձ:
Ամեն բան լավ է: Գնացեք տաճար և ցույց տվեք ձեզ քահանային: Նա կտեսնի, որ դուք սրբվել եք և թույլ կտա ձեզ վերադառնալ ձեր ընտանիքներին:

Նա ասաց, որ մենք *սրբված ենք:*
Նրանք մեզ կվտարեն դեռ տաճարին չմոտեցած:
Ես անելու եմ այն, ինչ նա ասաց:
Ես գալիս եմ քեզ հետ:
Ղուկաս 17.11-14

Հիսուսն ասաց, որ մենք բժշկվել ենք:
Ես ավելի լավ եմ զգում ինձ:

Մենք փոխակերպվում ենք:

Իմ մաշկը բժշկվեց:
Հիսուսը բժշկեց: Դու սրբված ես:
Դու այլևս տգեղ չես:
Գնամ գտնեմ կնոջս:

Ղուկաս 17.14-19

Մի մարդ հարցրեց Հիսուսին, արդյոք շատերն են ժառանգելու հավիտենական կյանքը: Հիսուսը պատասխանեց.

Ձանք արեք մտնել նեղ դռնով, որովհետև շատերը կփափագեն կյանք մտնել, բայց չի հաջողվի: Երբ դատաստանի օրը գա, շատերը կաղաչեն Աստծուն՝ ասելով. «Տե՛ր, ես քոնն եմ եղել: Ես հոգևոր մարդ եմ եղել: Ես ծոմ եմ պա*հել, աղոթ*ել եմ: Ես զոհաբերություններ եմ արել եկեղեցու համար: Քո անունով մարգարեացել եմ և դևեր եմ քշել»:

Եվ ես կասեմ նրանց. «Ես ձեզ չեմ ճանաչում, ինձանից դեն գնացեք, ով անօրենություն գործողներ: Դուք կգցվեք հավիտենական կրակի մեջ, որտեղ կլինի լացը և ատամների կրճտոցը»:

Դա մի տեղ է, որտեղ նրանց հոգիները երբեք չեն մեռնում, և կրակն երբեք չի վերջանում: Նրանց տառապանքի ծուխը հավերժ պետք է բարձրանա:

Մատթեոս 7.13-14, 22-23,
Հայտնություն 14.11

Հիսուսը մեկ այլ պատմություն պատմեց.
Մի հարուստ մարդ կար, ով թանկարժեք հագուստներ էր հագնում և լավագույն ուտելիքն էր ուտում: Նա չար մարդ չէր, ազնիվ էր ու արդար, բայց միայն իր մասին էր մտածում:
Նա **գումարներ** էր դիզել և այդպես հարստացել:

Վերցրո՛ւ կերակուրիս մնացորդները և տուր մուրացկան Ղազարոսին, ով դռան առաջ պառկած է: Ես բարեգութ և կամեցող մարդ եմ:
Այո՛, տե՛ր, վստահ եմ նա կգնահատի դա:

Իմ տերն ասաց, որ այս մսացորդները քեզ տամ:
Փա՜ռք Աստծուն: Աստված իր զավակների համար հոգ է տանում: Սա ավելին է, քան ես արժանի էի: Իմ կողմից ***շնորհակալություն*** հայտնիր տիրոջդ:
Ես շատ հարստություն ունեմ, ուստի ավելի մեծ շտեմարանների պետք է կառուցեմ, որ տեղավորեմ ամենը:

Ղուկաս 16.19-22, Եբրայեցիս 9.27

Երբ հարուստ մարդու թաղման թափորը լքում էր կալվածքը, նրանք նկատեցին, որ մուրացկան Ղազարոսը նույնպես մահացել է:
Սա ծեր մուրացկան **Ղազարոսն** է: Նա, նույնպես երեկոյան մահացել է: Նրա դեմքն այնքան *խաղաղ է:*
Ղազարոսի մարմինը սայլով տեղափոխեցին քաղաքից դուրս, որտեղ աղքատներին էին թաղում: Պատշաճ թաղում չեղավ, և ոչ ոք չսգաց նրա համար:

Բայց հրեշտակները եկան և Ղազարոսին դրախտ տարան:
Օոո՜, ինչ հաճելի է: Երբեք չէի մտածի, որ մահանալն այսքան զվարճալի կլինի:
Մեր եղբայր, Ղազարո՛ս, բարի ***գալուստ տուն:*** Դու այլևս քաղցած չես լինի, և մարմինդ չի ցավի: Ե՛կ, քեզ համար սեղան ենք պատրաստել:

Նա լավ մարդ էր: Երբեմն կարող էր խիստ լինել նրանց հետ, ում սիրում էր, բայց մենք նրան միշտ կհիշենք որպես իր երկիրը սիրող և արդար մարդու:
Նա իր վարձքը կստանա: Թո՛ղ հոգին խաղաղությամբ հանգչի:
Հարուստ մարդուն պատշաճ կերպով թաղեցին, և բոլորը, որ սիրում էին նրա փողերը, եկել էին նրա ունեցվածքից մի բան ստանալու համար:

Ղուկաս 16.22

Օգնությո՞ւն: Ինչ-որ մեկդ ***օգնեցե՞ք:*** Ես այստեղ կրակի բոցի մեջ եմ:

Հա՛յր **Աբրահամ, ողորմիր** ինձ: Այնտեղ տեսնում եմ Ղազարոսին: Ուղարկիր նրան, որ իր մատի ծայրը թրջի ջրով և իմ լեզուն հովացնի, որովհետև այս կրակի բոցի մեջ **տանջվում** եմ:
Որդի՛ս, ես քեզ կօգնեի, եթե կարողանայի, բայց մեր միջև մեծ անդունդ կա՝ կրակով լցված: Ոչ մենք կարող ենք գալ քեզ օգնել, ոչ էլ դու կարող ես մեր կողմն անցնել:
Ուրեմն ուղարկիր Ղազարոսին իմ հոր տուն, որ հինգ եղբայրներիս վկայություն տա, որ նրանք էլ չգան այս **տանջանքի տեղը:**

Ղուկաս 16.22-31

Տղանե՜ր, չե՞ք ցանկանում մի փոքր զվարճանալ: Իմ սերը թանկ չի արժենա:
Ուսուցի՛չ, ուշադրություն մի՛ դարձրու նրա վրա: Նրա նմանների համար արդեն շատ ուշ է:

Սուրբ գրությունն ասում են. «Մի՛ **շնացիր**»:
Ես կրոնավոր կին եմ, ես հավատում եմ Աստծուն:
Սատանան խաբել է քեզ: Քո վերջը կրակի լիճն է:

Դու լսեցիր ընկերդ ինչ ասաց: Ինձ համար արդեն շատ ուշ է: Ես փոքր տարիքից քնել եմ տղամարդկանց հետ:
Աստծո համար երբեք ուշ չէ: Եթե փնտրես նրան, կգտնես: ***Նա կների*** քո մեղքերը և կվերականգնի կյանքդ:

Իմ հոգին սատանայինն է, բայց ես կտայի Աստծուն, եթե նա...նա... նա...

Ելից 20.14, Ղուկաս 8.2, 1 Հովհաննես 1.9

Վաա՜յ
Սատանա՛, դո՛ւրս եկ նրա միջից:

Ես քեզ *հրամայում* եմ դուրս գալ և այլևս չվերադառնալ:
Հիսուսի հրամանով յոթ դև դուրս եկավ այդ կնոջ միջից:

Նրանք դուրս եկան:
Ո՞վ ես դու:
Ես Հիսուսն եմ:

Ղուկաս 8.2, 11.24-26

Վարդապե՛տ, ես տեսա, թե ինչ կատարվեց: Դա ուղղակի հրաշալի է: Մեր կրոնական առաջնորդները կեսօրվա ժամերին անարգում էին Մարիամ Մագդաղենացուն,
բայց ոմանք այցելում էին նրան գիշերները: Դու այս կնոջը նոր կյանք շնորհեցիր:
Մենք կհետևենք քեզ:
Դու և քո աշակերտները կգա՞ք իմ տուն միասին ճաշենք: Ես կցանկանայի, որ իմ ընկերներից ոմանք լսեն սրա մասին:

Հիսո՛ւս, ասա մեզ ինչպե՞ս կարող է մարդ այս կաշառակեր հասարակության մեջ *ազնիվ և մաքուր* մնալ: Մենք սովից կմեռնեինք, եթե օրենքը մի *փոքր չխախտեինք:*
Հոգ մի՛ արեք այն բաների համար, որ ***փչանում*** են, այլ այնպիսի բաների, որ ***հավիտյան*** են: Ձեզ համար գանձեր մի՛ դիզեք, այլ մտածեք ինչպես կարող եք *ուրիշի համար օրհնություն լինել:*

Կյանքը ***հագուստից*** և ***կերակուրից*** ավելին է: Եթե Աստված հագցնում է դաշտի շուշաններին, ձեզ համար էլ հոգ կտանի:
Գալիս է ժամանակ, երբ յուրաքանչյուրը պետք է կանգնի Աստծո դատաստանի առաջ և հաշիվ տա իր ամեն գործերի համեմատ՝ լինի **լավ**, թե **վատ:**

Մի՛ եղեք ձեր կրոնական առաջնորդների նման, որ քարոզում են մի բան, բայց անում են լրիվ ուրշ բան:
Եթե նրանցից ավելի արդար չգտնվեցիք, երբեք չեք մտնի երկնքի արքայությունը:

Ժողովող 12.14, Մատթեոս 23.25, 6.19-21, 25, 28-30, 12.36, Ղուկաս 15.1-3

Մի մարդ երկու որդի ուներ: Փոքր տղան ըմբոստ էր և ցանկանում էր ապրել մարմնական հաճույքներով:
Ինձ դուր է գալիս այս պատմությունը:

Հայրի՛կ, եթե հիմա քո ունեցվածքից իմ բաժինն ինձ տաս, ես կգնամ քաղաք՝ բախտս որոնելու:
Եվ նա պահանջեց իր ժառանգությունը:
Բայց, որդի՛ս, իմ ամբողջ ունեցվածքը քոնն է: Ես շուտով կմեռնեմ, և դու և եղբայրդ կժառանգեք ամենը: Դուք մինչև կյանքի վերջ ապահովված կլինեք: Մենք շատ ոչխարներ և եզներ ունենք: Մեր դաշտերն ամեն տարի առատ բերք են տալիս: Մենք շատ ծառաներ ունենք և այլն...

Բայց ես ուզում եմ դուրս գամ և աշխարհը տեսնեմ: Ես չեմ ցանկանում դաշտում ապրել և ողջ կյանքս ստրուկի նման աշխատել: Քանի դեռ երիտասարդ եմ, ուզում եմ վայելել կյանքը: Իմ ընկերները...
Քո ընկերները, որ երբեք չեն աշխատել, միայն մտածում են, թե որոնք են ամենաարագավազ ձիերը, լավագույն գինին որն է և ամենահետաքրքիր կանայք ովքեր են:

Կյանքից ի՞նչ եք հասկանում: Դուք միշտ փակված եք այս հին կալվածքում: Ես իմ ժառանգությունն եմ ուզում: Ես գնում եմ քաղաք՝ ինքնուրույն կյանք սկսելու:
Տո՛ւր նրան իր բաժինը: Առանց նրա ավելի լավ կլինի: Միևնույն է, նա իր բաժին գործը չի կատարում:

Ղուկաս 15.11-13

Փոքր որդին...
Ооо՜, այն շատ ավելի շքեղ է, քան ես պատկերացնում էի: Այս բոլոր մարդիկ, և շինությունները: Ահա, թե ինչպիսին է կյանքը:
Ես պետք է մի գեղեցիկ բնակարան գտնեմ:

Այո՛, սա շատ գեղեցիկ է: Ես կվարձեմ այն:
Եթե ինչ-որ բանի կարիք ունենաք, պարզապես զանգահարեք: Մենք ծառայություններ ենք մատուցում ցանկացած ժամի:

Սրանից ավելի ի՞նչ է պետք: Վաղը դուրս կգամ ծանոթանալու մարդկանց հետ:

Ղուկաս 15.13

էէէ՜յ, տես ով է գալիս: Գյուղացի տղա՞ է: Հնարավոր է նա գեղեցիկ լինի, եթե շ նրա դեմքը հնարավոր լիներ տեսնել:
Հե՜յ ընկեր, եթե դու արկածներ ես փնտրում, ավելի լավ է այդ մորուքդ սափրես և գեղեցիկ հագուստ հագնես:

Ա՛յ դու, **սրիկա:** Այս հագուստով շատ լավ տեսք ունես:

Ուրախ եմ, որ եկար ընթրիքին:
Մի՞թե հիմա նա գրավիչ չէ, երբ ազատվել է դեմքի տհաճ մազերից:

Մեր նոր ընկերոջ **կենացը:** Թող նա միշտ հաճույք և ուրախություն վայելի:
...և **սեր:**

Ղուկաս 15.13

Կարո՞ղ ենք քո բնակարան գնալ: Միայն մենք երկուսով:

Երիտասարդ տղան մի քանի ամիս ապրեց շվայտ կյանքով տանից հեռու: Նա շատ ընկերներ ուներ, քանի դեռ փող ուներ:
Օր եկավ, երբ հիմար արկածախնդրությունները սպառեցին նրա գումարները, բայց նա դեռ շատ հարուստ ընկերներ ուներ:

Ինչպե՞ս թե այլևս գումար չունես: Ես կարծում էի դու հարուստ ես:
Ապրուստն այստեղ թանկ արժե, և ես անցած շաբաթ կորցրեցի ամենը՝ խաղադրույքներ անելով: Ես վստահ էի, որ կհաղթեմ և հույս ունեի...

Ուզում ես ասել, որ ոչինչ չունե՞ս: Ինչպե՞ս ես գնելու այն զգեստը, որ խոստացել էիր ինձ:
Ես հույս ունեի, որ քո հայրն ինձ աշխատանքի կընդուներ իր հաստատություններից մեկում:
Աշխատա՞նք:

Ղուկաս 15.13-15


Ինձ չի հետաքրքրում, որ դու հիվանդ ես: Գնա՛ և զբաղվիր խոզերով: Ես կազատեմ քեզ աշխատանքից և ուրիշին կվարձեմ: ***Գնա հիմա՛:***
Այո՛, տե՛ր, հիմա կգնամ:

Այնքան քիչ
են վարձատրում
աշխատանքի համար,
որ անգամ պատշաճ հաց
չեմ կարողանում ուտել:
Պատկերացնում եմ, թե
ինչքան լավ են սնվում իմ
ընկերներ կոչվածները:

Տես ուր եմ հասել:
Ես մրսում եմ, սոված եմ
և հոգնած: Ես խոզերի կերն
եմ ուտում: Իմ հոր ծառաներն
ավելի լավ են ապրում: Եթե
միայն կարողանայի...ո՛չ, ես չեմ
կարող այդքանից հետո հետ
վերադառնալ: Նրանք ինձ
կարհամարհեն:

Ի՞նչ հիմար եմ եղել:
Ի՞նչ կլինի, եթե հետ գնամ
և որպես ծառա աշխատեմ:
Ես ծախսել եմ իմ ամբողջ
ժառանգությունը: Բայց կարող եմ
ծառա լինել, եթե կընդունեն
ինձ:

Ես տուն
եմ գնում:
Ա՜յ հիմար,
դու գումար չունես
և պետք է քայլես
հազարավոր
կիլոմետրեր:

Ղուկաս 15.16-19

Տեսնո՞ւմ ես այն մարդուն, որ գալիս է: Իմ ծեր աչքերը լավ չեն կարողանում տեսնել, բայց քայլվածքից կարող եմ ասել, որ իմ ***կորած որդին է:***
Այո՛, նա մեծացել է *և ավելի* նիհար է երևում, բայց ***հաստատ քո որդին է:***

Որդի՞ս

Որդի՜ս, **որդի՜ս,** դու տուն վերադարձար:
Հայրի՛կ, ես մեղանչեցի քո առաջ...

Ի...և ես
արժանի չեմ քո
որդին կոչվելու...

Ղուկաս 15.20-22

Մորթեք մսացու եզը և խնջույք կազմակերպեք, հրավիրեք մարդկանց, որ տոնենք, քանի որ այսօր ***ցնծության*** օր է:

Այնքան ուրախ եմ, որ բոլորդ այսօր այստեղ եք ինձ հետ միասին ուրախանալու: Որդիս իրեն դեռ թույլ է զգում այն ամեն փորձություններից հետո, որոնց միջով ստիպված է եղել անցնել, բայց առողջ սնվելով շուտով կկազդուրվի: ***Սա իմ կյանքի լավագույն օրն է:***

Մեծ եղբայրը տանից բացակայում էր մի քանի օրով: Երբ նա վերադարձավ, տեսավ, որ տանը խնջույք է կազմակերպված:
Այս ի՞նչ երաժշտության ձայն է լսվում:
Քո եղբայրը **տուն է վերադարձել** շատ խղճալի վիճակում: Նա հիվանդ և աղքատ է: Քո հայրն ուրախ է նրան նորից տեսնելու համար: Շտապիր տուն:
Ես չեմ մասնակցի այս **հիմարությանը:** Նա **մեղավոր** և ամոթալի կյանքով է ապրել:
Ծառան հորը պատմեց այն, ինչ մեծ որդին ասել էր: Եվ հայրը դուրս գնաց նրա հետ խոսելու:

Այնքան երկար եմ ես նրան փնտրել, մտածում էի նա անհետ կորել է: Արդեն պատրաստ էի հանձնվել, երբ նա հետ վերադարձավ տուն: Կարո՞ղ ես պատկերացնել, թե ինչ մեծ **օրհնություն** է: *Աստված բարի է:*
Չեմ հասկանում ինչպե՞ս կարող ես **ուրախանալ** այս մեղավորի հետ: Ես **չեմ մասնակցի** խնջույքին:

Ղուկաս 15.23-32


Այս մարդը վտանգավոր է: Բոլորը նրան սիրում են:
Նա նրանց հույս է տալիս:
Այո՛, բայց դա կեղծ հույս է: Ո՞վ կարող է մեղավորին հավիտենական կյանք խոստանալ: Նա պետք է մեռնի: Բոլորին հավաքիր, մենք այսօր երեկոյան կհանդիպենք քահանայապետի տանը:

Եկեք գնանք Գալիլեա և մի փոքր հանգստանանք: Շուտով ժամանակը կգա, երբ նրանք ինձ կբանտարկեն, կծաղրեն և հետո կխաչեն: Բայց երրորդ օրը մեռելներից հարություն կառնեմ:
Ի՞նչ նկատի ունի՝ ասելով. «մեռելներից հարություն կառնեմ»:
Գաղափար չունեմ: Երևի առակներով է խոսում:

Վարդապե՛տ, շատ շտապ է: Մարթան ինձ ուղարկել է, որ գտնեմ քեզ: Նրա եղբայր Ղազարոսը հիվանդ է, նա մեռնում է: Նա քո մտերիմ ընկերն է: Եթե շտապես, կհասցնես նրան մահանալուց առաջ տեսնել: Մենք գիտենք, դու կարող ես նրան բժշկել:
Ղազարո՞սը: Հիվա՞նդ է: Մենք պետք է շտապենք:
Մարթային և Մարիամին ասա, որ ես կգամ: Եվ, ասա, որ այս հիվանդությունը մեռնելու համար չէ, այլ Աստծո փառքի համար:

Երկու օր անց...

Վարդապե՛տ, արդեն երկու օր անցել է ինչ լսեցինք Ղազարոսի հիվանդության մասին, և երկու օր էլ կպահանջվի մինչև այնտեղ հասնենք: Պետք չէ՞ շտապել:
Վաղը կգնանք: Դուք կտեսնեք Աստծո փառքը:

Մատթեոս 20.17-19,
Հովհաննես 11.1-15

Հիսուսը և իր աշակերտները դրսում են:
Ասա նրանց, որ ինձ դրսում սպասեն: Նրանց համար չափազանց վտանգավոր է ներս մտնել, որովհետև *փարիսեցի*ներն ու քահանաները այստեղ են և որոնում են, որ սպանեն նրան:
Ասա՜խ
Ոո՜ հ
Խե՜ղճ Ղազարոս:

Տե՛ր, եթե այստեղ լինեիր, եղբայրս չէր մահանա: Բայց, նույնիսկ հիմա ինչ-որ խնդրես, Աստված կանի քեզ համար:
Քո եղբայրը հարություն կառնի:
Գիտեմ, որ նա հարություն պիտի առնի հարության ժամանակ՝ վերջին օրում:

Ես եմ հարությունը և կյանքը:
Ով հավատում է ինձ, թեև մեռնի, պիտի նորից ապրի: Եվ, ով որ ապրում է և հավատում է ինձ, երբեք պիտի չմեռնի: Դու հավատո՞ւմ ես սրան:

Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ դու ես Մեսիան, Աստծո որդին, որի մասին մարգարեացել էին, որ պիտի աշխարհ գար:

Հիսուսի հետ խոսելուց հետո, Մարթան կանչեց Մարիամին:
Գնա՛նք նրա ետևից: Նա գերեզմանն է գնում, որ լա:
Վաա՜խ, վաա՜խ
Հովհաննես 11.17-31

Տե՛ր, եթե այստեղ լինեիր, եղբայրս չէր մահանա:
Ո՞ւր եք դրել նրան:

Մենք
նրան շատ ենք
կարոտել:

Տե՛ս, թե ինչպես էր Հիսուսը սիրում Ղազարոսին:
Մի՞թե այս մարդը, որ կույրի աչքերը բացեց, չէր կարող այնպես անել, որ իր ընկերը չմեռներ:

Այդ քարը վերցրեք:
Տե՛ր, արդեն հոտած կլինի, որովհետև չորս օր է, ինչ նա մեռած է:
Մի՞թե քեզ չասացի, որ եթե հավատաս, Աստծո փառքը կտեսնես: Վերցրե՛ք այդ քարը:

Հովհաննես 11.32-42

Ղազարո՛ս, դո՛ւրս արի:
Այս անգամ նա **շատ հեռու** գնաց:
Այո՛, նա իրեն **հիմարի** տեղ է դնում:

Չէ որ մարմինն արդեն սկսել է **քայքայվել:**
Երբ բոլորը տեսնեն, որ նա **խաբեբա** է, մեզ համար ավելի հեշտ կլինի նրան մահվան դատապարտել:

Ի՞նչ: Չեմ հավատում:
Սա հնարավոր չէ:

Փառք Աստծուն:
Այոոոո՜

Հովհաննես
11.43-44

Ղազարոսը չորս օր հետո դուրս եկավ գերեզմանից՝ ոտքերն ու ձեռքերը պատանով կապված:
Արձակեցե՛ք նրան և թողե՛ք, որ գնա:
Ո՞վ կարող է նման բան անել, բացի **Աստծուց:**

Այս ի՞նչ աղմուկ է: Արձակե՛ք ինձ:
Դու չորս օր է, ինչ մահացել էիր:
Վարդապե՛տ, ուրախ եմ տեսնել քեզ: Ենթադրում եմ դու ես այս ամենի հեղինակը:

Ղազարո՛ս, մենք շատ էինք ***կարոտել*** քեզ:
Ես ***քաղցած*** եմ: Սգացողներին տուն ուղարկեք և գնանք հաց **ուտենք:**
Օրհնյա՛լ ես դու, մեր Տե՛ր Աստված:

Հավատո՞ւ ես այն ամենին, ինչ մենք հենց նոր տեսանք: Նա ոչ մի կերպ դա չէր կարող կեղծել: Ես Ղազարոսին տեսել եմ թաղելուց առաջ: Նա իսկապես մեռած էր, կասկած չկա դրանում:
Երբ Երուսաղեմում լսեն սրա մասին, նրան թագավոր կդարձնեն: Արագ պետք է մի բան ձեռնարկել:
Մենք պետք է դպիրներին և փարիսեցիներին անհապաղ պատմենք:

Հովհաննես 11.44-48

Բայց Հիսուսը երբեք դաժան չի եղել և Հռոմի դեմ չի խոսել:
Նրա խոսքերն են դաժան: Նա հրապարակավ մեզ անվանում է կեղծավորներ: Մարդիկ ծիծաղում են մեզ վրա: Նրանք բացահայտ ծաղրում են մեզ:

Նրան պետք է վերացնել: Նա ինքն իրեն չի կարողանա հարություն տալ:
Շուտ պետք է լինի, քանի դեռ նա վերջնականապես չի ոչնչացրել մեր կրոնի հանդեպ հարգանքը:
Մինչ հռոմեացիները մեր դեմ դուրս կգան:

Նրանք մերժեցին ինձ և
փնտրում են, որ սպանեն: Նրանք չեն
հասկանում, որ ես նրանց փրկության
համար եմ եկել: Ասում եմ ձեզ, որ
իմ գնալուց հետո, հռոմեացիները
կկործանեն նրանց սիրելի տաճարը:
Քարը քարի վրա չի մնա:

Ժամանակ կգա, երբ ինձ սիրողները կբանտարկվեն: Ձեզ ազգերը կատեն իմ անունի համար: Շատերիդ կսպանեն: Ոմանց էլ իրենց տներից կհեռացնեն և թույլ չեն տա աշխատել: Մի՛ զարմացեք, երբ տեսնեք այս բաները կատարվելիս, որովհետև շատ պատերազմներ կլինեն, երկրաշարժեր, հիվանդություններ, սովեր, տարատեսակ արհավիրքներ, բայց դա դեռ վերջը չի:


Սա ցավերի սկիզբն է: Երուսաղեմը կլինի հեթանոսների տիրապետության տակ, մինչև նրանց ժամանակը գա: Եթե ձեզ ասեն, որ ես վերադարձել եմ և այստեղ կամ մեկ այլ վայրում եմ, չհավատաք նրանց: Շատերը կգան և կփորձեն իմ անունից խոսել:



Մատթեոս 10.22, 24.2, 5-9, 21, 27-31, Ղուկաս 19.43-44, 21.8, Հովհաննես 11.49-53, Հայտնություն 2.10

Վարդապե՛տ, Մարթան քեզ է փնտրում: Նա քեզ և քո աշակերտներին իրենց տուն է հրավիրում: Երուսաղեմն այլևս ապահով չէ քեզ համար: Ոմանք ուրախ չեն, որ իմ տիրոջը հարություն տվեցիր: Կգա՞ս մեզ հետ մնաս:
Մենք սիրով կգանք: Կուզենայի նրանց տեսնել նախքան իմ փորձության ժամը:

Հիսուսն է իր աշակերտների հետ:
Վարդապե՛տ, իմ տունը քոնն է: Համեցե՛ք և հանգստացե՛ք:
Իմ ընկեր, Ղազարո՛ս, դու ավելի լավ տեսք ունես, քան նախորդ անգամ, երբ տեսա քեզ: Լավ է քո տուն գալ, քան քո գերեզմանին այցելել:

Խնջույք ենք կազմակերպել, և հյուրերն արդեն հրավիրված են:
Վարդապե՛տ, դու ես հարությունը և կյանքը:

Մատթեոս 20.19, 26.2,
Հովհաննես 12.1-2, 14.6

Դու ես
հարությունը և կյանքը:
Նա, ով հավատում է քեզ,
երբեք չի մեռնի:

Մարիա՛մ, ի՞նչ ես անելու այդ անուշահոտ յուղով:

Իմ տե՛ր, դու ես հարությունը և կյանքը: Թեև դու մեռնես, բայց նորից կապրես:

Մարիա՛մ, այդ մեկ շիշ յուղը բավականին թանկ արժե, գրեթե մեկ տարվա աշխատավարձի չափ:
Բայց նա վարդապետին է օծում:
Ինչո՞ւ ես անտեղի օգտագործում:

Մարիամը իր մազերով սրբեց Հիսուսի ոտքերը:
Հանգի՛ստ թող նրան: Նա իմ թաղման համար է պատրաստում ինձ:

Ինչո՞ւ է նա թաղման մասին խոսում:
Նա ասաց, որ իրեն խաչելու են, *բայց հաստատ* իրական խաչելության և մահվան մասին չի խոսում:

Մատթեոս 20.19,
Հովհաննես 10.11, 12.3-8

Վարդապե՛տ, բոլորը քեզ Երուսաղեմում են սպասում:
Ինձ համար մի էշ բերեք: Մենք վերջին անգամ կգնանք Երուսաղեմ:

Վարդապե՛տ, հազարավոր մարդիկ սպասում են, որ մտնես Երուսաղեմ: Նրանք քեզ թագավոր են հռչակելու:
Ինձ կնախատեն և կխաչեն, բայց երրորդ օրը մեռելներից հարություն կառնեմ:

Օրհնյալ է Տիրոջ անունով եկողը:
Փա՞ռք հրեաների թագավորին:
Փա՞ռք լինի քեզ, Դավթի որդի՛:

Ճանապարհ տվեք Իսրայելի թագավորին:
Փա՜ռք Աստծուն:
Խոստացված փրկիչը:
Հովհաննես 12.12-13

Մարդիկ նրան հրեաների թագավոր են կոչում:
Դավթի՛ որդի, փրկի՛ր մեզ:
Նրանք կարծում են, որ նա ***Մեսիան*** է՝ ***խոստացված որդին:***
Ինչո՞ւ է նա տաճար գալիս: Նա հաստատ գիտակցում է, որ իր կյանքը վտանգված է:

Նրանք դեռ շահագործում են Աստծո տունը: Այն կարծես շուկա լինի, ոչ թե աղոթքի տուն:
Սա կարող եմ լավ գնով վաճառել քեզ: Այն արդեն թույլտվություն ունի զոհաբերության համար:

Մատթեոս 21.11-12

Հիսուսը կրկին դա արեց: Նա մաքրեց տաճարը գողերից և ավազակներից:
ԴԸԸԸ՛ԽԿ
Դուրս հանե՛ք այս ապրանքներն իմ հոր տանից: Դուք գողերի և ավազակների ոհմակ եք:
Դուք գումար եք աշխատում տաճար այցելողների և աղոթողների հաշվին: Կորչե՛ք դուք էլ, ձեր փողերն էլ:
Ձգո՛ւյշ

Ի՞նչ իշխանությունով ես սա անում:
ԹԸԸ՛ՈՒԽԿ
Ո՞ւմ տեղն ես քեզ դրել:
ԴԸԸԸ՛ԽԿ
Հորս տունը մի՛ դարձրեք ***ավազակների որջ:***

Վարդապե՛տ, քահանաներն ու փարիսեցիները լրտեսներ են ուղարկել մեզ հետևելու համար: Խոսակցություններ կան, որ մինչև զատիկ նրանք կբռնեն քեզ, այսինքն մի քանի օր հետո:
Գիտե՞ս ինչ է նշանակում Երուսաղեմի հաղթական մուտքից հետո նրա տաճարը մաքրելը:


Ես ասել եմ ձեզ, որ պետք է չարչարվեմ և խաչվեմ, բայց երեք օր հետո հարություն կառնեմ:
Այո՛, մարգարեությունն ասում է. «Աստծո տան նախանձը կերավ նրան» և, որ նա «անսպասելի կմտնի իր տաճարը»: Դա հաստատում է, որ նա Մեսիան է:
Նրան պետք է կանգնեցնել մինչև զատիկ: Մենք լրտես ունենք նրա աշակերտների մեջ:
Սաղմոս 69.9, Մատթեոս 21.12-13


Ես ձեզ նախազգուշացնում եմ, որ իմ գնալուց հետո ձեզ կբանտարկեն, կծեծեն, իսկ ոմանց էլ կսպանեն: Դուք նրանց կվկայեք իմ սիրո և զորության մասին: Երբ ատյանի առաջ կանգնեք, ես խոսքեր կդնեմ ձեր բերանում: Երեխաները վկայություն կտան իրենց ծնողների, իսկ ծնողներն էլ իրենց երեխաների դեմ: Ձեզ կատեն իմ պատճառով: Շատ կեղծ մարգարեն կգան իմ անունով: Սուրբ Հոգին ձեզ հետ կլինի:
Վարդապե՛տ, ո՞րն է լինելու քո վերադարձի և աշխարհի վերջի նշանը:

Վարդապե՛տ, ո՞րն է լինելու քո վերադարձի և աշխարհի վերջի նշանը:
Երբ ասեն, որ ես եկել եմ կամ այսինչ վայրում եմ, չհավատա՛ք, որովհետև իմ վերադարձը կայծակի արագությամբ կլինի: Հավատարիմ մնացե՛ք ինձ և կփրկվեք այն դատաստանից, որ գալու է մեղավորների վրա: Արթուն եղե՛ք, քանի որ չգիտեք իմ վերադարձի օրն ու ժամը:

Ինչպես եղավ Նոյի օրերում, այնպես կլինի իմ գալու օրերում: Մարդիկ զվարճանում էին և չ**գիտեին,** որ վտանգի մեջ են մինչև ջրհեղեղ սկսվեց, և սրբեց տարավ ամեն բան: Ես անսպասելի կգամ, ինչպես գողն է գ**ալիս** գիշերով:
Երկու հոգի դաշտում աշխատելիս կլինեն: Մեկը վեր կառնվի, որ իմ հետ հանդիպի, մյուսը կմնա, որ տառապի:
Երկու կին միասին ցորեն աղալիս կլինեն, մեկը կառնվի, մյուսը կմնա: Արթուն եղե՛ք և պատրաստվե՛ք, որովհետև ես կգամ այն ժամանակ, երբ դուք չեք սպասում:

Վարդապե՛տ, պետք է քաղաք գնամ և հանդիպեմ մեկին: Ավելի ուշ կգամ:
Գնա՛, Հուդա՛, և արա այն, ինչ պետք է անես:

Եթե գնի հետ համաձայն եք, ես կարող եմ Հիսուսին ձեր ձեռքը հանձնել:
Հուդա՛, բայց չէ՞ որ դու նրա աշակերտներից մեկն ես:
Այո՛, ես նրա հետ երեք տարի եմ անցկացրել, բայց արդեն հոգնել եմ: Նա խելագար է, իսկ ես փողի կարիք ունեմ:

Մատթեոս 26.14-16, Մարկոս 13.5-13,
Ղուկաս 17.26-37, Հովհաննես 12.23-24, 2 Պետրոս 3.10

Հոգիս տրտմած է: Եվ ի՞նչ ասեմ, «Հա՛յր փրկիր ինձ այս փորձությունից»: Ո՛չ, այլ հենց սրա համար եկա աշխարհ:

Հա՛յր, փառավորիր քո անունը:

Ես արդեն փառավորել եմ իմ անունը և կրկին կփառավորեմ:
Աստված խոսեց նրա հետ:
Ամպրոպի նման բարձր ձայն էր:
Հրեշտակը խոսեց նրա հետ:

Այդ ձայնն ինձ համար չխոսեց, այլ ձեզ համար: Եկել է ժամանակը, որ այս աշխարհի իշխանը՝ սատանան, պարտվի: Եվ, եթե ես խաչափայտին գամված մահանամ, ես բոլոր մարդկանց ինձ մոտ կկանչեմ:
Մարգարեներն ասել են, որ Մեսիան հավիտյան պետք է ապրի, իսկ դու ասում ես կմեռնես, այդ դեպքում ո՞վ է Մեսիան:

Դուք լույսը ձեզ հետ կունենաք մի փոքր ժամանակ: Հավատացեք լույսին, քանի դեռ ձեզ հետ ունեք, որ կարողանաք Աստծո որդիներ լինեք:
Խենթություն է սա:

Հովհաննես 12.27-36

Գլուխ 11

Հատիկը և հարչարանքները

Գնացե՛ք և զատիկի ընթրիք պատրաստեք մեզ համար:

Ես փափագում էի այս զատիկը ձեզ հետ անցկացնել մինչև իմ չարչարվելը: Ես այլևս չեմ ուտի, մինչև Աստծո թագավորության հաստատվելը այս երկրի վրա: Դրանից հետո դուք ինձ հետ սեղան կնստեք և գահերին նստած՝ կդատեք Իսրայելի տասներկու ցեղերին:
Ես ձեզ մի բան կհայտնեմ, որ երբ դա պատահի, դուք հավատաք: Սաղմոս 41.9-ը խոսքում մարգարեություն կա. «Նա, որ իմ հացն ուտում էր, ոտքը բարձրացրեց ինձ վրա»: Ասում եմ ձեզ, որ ձեզանից մեկը, ում ձեռքն ինձ հետ սեղանի վրա է, նա է ինձ մատնողը:
Ո՞Չ

Այդպես որոշված է, բայց վա՜յ նրան, ում ձեռքով կլինի:

Ղուկաս 22.8-23

Ձեզանից նա
է, ով ինձ հետ ձեռքը
կթաթախի ամանի
մեջ:

Հովհաննեսը շշուկով հարցրեց Հիսուսին, թե ով է իրեն մատնելու: Հիսուսն էլ պատասխանեց. «Նա, ում այս հացը կտամ»:

Վարդապե՛տ, մի՞թե ես եմ:
Դու ես ասում:

Հիսուսը թաթախեց
հացը և տվեց
Հուդային:

Ինչ-որ պետք է անես, ***արագ արա:***

Մատթեոս 26.23-29,
Հովհաննես 13.26-30


Շուտով ես կփառավորվեմ: Փոքր հո՛տ, ես ձեզ հետ երկար չեմ մնա:
Դուք չեք կարող գալ, որտեղ ես եմ գնում: Ձեզ նոր պատվիրան եմ տալիս, որ սիրեք իրար: Սրանով բոլորը կիմանան, որ իմ աշակերտներն եք, եթե սիրեք իրար:
Զաքարիան այս պահի համար մարգարեացել է. «Ես կզարկեմ հովվին, և ոչխարները կցրվեն»: Հարություն առնելուց հետո ես ձեզանից առաջ կգնամ Գալիլեա: Այս գիշեր բոլորդ կուրանաք ինձ:

Տե՛ր, նույնիսկ բոլորը ուրանան, ես երբեք չեմ ուրանա:
Պետրո՛ս, աքաղաղը դեռ չկանչած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ:

Ես ավելի շուտ կմեռնեմ, քան քեզ կուրանամ:
Անկարելի է, որ քեզ ուրանամ:
Նույնիսկ չարչարեն էլ, չեմ ուրանա քեզ:

Պարզ գրված է խոսքում, որ դուք բոլորդ կուրանաք ինձ: Կրկին Եսայիա մարգարեն ասել է իմ մասին. *«Նրա հետ անօրենի պես վարվեցին»:*
Պետրո՛ս, երբ կրկին հավատաս և դարձի կգաս, զորացրո՛ւ եղբայրներիդ հավատքում:

Մատթեոս 26.33-35, Հովհաննես 13.31-38, 1 Կորնթացիս 11.24-25

Իմ մարմինը կկոտրվի ձեզ համար:

Վերցրե՛ք և ամբողջը կերեք:

Այս բաժակը նոր ուխտն է
իմ արյունով, որ թափվում է
ձեր մեղքերի համար:

Փոխանցեք իրար
և խմեք: Այլևս չեմ խմի
որթի բերքից, մինչև
նորից միասին կխմենք իմ
արքայությունում:

Հետագայում, երբ սա կանեք, հիշեք իմ մահը, մինչև ես կրկին կգամ:

Հովհաննես 14.1-3, 1 Կորնթացիս 11.24-26

Բայց, Տե՛ր, մենք չգիտենք, թե դու ուր ես գնում, ինչպե՞ս պետք է գանք քո հետևից:



Դուք գիտեք ճանապարհը,
որովհետև ես եմ ճանապարհը,
ճշմարտությունը և կյանքը: Ոչ ոք չի կարող գալ
Աստծո մոտ, եթե ոչ ինձանով: Եթե ճանաչում եք
ինձ, ուրեմն ճանաչում եք նաև հորը և տեսել
եք նրան:

Վարդապե՛տ, ցույց տուր մեզ հորը, և դա բավական է:
Փիլիպպո՛ս, այսքան ժամանակ ինձ հետ էիր և դեռ չգիտե՞ս ինձ: Եթե ինձ ճանաչեիր, հորն էլ կճանաչեիր: Ես և հայրը մեկ ենք:


Ես ձեզ մենակ չեմ թողնի: Ես ձեզ հետ կլինեմ: Աշխարհն այլևս չի տեսնի ինձ, բայց ես կուղարկեմ Սուրբ Հոգին, որ ձեր մեջ ապրի և մխիթարի ձեզ: Նա կառաջնորդի ձեզ ճշմարտության մեջ:
Եթե ինձ սիրում եք, պահեք իմ պատվիրանները: Ես ձեզ իմ խաղաղությունն եմ թողնում, որ աշխարհը չի կարող վեր առնել:

Եթե ինձ սիրում եք, ուրախ եղե՛ք, որովհետև ես գնում եմ հորս մոտ: Ես ձեզ այս բաներն ասացի, որ հավատաք ինձ:
Եկե՛ք օրհներգենք և գնանք պարտեզ՝ աղոթք անելու:



Հիսուսը և տասնմեկ աշակերտները վերջին անգամ միասին փառաբանեցին:

Մատթեոս 26.30, Հովհաննես 14.5-10, 15, 25-30

Լուռ
հետևե՛ք ինձ:
Մենք գնում ենք
առանձին վայրում
աղոթելու:

Մի՛ տրտմեք, որ ասացի, թե պետք է մի փոքր ժամանակ թողնեմ ձեզ, և հետո նորից կգամ ու կտեսնեք ինձ:
Չնայած դուք լաց կլինեք, բայց ձեր վիշտը մեծ ուրախության կփոխվի: Ես եկել եմ հոր մոտից և նորից նրա մոտ եմ գնում:
Հիմա դու ավելի պարզ ես խոսում: Մենք հավատում ենք քեզ:
Այժմ հավատո՞ւմ եք ինձ: Մի փոքր ժամանակ էլ և դուք բոլորդ կլքեք ինձ և կցրվեք:


Հա՛յր, ժամը հասել է: Ես կատարեցի այն գործը, որ ինձ տվեցիր, որ անեմ: Եվ հիմա փառավորիր ինձ այն փառքով, որ աշխարհի ստեղծվելուց առաջ ունեի քեզ մոտ: Ես քո անունը ճանաչեցրի նրանց, և նրանք ընդունեցին իմ խոսքերը: Աշխարհը նրանց կատի, ինչպես որ ինձ ատեց, որովհետև պատմեցի ողջ ճշմարտությունը նրանց մեղքերի մասին: Նրանք այս աշխարհից չեն: Ես չեմ աղաչում, որ նրանց աշխարհից վերցնես, այլ որ նրանց պահես չարից:
Նույնպես աղոթում եմ բոլոր այն մարդկանց համար, որ նրանց վկայության խոսքով կհավատան ինձ: Աղոթում եմ, որ նրանք մեկ լինեն, ինչպես մենք մեկ ենք: Հա՛յր, թող այն սերը, որով ինձ սիրեցիր, նրանցում լինի, և ես էլ նրանցում:

Մատթեոս 26.31, 38,
Հովհաննես 16.19-20, 17.1-10

Հա՛յր, եթե հնարավոր է հեռացրու այս բարկության բաժակն ինձանից, որ պետք է խմեմ: Սակայն ոչ թե իմ կամքը լինի, բայց քոնը: Եթե պետք է ես կխմեմ այն:

Հիսուսն եկավ այս աշխարհ, որ մեղքն իր վրա վերցներ, բայց, երբ պահը եկավ, նա արհամարհեց խաչի ամոթը, ինչը նշանակում էր, որ նա ողջ մարդկության համար մեղք էր դարձել:

Ոչ թե իմ կամքը լինի, բայց քոնը, հա՛յր:
Նրա ճակատից արյան կաթիլներ էին գլորվում:

Այդ պահին հրեշտակն այցելեց Հիսուսին:
Սուրբ մա՛րդ, քո չարչարանքի ժամն եկավ, բայց հայրը քեզ հետ է: Երկնքի բոլոր զորությունները սպասում են վաղվան, երբ աշխարհի մեղքերը կվերցնես քո վրա:
Մենք այնտեղ էինք, երբ ստեղծեցիր աշխարհը, մենք այնտեղ կլինենք, երբ դու փրկես այն:

Սաղմոս 23.5-6, Ղուկաս 22.41-44, Հովհաննես 17.12, Եբրայեցիս 6.6, 12.2
Վաղը սատանան կպարտվի, և մեղքի գինը կվճարվի:
Աբրահամն ու երկնքի բոլոր զորությունները սպասում են քո գալստյանը: Նրանք սեղան են պատրաստել քո թշնամիների դիմաց, քո բաժակը խիստ լիքն է: Բարիք և ողորմություն կհետևեն քեզ, և դու կբնակվես Տիրոջ տանը հավիտյան:
Վե՛ր կաց: Հուդան՝ կորստյան որդին գալիս է քեզ մատնելու:

Հա՛յր, ես այս նպատակի համար եմ աշխարհ եկել:

Դուք քնեցիք:
Չկարողացա՞ք նույնիսկ մեկ ժամ արթուն մնալ ինձ հետ: Վե՛ր կացեք, ես մատնվում եմ մեղավորների ձեռքը:

Վարդապե՛տ, ուրախ եմ քեզ այստեղ տեսնել: Ցավում եմ, բայց նրանք ինձ հետապնդեցին:

Հուդա՛, ինձ համբույրո՞վ ես մատնում:

Մատթեոս 26.40, 45-50, Հովհաննես 12.27, 18.1-4

Նազովրեցի
Հիսուսին:
Ես եմ:

Զինվորները վախեցած ընկան գետնին:

Ահա՛,
նա է: Ինչի՞ց
եք վախենում:
Բռնե՛ք նրան:

Թույլ չե՛մ տա տանեք վարդապետին:

Հովհաննես 18.4-6, 10


Կանգ ա՛ռ: Այստեղ այլևս արյուն չի թափվելու: Պետրո՛ս, սուրդ տեղը դիր: Եթե ցանկանայի, կկանչեի ***10.000 հրեշտակների,*** որ օգնեն ինձ: Խավարի ժամն է եկել:
Նա ականջս կտրեց:


Դուք սրերով
եկաք ինձ բռնելու՝ ասես
մի հանցագործի: Ես ձեզ հետ
տաճարում էի: Ինչո՞ւ այդ
ժամանակ չբռնեցիք: Ես կասեմ,
թե ինչու. որպեսզի գրվածքները
կատարվեն:

Աստվա՛ծ, օգնիր ինձ:

Ահա, ինչպես առաջ էր:

Դուք ինձ եք փնտրում: Մենք չենք դիմադրի: Տարեք ինձ և դրանց բաց թողեք:

Սա հրաշք է: Նա բժշկեց իմ ականջը: Նա բժշկեց ականջս:

Մատթեոս 26.52-57,
Մարկոս 14.51-52, Ղուկաս 22.50-51

Շարժվի՛ր:
Նրանք ցանկանում են վերջացնել այս գործը, մինչ բոլորը կիմանան:

Նրանք Հիսուսին բերեցին այնտեղ, որտեղ հավաքվել էին քահանաներն ու վկաները:
Լսել եմ դու քեզ Մեսիայի տեղն ես դրել և ասում ես, որ Աստված քո հայրն է: Դու ասել ես, որ այս աշխարհից չես: Ուրեմն, որտեղի՞ց ես եկել:
Ես սովորեցրել եմ ժողովարաններում և տաճարում: Ես գաղտնի չեմ գործել: Ինչո՞ւ եք ինձ հարցնում: Հարցրեք նրանց, ովքեր լսել են ինձ: Նրանք կասեն ինչ եմ խոսել:

ՀԱՐՐՔ

Դու նման կերպ չես կարող **քահանայապետի** հետ խոսել:
Եթե չար բան եմ խոսել, ապա թող վկայեն դրա մասին, իսկ եթե բարի եմ խոսել, ուրեմն ինչո՞ւ ես հարվածում ինձ:

Հովհաննես
18.19-23

Նա ասել է, որ կքանդի տաճարը և երեք օրում կշինի այն առանց ձեռքերի օգնության:
Ո՛չ, նա ասաց, եթե որևէ մեկը քանդի տաճարը, նա կկառուցի այն:
Դու նույնիսկ այնտեղ չէիր: Ես լսեցի ինչ է նա ասել: Նա իրեն նկատի ուներ, երբ խոսում էր տաճարը քանդելու մասին: Կարծում եմ նա իր մարմնի մասին էր խոսում, որ պետք է քանդվի:

Ծիծաղելի է: Ինչպե՞ս կարող է երեք օր անց իր մարմինը վերականգնել:
Ես չգիտեմ: Ինչպե՞ս կարող է երեք օրվա ընթացքում տաճարը վերակառուցել:

Չե՞ս տեսնում, որ քեզ մեղադրում են: Չե՞ս պատրաստվում պաշտպանել քեզ:

Հիսուսը լուռ էր:
Այս հիմարը չի պատրաստվում խոսել:

Ես քեզ հրամայում եմ կենդանի Աստծով, որ դու խոսես և պատասխանես արդյոք դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո որդին:
Ես Աստծո որդին եմ: Դուք կտեսնեք ինձ Աստծո աջ կողքը զորությամբ նստած և ամպերի վրա Երկիր վերադառնալիս:

Մենք այլևս վկաների կարիք չունենք: Ինքներս մեր ականջներով լսեցինք նրան: Նա հայհոյում է Աստծո անունը՝ ասելով, որ ինքն Աստծո որդին է: Նրան պետք է մահվան դատապարտել:
Կապե՛ք նրա աչքերը և տեսնենք ինչպիսի՞ մարգարե է նա:
Քահանայապետը պատռեց իր հագուստները՝ արտահայտելով իր խորը վիշտը:
Մատթեոս 26.59-65

Տեսնենք կարող է մարգարեանալ:
Ծեծե՛ք դրան: Նա իմ բիզնեսը քանդեց տաճարի մեջ:
Թող նա ***հրաշք*** անի:

Սորից խփի՛ր:

ԴԸԸ՛ԱՓ
Տեսեք ինչքան տկար է նա:
ՉԸԸ՛Փ
Մարգարեացի՛ր և ասա, թե ով է հարվածում քեզ:
Վերքե՛րդ բժշկիր: Հրա՛շք արա:

Ես գիտեմ քեզ: Ես քեզ տեսել եմ Հիսուսի հետ: Դու նրա **աշակերտներից** ես, այնպես չէ՞:
Այդ ընթացքում, քահանայապետի պալատից դուրս Պետրոսը հեռվից հետևում էր Հիսուսին:
Ես չեմ ճանաչում այդ **Հիսուսին:** Ուղղակի ուզում եմ տեսնել, թե ինչ է կատարվում:

Մատթեոս 26.67-70,
Ղուկաս 22.64-65

Դու ***հաստատ*** նրա աշակերտներից մեկն ես: Ես քեզ նրա կողքին տեսել եմ շատ անգամներ:
$?!#&! կի՛ն, ես այս մարդուն երբեք չեմ հանդիպել:

Ծոոո՛ւղ-ռոոոո՛ւ-ղոոոո՛ւ
Ծոոո՛ւղ-ռոոոո՛ւ-ղոոոո՛ւ
Աքաղաղը շուտ կանչեց, այնպես չէ՞:
Նրան դուրս են բերում: Նա այնքան էլ լավ տեսք չունի:


Նրան պետք է տանել իշխանավորների մոտ, որ **դատավճիռը** կայացնեն:
Այդ կեղծավորները ցանկանում են, որ ուրիշներն անեն իրենց ***կեղտոտ գործերը:***
Մտրակե՛ք նրան:
Պետրոսը լսեց աքաղաղի կանչը և հիշեց Հիսուսի խոսքերը, որ աքաղաղը երկու անգամ չկանչած, նա երեք անգամ կուրանա Հիսուսին: Նա ամաչեց իր վախկոտությունից:
Մատթեոս 26.71-75, 27.1-2,
Ղուկաս 22.58-62, 23.1

Մտրակե՛ք նրան:
Աստվա՛ծ իմ, այս ի՞նչ արեցի ես: Ես երեք անգամ ուրացա նրան, ինչպես և ասել էր: Ինչո՞ւ համար է այս ամենը տեղի ունենում: Ինչո՞ւ է նա այսքան չարչարվում:
Հա՛յր, ինձ ուժ տուր:
Շարժվի՛ր, մենք այդքան ժամանակ չունենք:

Ի՞նչ ես անում այստեղ: Չէ՞ որ մենք վճարել ենք քեզ քո վարդապետին մատնելու համար:
Ես փոխեցի միտքս: Նրան ազատ արձակեք, և ես ***կվերադարձնեմ ձեր փողը:***
Սա ***արյունոտ*** փող է, **անմաքուր:** Մենք դրան չենք դիպչի: Քո վարդապետը մինչև օրվա վերջ կմեռնի: Դու ոչ մի բանից մի վախեցիր: Հնարավոր է դու մեզ պետք գաս մյուսներին բռնելու համար:

Վերցրե՛ք ձեր փողը: Ես չեմ ուզում այն: Չեմ կարող մեղքի զգացումով ապրել:
ՉԸԸ՞ԽԿ
ՉԸԸ՞ՈՒԽԿ

Մատթեոս 27.3-6

Չեմ կարող այսպես ապրել:

Աստվա՛ծ, ի՞նչ է կատարվում ինձ հետ:

Ինչո՞ւ չեմ կարողանում վերահսկել ցանկությունս:

Միգուցե մա՞հը ինձ խաղաղություն տա:

Ես տեսա նրան, բայց չկարողացա կանգնեցնեմ:
Արագացրո՛ւ, մենք պետք է իջեցնենք նրան, միգուցե դեռ **ողջ է**:

Չնայած նրանք ծառն էին բարձրանում, որ օգնեին, բայց Հուդայի հոգին արդեն ընկնում էր ցած՝ կրակների մեջ:

Երբ նա վայր ընկնի, դու պետք է բռնես նրան, այլապես նա ուղիղ կիրճը կընկնի:

Մատթեոս 27.5

Նա հեռու է ընկնում, չեմ կարողանում բռնել:

Սա նույնպես կանխատեսել էին մարգարեները:

Մեկ այլ հերետիկո՞ս եք բերել ինձ մոտ: Տարե՛ք նրան և ձեր օրենքով դատեք:
Նա մահվան է արժանի, այլապես նրան այստեղ չէինք բերի: Մենք իշխանություն չունենք քարկոծելու հայհոյության համար, ուստի եկել ենք այստեղ, որ քո թույլտվությունը ստանանք:
Ո՞րն է նրա հանցանքը:

Նա պնդում է, որ թագավոր է:
Դո՞ւ ես հրեաների թագավորը:
Իմ թագավորությունն այս աշխարհից չէ: Եթե այստեղ լիներ, իմ սպասավորները կպայքարեին իմ կյանքի համար:

Հիմա ինչ, դու թագավո՞ր ես:

Ես եկել
եմ այս աշխարհ,
որ ճշմարտությունը
վկայեմ: Ամեն ոք, ով
ճշմարտությունից է լսում է
իմ խոսքերը:

Զաքարիա 11.12-13, Մատթեոս 27.8, Մարկոս 15.14, Ղուկաս 23.1-4, Հովհաննես 18.29-38, Գործք Առաքելոց 1.18

Նրան հատուկ մտրակով էին հարվածում, որի երկարությունը մոտավոր 45սմ էր և ուներ փայտե բռնակ, որին միացված էին ինը կաշվե ժապավեններ, իսկ դրանց ծայրին էլ ամրացված էին մետաղե կտորներ կամ սրածայր քարեր:

Վահան
Ծոռ՝ Սֆ
Ավելի ուժեղ
Ո՞ւր են հիմա նրա ընկերները:
Նա անգամ չաղերսեց դադարեցնել:
Սա հավանաբար կսպանի նրան, և մենք կազատվենք նրա հրաշքներից:

Ղուկաս 23.11, Հովհաննես 19.1-2

Նրա մեջքն ամբողջությամբ ֆսասվել է:
Ես միշտ ցանկացել եմ մտրակել թագավորի:

Նա ասում էր, որ թագավոր է: Այս մանուշակագույն պատմուճանը գցեք նրա վրա:
Թագավորին թագ է պետք:

Քա՜հ, քա՜հ, քա՜հ: Սրանից լավ թագ կստացվի:
Վաա՜յ

Ահա՛, վերցրու քո գավազանը, *մեծն արքա՛:* ***Քա՞հ, քա՞հ, քա՞հ:***
Պսակն ամուր դի՛ր նրա գլխին:

Մենք հռչակում ենք քեզ ամբողջ աշխարհի թագավոր:
Վաա՜խ

Հովհաննես 19.1-3


Հռոմեացի
թագավորը մորուք չունի:

Հիմա
ավելի շատ
ես թագավորի
նման:

Նա շատ ձանձրալի է: Նույնիսկ ողորմություն չաղերսեց: Նրան տանենք Պիղատոսի մոտ:

Դիմավորե՛ք ձեր **արքային:**
Մենք Կայսրից բացի ուրիշ թագավոր չունենք:
Նայե՛ք այս մարդուն: Ի՞նչ եք ցանկանում, որ անեմ նրա հետ:
Խաչի՛ր նրան: Խաչի՛ր նրան

Տարե՛ք և խաչեք նրան: Ես որևէ հանցանք չեմ գտնում նրա մեջ:

Ինչպե՞ս թե
ոչ մի հանցանք չես
գտնում: Նա պնդում է,
որ Աստծո որդի է:

Սաղմոս 22, Եսայիա 50.6, 53.5, 7,
Ղուկաս 23.13-22, Հովհաննես 19.4-8

Ո՞վ ես դու: Ինչո՞ւ չես պատասխանում ինձ: Չգիտե՞ս, որ ես իշխանություն ունեմ քեզ մահվան դատապարտելու:
Դու ոչ մի իշխանություն չէիր ունենա, եթե իմ երկնային հայրը քեզ չտար:

Ասում եմ ձեզ
ես ոչ մի հանցանք
չգտա այս մարդու մեջ:
Ես ազատ կարձակեմ
նրան:
Եթե ազատ
արձակես,
ուրեմն Կայսեր
բարեկամը չես:
Խաչի՛ր նրան,
խաչի՛ր նրան:
Տարե՛ք նրան և արեք
ինչ ուզում եք: Ես թղթի վրա
կգրեմ նրա հանցանքը: Բայց ես
անմեղ եմ այս արդար մարդու
մահվան մեջ:

Մատթեոս 27.24,
Հովհաննես 19.9-17

Կարծում եմ նա ստացավ այն, ինչին արժանի էր:
ԴՈՒ՞ԻՍԿ
ՉԸԸ՞ԻՍԿ

Վե՛ր կաց, այլապես կմտրակեմ:
Հե՜յ, **դո՛ւ,** նրան օգնի՛ր խաչը տանել:
Ինչո՞ւ ես:

Ի՞նչ է նա արել:
Նա բոլորին սիրում էր:

Հիսո՛ւս, այնքան ենք ցավում:
Երուսաղեմի աղջիկնե՛ր, լաց մի՛ եղեք ինձ համար: Լաց եղեք ձեր և ձեր երեխաների համար, որովհետև ժամանակ կգա, որ Երուսաղեմում եղողները վախից կթաքնվեն և կաղոթեն, որ մեռնեն:

Մատթեոս 27.32, Ղուկաս 23.26-33

Վերցրո՛ւ, խմի՛ր սա: Այն կբթացնի ցավը:
Ո՛չ, ես պետք է հորս կամքը կատարեմ:
Նա դեռ կարծում է, որ Աստծո որդի է:

Ուղղե՛ք նրան
Մուրճն ու մեխերը բերե՛ք:

Հիմա պինդ պահե՛ք նրան: Նա կխելագարվի առաջին հարվածից: Դուք պետք է ամուր պահեք մինչև մեխը չհասնի փայտին ոսկորի միջով:

Ո՛չ, որդի՞ս:
ԹՈՒՐԻԱ
ԴԸԸ՞ԻՍԿ

Սաղմոս 22, Եսայիա 53, Մատթեոս 27.33-34

Անշարժ պահիր ոտքերը: Սովորաբար մի քանի հարվածից հետո է մեխը մտնում ոսկորների մեջ:

Մարիա՛մ, չեմ կարծում, որ կդիմանամ սրան:
Չէի մտածում, որ այսպես կլինի:
Ինձ օգնություն է պետք, ա՛յ ծույլ խոզ:
Զգե՛ք, հիմարնե՛ր

Զաքարիա 13.6,
Ղուկաս 23.32-34

Ահա՛ նրա հագուստը: Ես այս մեկն ինձ կվերցնեմ:
Ո՛չ, ամենը չես վերցնի: Մենք այն կբաժանենք չորս մասի:
Մենք վիճակ կգցենք այդ մեկի համար:
Այս մեկը չենք կարող բաժանել: Այն գործված է:
Սուրբ Գրքում մարգարեություն կար, որ նրանք կբաժանեն հագուստը և վիճակ կգցեն դրա վրա:

Բարձր նիշ ունեցողը վերցնում է ամենը:
Լե՛ռ, նայի՛ր, արյան հետքեր կան վրադ:

Սաղմոս 22.18, Մատթեոս 27.39-43, Հովհաննես 19.23-24

Խմի՛ր սա, ցավերդ կթեթևանան:
Ո՛չ

Եթե Աստծո որդի ես, իջի՛ր այստեղից, և մենք կսպանենք այս հռոմեացիներին:
Ինչո՞ւ ես այդպես խոսում: Մի՞թե Աստծուց չես վախենում՝ իմանալով, որ շուտով մեռնելու ես:

Մենք արժանի ենք այս պատժին, բայց նա Հիսուսն է: Նա ոչ մի հանցանք չի գործել:
Հիսո՛ւս, ինձ հիշիր, երբ կգաս քո արքայությունով:

Այսօր ինձ հետ դրախտում կլինես:

Սաղմոս 69.21, Ղուկաս 23.36-43,
Հովհաննես 19.25-27

Երկինքը երեք ժամ խավարեց, մինչ Հիսուսը կախված էր խաչից: Դա խավարման ժամն էր: Հիսուս Քրիստոս մարդը մահանում էր աշխարհի մեղքերի համար:

Երբ մեղքի ամբողջ ծանրությունն ընկավ Հիսուսի վրա, նա աղաղակեց.
Իմ Աստվա՛ծ, իմ Աստվա՛ծ, ինչո՞ւ ինձ թողեցիր:

Աստված նրան մեղք համարեց մեր փոխարեն:
Մատթեոս 27.45-50, Ղուկաս 23.44-46, Հովհաննես 19.30, 2 Կորնթացիս 5.21
Հա՛յր, հոգիս ավանդում եմ քո ձեռքերի մեջ:
Կատարվեցավ:
Հովհաննե՛ս, նա մահանում է: Չեմ հավատում, որ իրականում մահանում է:
Եվ նա մահացավ:

Հանկարծ մեծ երկրաշարժ եղավ:
Սա Հիսուսն է՝ հրեաների թագավորը: Նա հրաշագործ էր:
Ի՞նչ է կատարվում: Սկզբում երկինքը խավարեց, հիմա էլ երկրաշարժ է լինում:
Հիմա նա ոչ մի հրաշք էլ չի գործում: Նա մեռած է:

Նորից լույս է բացվում: Շատ տարօրինակ օր է:
Այո՛, և այսքանը տեղի է ունենում նրա մահից անմիջապես հետո:

Իսկապես, նա Աստծո որդի էր:

Մեզ հրամայված է կոտրել նրանց սրունքները, նրանք պետք է մեռած լինեն մինչև արևամուտ: Վաղը նրանց սուրբ օրերից մեկն է:
Նրա համար մարգարեացել էին, որ կմահանա խաչի վրա, բայց նրա մարմնի ոչ մի ոսկոր չի կոտրվի: Եվ այդպես էլ եղավ:
Կարիք չկա կոտրել, նա հենց նոր մահացավ: Գիտե՞ք ինչ ասաց մեռնելուց առաջ: Նա խնդրեց իր հորը, որ մեզ ների իրեն սպանելու համար: Ասում են, որ նա սուրբ մարդ էր և հրաշքներ էր գործում:

Սաղմոս 34.20, Զաքարիա 12.10,
Մատթեոս 27.54, Հովհաննես 19.31-37

Զինվորները շրջանցեցին Հիսուսին և միայն կոտրեցին ավազակների սրունքները:

Կարևորը նրա սրունքները չկոտրեցին:
Մարիա՛մ, պետք է գտնեմ որևէ մեկին, ով կօգնի մեզ թաղմանը պատրաստվել:

Արևամուտին կսկսեն շաբաթը տոնել, արդեն բավականին ուշ է: Նրանք պետք է շտապ մարմինը թաղեն:

Հովհաննես 19.31, 38



CHAPTER 12

RESURRECTION AND EARLY CHURCH

Նա մեզ շատ անգամներ էր զգուշացրել, որ սա պատահելու է: Ուղղակի չեմ հասկանում ինչու: Կարծես նա ցանկանում էր այսպես մահանալ: Նա գիտեր ժամանակը և ամեն բան: Նա երեկ գիշեր կրկին մեզ ասաց սրա մասին:
Արագացրե՛ք, ուշ է արդեն:

Մենք չհասցրեցինք օծել նրա մարմինը:
Մենք կվերադառնանք շաբաթից հետո:
Բայց դեռ երեք օր կա:
Մենք ոչինչ չենք կարող անել:
Ուշադի՛ր եղիր, այստեղ աստիճան կա:

Քահանաները վերադարձան Պիղատոսի մոտ:
Տե՛ր, այն խաբեբան, ում դու պատվիրեցիր խաչել, ասել է, որ երեք օր հետո հարություն կառնի:
Ողբերգություն կլինի, եթե նրա աշակերտները սողոսկեն ներս և դուրս հանեն մարմինը: Դու պետք է պահապաններ դնես գերեզմանի դիմաց, որ հսկեն:
Ես պահապաններ կուղարկեմ: Ամեն ինչ թող ապահով լինի:

Մատթեոս 27.59-66,
Հովհաննես 19.40

Մի՛ անհանգստացիր, քո մեռած Մեսիան ոչ մի տեղ չի գնա: Մենք երբեք դիակ չենք կորցրել, այնպես չէ՞ տղաներ:
Քա՛հ, քա՛հ, քա՛հ

Հիսուսի թաղումից երեք օր անց:
Առաջին անգամն է, որ մեռած մարդու ենք հսկում:
Շուտով լույսը կբացվի, և մենք կազատվենք սրանից:

Շուտով լույսը կբացվի: Եկե՛ք շտապենք: Արդեն երեք օր անցել է:
Երանի ավելի շուտ կարողանայինք գնալ:

Մատթեոս 28.1-2,
Ղուկաս 24.1

Շատ ուժեղ երկրաշարժ է:
Այդ մարդկանց բղավոցները լսեք: Երևի ինչ-որ մեկը վիրավորվել է:

Այս ի՞նչ...
Վաա՜խ

Սա Աստված է:
Նա մեզ կսպանի:
Նա քարն է շարժում:
Աստվածամա՛յր, ողորմի՛ր մեզ:

Մատթեոս 28.2-4

Այդ քարը շատ ծանր է: Ո՞ւմ պետք է խնդրենք, որ օգնի:
Չգիտեմ, բայց արդեն երեք օր է անցել, և մարմինն առանց այս յուղերի կհոտի:
Նրանք չգիտեին, որ զինվորները հսկում էին գերեզմանը:

Մի քանի րոպե անց
Ինչ-որ մեկն արդեն շարժել է քարը:

Նրա մարմինն այստեղ չէ, գերեզմանը **դատարկ** է:

Ո՞վ ես դու: Որտե՞ղ է Հիսուսի մարմինը:
Պատաններն այնտեղ են:
Մի՛ վախեցեք, գիտեմ, որ փնտրում եք խաչված Հիսուսին: Նա այստեղ չէ, այլ հարություն է առել, ինչպես որ ասել էր:
Եկե՛ք տեսեք, որ նա այստեղ չէ և գնացեք նրա աշակերտներին ասեք, որ Հիսուսը Գալիլեայում կսպասի նրանց:

Հիսուսը կենդանի է: Նա հարություն է առել, ինչպես ***Ղազարոսը:***
Այդ մարդիկ ***հրեշտակներ*** են:
Շտապե՛ք, պետք է աշակերտներին պատմենք:
Հիսուսը կենդանի է:

Մարկոս 16.3-8

Հիսուսը կենդանի է: Մենք հենց նոր գերեզմանից եկանք:
Հիսուսն այնտեղ չէր, բայց ***հրեշտակների*** տեսանք:
Մենք հիշեցինք. որ Հիսուսն ասել էր երրորդ օրը հարություն կառնի:
Հրեշտակներն ասացին, որ Հիսուսը ձեզ Գալիլեայում կսպասի:

Պետրո՛ս, ո՞ւր ես գնում:
Նրա գերեզմանի մոտ:

Հովհաննեսը նույնպես գնաց և առաջ անցավ Պետրոսից:
Հովհաննե՛ս, սպասի՛ր, ես այդքան արագ չեմ կարող վազել:

Այն դատարկ է:

Հովհաննես 20.2-9

Հովհաննե՛ս, նրա հագուստը կոկիկ դրված է այստեղ, կարծես նա հենց նոր վեր է կացել և դուրս եկել այստեղից:
Հնարավոր չէ:
Բայց որտե՞ղ են *հրեշտակները:* Հավանաբար նրանց թվացել է, թե տեսել են:

Դուք տեսա՞ք սպիտակ հանդերձներով տղամարդկանց:
Այնտեղ ոչ ոք չկար, ո՛չ հրեշտակներ, ոչի՛նչ: Նրա մարմինն էլ այնտեղ չէ:

Ո՜չ, ո՜չ
Կի՛ն, ինչո՞ւ ես
լաց լինում:

Որովհետև նրանք տարել են իմ Տիրոջը, և ես չգիտեմ, թե ուր է նրա մարմինը:

Մարիա՛մ

Վարդապե՛տ

Հովհաննես 20.7-17

Աշակերտները չհավատացին այդ լուրին, որ Հիսուսը հարություն է առել:
Պետրոսն ու Հովհաննեսն ոչինչ չգտան գերեզմանում, ուստի ենթադրում եմ ինչ-որ մեկը գողացել է մարմինը: Այդ խենթ կանայք թող այլևս նման բաներ չտարածեն: Դա բոլորին հիասթափեցնում է:
Մենք կվերադառնանք էմմաուս: Մենք այստեղ այլևս ոչինչ չունենք անելու:

Այսօր երրորդ օրն է:
Այո՛, բայց ինչո՞ւ նա թույլ տվեց, որ իրեն սպանեն, եթե պետք է հարություն առներ:
Եվ, եթե ցանկանում էր թագավոր լինել, այս ամենը գաղտնի չէր անի, այնպես չէ՞:

Կարո՞ղ եմ ձեզ հետ քայլել:
Օ՜, վախեցրիր ինձ: Որտեղի՞ց եկար:
Իհարկե՛, հաճելի օր է զբոսանքի համար:

Ես լսեցի ձեր զրույցը, երբ մոտենում էի: Կարծես թե տխուր եք:
Մի՞թե չես լսել ինչ է պատահել վերջին երեք օրերի ընթացքում Նազովրեցի Հիսուսի հետ:

Մենք կարծում էինք, որ նա Մեսիան էր, բայց նրան խաչեցին:
Այս առավոտ մի քանի կանայք գնացել էին գերեզման, բայց նրա մարմինն այնտեղ չէր: Նրանք տեսել են հրեշտակների, որոնք ավետել են Հիսուսի հարության մասին:

Սաղմոս 22, Զաքարիա 13.7,
Ղուկաս 24.13-26

Այդ նույն Հիսուսը Նազարեթից, որին նրանք խաչեցին, պնդում էր, որ ինքը Քրիստոսն է, Աստծուն հավասար, այնպես չէ՞: Եսայիան ասաց, որ Քրիստոսը կկոչվի «հզոր Աստված, հավիտենականության հայր»: Մի՞թե Հիսուսը չասաց ձեզ, որ եթե իրեն ընդունեք, ուրեմն Հորն եք ընդունում: Նրա խոսքերը հաստատում են սուրբ գրությունները:

Եսայիան նաև ասել է, որ Քրիստոսը կգա այն ժամանակ, երբ Իսրայելում կամ Հուդայում հրեա թագավոր չի լինի, և հիմա է այդ ժամանակը: Նա կծնվի կույսից: Միքիա մարգարեն ասել է, որ Մեսիան կծնվի Հուդայի Բեթլեհեմ քաղաքում, իսկ Հիսուսն այնտեղ է ծնվել:

Շատ մարգարեներ ասել են, որ նա Դավիթ թագավորի սերնդից է լինելու: Մարիամն ու Հովսեփը Դավթի սերնդից են:

Մարգարեն ասել է, որ Քրիստոսը կույրի աչքեր կբացի և գերիներին կազատի: Նա կլինի Իսրայելի հովիվը և փրկագնողը:

Եսայիան
կանխատեսել էր, որ նա
անարգված կլինի Իսրայելում
և կչարչարվի: Նրան կմատնի
իր ընկերներից մեկը 30 արծաթի
դիմաց, ինքն իրեն չի պաշտպանի
հալածողների առաջ, կանարգվի
և հարվածների տեր կլինի: Նրան
կմերկացնեն և կծաղրեն: Նա
իր թիկունքը հարվածողներին
կդարձնի: Ոչ մարդկային
կերպարանք, ոչ վայելչություն
չի ունենա:

Զաքարիա մարգարեն ասել է, որ փրկիչը կխոցվի, և նրա ընկերները հարվածներ կհասցնեն նրա ձեռքերի մեջ և նա կլինի ինչպես մի գառնուկ, որ տարվում է մորթվելու: Արդյունքում նա կմեռնի և կթաղվի հարուստ մարդու գերեզմանում:

Բայց սա ողբերգություն չէր, որը նա չէր կարող կառավարել: Մի՞թե Հիսուսը չասաց, որ ոչ ոք իր կյանքը չի խլում, այլ ինքն է տալիս: Եսայիան ասել է, որ Աստված կամեցավ հարվածել նրան, որովհետև իր վրա կրեց ուրիշների մեղքերը: Մարդկանց մեղքերի համար նա չարչարվեց, բայց իր մահվան միջոցով շատերին կազատագրի:

Մահը դեռ վերջը չէր: Եսայիան մարգարեացել էր, որ մահից հետո նրա կյանքը կշարունակվի, և նա կբարձրացվի և կփառավորվի: Նա փրկություն կլինի մինչև աշխարհի ծայրերը: Նա չի ձախողվի: Մեսիան Նոր ուխտը կլինի:

Սաղմոս 22.15, 41.9, Եսայիա 7.14, 16, 9.6, 11.1, 4, 40.11, 42.4, 6-7, 45.23, 49.6-7, 50.6, 52.13-14, 53.1, 3, 5, 7, 9-10, 12, 59.20, Երեմիա 23.5-6, Միքիա 5.2, Զաքարիա 11.12-13, 12.10, 13.6-7, Հովհաննես 10.18

Սա իմ տունն է, համեցեք, պարո՛ն: Արդեն ուշ է, այսօր մեզ հետ մնացեք: Ես կցանկանայի ավելի շատ լսել Հիսուսի մասին վկայող մարգարեությունները:

Պարո՛ն, մեզ համար պատիվ կլինի, եթե օրհնեք հացը:

Մեր Տե՛ր Աստված, տիեզերքի արարիչ, օրհնում ենք այս հացը և գոհանում քեզանից:

Վերցրե՛ք և կերե՛ք:
Հիսո՛ւս, այդ դու ես:
Վարդապե՛տ

Նա անհետացավ:
Նա գնաց:
Այսքան ժամանակ Հիսուսն էր մեզ հետ:
Զարմանալի չէ, որ նա գիտեր բոլոր մարգարեությունները:

Ղուկաս 24.28-32

Միևնույն ժամանակ Երուսաղեմում...
Լա՛վ փակիր դուռը: Քահանաները հիմա ավելի զայրացած են, քանի որ Հիսուսի մարմինը չկա: Նրանք ասում են, որ մենք ենք գողացել:
Զինվորների մի ամբողջ ջոկատի միջո՞վ:

Նա ասաց, որ երրորդ օրը հարություն կառնի:
Ես չեմ հավատա, որ նա կենդանի է, մինչև չտեսնեմ և չշոշափեմ ձեռքերի մեջ եղած հետքերը:

Հոգի՞ է:
Օգնեցե՛ք
Հիսուսն է:
Մի՛ վախեցեք:
Թովմա՛ս, դու ասացիր, որ չես հավատա մինչև չտեսնես: Մեկնի՛ր ձեռքդ և շոշափիր մեխերից առաջացած անցքերը: Հպվի՛ր նաև կողիս վերքին:

Դու իմ Տերն ու Աստվածն ես:
Թովմա՛ս, դու երանելի ես, որովհետև տեսար և հավատացիր, բայց նրանք, որ չեն տեսնի ինձ և կհավատան, ավելի երանելի կլինեն:

Ղուկաս 24.36-43,
Հովհաննես 20.26-31

Իմ բոլոր աշակերտներին ասեք, որ գան Գալիլեա: Այնտեղ ձեզ հետ կխոսեմ:
Սուրբ Գրքում վաղուց գրված է եղել, որ Քրիստոսը կչարչարվի ձեր մեղքերի համար և երրորդ օրը հարություն կառնի, և ավետարանը նրա անունով կքարոզվի ամբողջ աշխարհում՝ սկսած Երուսաղեմից:

Մատթեոս 28.18-20, Ղուկաս 24.44-49, Հովհաննես 14.2-4

Գնացե՛ք *Երուսաղեմ* և սպասեք մինչև Սուրբ Հոգին կգա, և դուք զորություն կառնեք, որ իմ վկաները լինեք:
Նա հետ է գնում իր հոր մոտ:
Նա վեր է բարձրանում:

Ես միշտ ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վերջը:
Նա վերացավ: Նա **երկինք վերադարձավ:**

Ինչո՞ւ եք դեռ երկինք նայում:
Ի՞նչ, դա ո՞վ է:
Այդ նույն երկու հրեշտակներն են, որ գերեզմանում տեսա:

Ղուկաս 24.49-51, Գործք Առաքելոց 1.7-11

Հիսուսի աշակերտները գնացին Երուսաղեմ, ինչպես Հիսուսն էր պատվիրել և տասն օր աղոթքով սպասեցին, որ խոստացված զորությունն առնեն: Նրանք վախենում էին բացահայտ խոսել Հիսուսի մասին, քանի որ նրանց նույնպես կարող էին սպանել:

Այն տեղը, ուր նրանք աղոթում էին ցնցվեց, և սաստիկ քամի փչեց սենյակում: Նրանց երկնքից կրակե լեզուներ բաժանվեց:

Նրանք լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին Աստծուն փառաբանել իրենց անծանոթ լեզուներով:

Երբ Հոգին եկավ նրանց վրա, նրանք սկսեցին չվախենալ մարդկանցից և դուրս եկան փողոց Աստծուն փառաբանելու:
Օրհնյալ է Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայրը:
Ես կասեի, որ նրանք բոլորը արբած են, բայց սահուն խոսում են իմ լեզվով:

Գործք Առաքելոց 1.12-14, 2.1-13, 32, 36
Նրանք իմ լեզվով էլ են խոսում: Ինչպե՞ս են այսքան լավ խոսում բոլոր լեզուներով: Նրանք կրթված չեն:
Իսրայելացինե՛ր, դուք տեսել եք այն հրաշքները, որ Հիսուսն արեց: Դա ցույց է տալիս, որ Աստված նրա հետ էր, և, չնայած դուք խաչեցիք նրան, բայց Աստված մեռելներից հարություն տվեց:

1000 տարի առաջ Դավիթը մարգարեացել է նրա համար և ասել. «Իմ անձը գերեզմանում չես թողնի, և քո սուրբին չես թողնի ապականվի»:
Ուստի, թող Իսրայելի տունը հաստատ իմանա, որ Աստված այն նույն Հիսուսին, որին դուք խաչեցիք, Տեր և Փրկիչ արեց:

Ի՞նչ պետք է անենք, որ խաչել ենք Քրիստոսին:
Փոխե՛ք ձեր կարծիքը Հիսուսի մասին և մկրտվեք՝ հնազանդվելով նրա խոսքին: Նա կների ձեր մեղքերը, և դուք կընդունեք Սուրբ Հոգու պարգևը:

Հիսուսն է **Տերը:**
Ես հավատում եմ Հիսուսին: ***Ինձ էլ մկրտեք:***
Եվ նրանք, որ հոժարությամբ ընդունեցին խոսքը, մկրտվեցին: Եվ փրկվածների թիվը երեք հազարով ավելացավ:

Մի քանի ամիս անց...
Կարծես երեկ լիներ, երբ Հիսուսն այստեղ մեզ հետ էր:
Ճիշտ է, բայց ես հիմա նրա ներկայությունն ավելի շատ եմ զգում, քան առաջ, երբ նա մեզ հետ էր քայլում:
Այժմ հազարավոր մարդիկ հետևում են Հիսուսին և ամեն ժամ նրանց թիվն ավելանում է:
Սաղմոս 2, 16.10,
Գործք Առաքելոց 2.27, 37-41


Խնդրում եմ, օգնեք աղքատին և կաղին:
Պետրո՛ս, ես ընդհանրապես գումար չունեմ: Դու ունե՞ս մանրադրամ:
Ո՛չ, բայց քանի որ Սուրբ Հոգին մեզ հետ է, մենք ինչ-որ բան ունենք նրան տալու:

Արծաթ և ոսկի չունեմ, բայց ինչ ունեմ կտամ քեզ: **Հիսուս Քրիստոսի** անունով վե՛ր կաց **և քայլի՛ր:**
Այդքան դաժան մի՛ եղիր: Այս մարդը ծնված օրվանից կաղ է: Նրա ոտքերն անպետք են:

Հիսուս Քրիստոսը բժշկեց քեզ:

Հոը՞
Ամենակարող Աստվա՞ծ
Նրա ոտքերն աճում են:

Գործք Առաքելոց 3.1-11

Դա այն կաղ մարդն է: Նրա ոտքերն ոչ մի բանի պիտանի չէին:
Ինչո՞ւ եք ապշած մեզ նայում, կարծես մենք ենք այս հրաշքը գործել: Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված փառավորեց իր որդի Հիսուսին, ում դուք խաչեցիք:
Նրանք ասում են, որ այդ մարդը բժշկվել է Հիսուսի անունով, որին խաչեցին:
Դուք կյանքի իշխանին սպանեցիք, բայց Աստված նրան մեռելներից հարություն տվեց: Հիսուսի անվան հանդեպ ունեցած հավատքը բժշկեց այս մարդուն:

Ես գիտեմ, որ անգիտակցաբար եք խաչել Հիսուսին, բայց մարգարեները մեզ զգուշացրել էին, որ այս ամենը կատարվելու է:
Դուք բոլորդ ճանաչում եք ինձ: Միայն Աստված կարող էր իմ ոտքերը բժշկել: Հավատացե՛ք և հետևե՛ք ***Հիսուսին:***

Դարձի եկե՛ք և Հիսուսի աշակերտները դարձեք, որ ձեր մեղքերը ներվեն:

Այն հոգևոր առաջնորդները, որ խաչեցին Հիսուսին, հրաման տվեցին ձերբակալել Պետրոսին և Հովհաննեսին:

Գործք Առաքելոց 3.12, 14-19, 4.1-3

Դա հրաշք էր, ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն էր անում, երբ այստեղ էր:
Նրանք ձերբակալում են կաղ *մարդուն* ***քայլելու*** համար:
Ես հարևան ունեմ, որ պնդում է, թե Հիսուսին կենդանի է տեսել հարություն առնելուց հետո: Ասում են նա հայտնվել է միանգամից 500 մարդկանց առաջ:
Ուզում եմ գտնել մնացած աշակերտներին և ավելին իմանալ:

Գործք Առաքելոց 4.3-6

Մենք գիտենք, որ այս մարդը ծնված օրվանից կաղ է եղել: Ինչպե՞ս կարողացաք բժշկել նրան: Ո՞ւմ անունով արեցիք դա:
Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով, ում դուք խաչեցիք, և Աստված մեռելներից հարություն տվեց, այս մարդը բժշկվեց: Հիշե՛ք գրվածքները. «Այն քարը, որ շինողներն անարգեցին, դարձավ անկյունի գլուխ»:


Ուրիշ անունով
չկա փրկություն,
որովհետև երկնքի
տակ եղած
անուններից ոչ մեկ
չի կարող փրկել:

Ենթադրում եմ, այ**ս մարդի**կ կրթված *չեն: Երբե*ք ուսում չեն ստացել, բայց անգիր մեջբերում են մարգարեությունները:
Անօգուտ է ժխտել հրաշքը: Բոլորը գիտեն, որ նա բժշկվել է, և Հիսուսի աշակերտներն են արել դա Հիսուսի անունով: Մենք լուրջ խնդիր ունենք:
Ես ճանաչում եմ նրանց: Նրանք հաստատ Հիսուսի հետ էին:

Սաղմոս 118.22,
Գործք Առաքելոց 4.7-21

Դո՛ւրս շպրտեք նրանց այստեղից:

Եթե շարունակեք խոսել և բժշկել մեռած Հիսուսի անունով, դուք էլ նրա ճակատագրին կարժանանաք: Հասկացա՞ք ինձ: Հիմա կորե՛ք աչքիցս, այլևս չեմ ուզում հարության մասին անհեթեթությունը լսեմ:

Դուք դատեք, եթե արժան է Աստծո առաջ, որ ձեզ ավելի ականջ դնենք, քան թե Աստծուն, բայց մենք չենք կարող չխոսել այն, որ տեսանք և լսեցինք:

Ավետարանը տարածվեց ամբողջ Իսրայելում: Շատերը հավատացին Հիսուսին և ջրով մկրտվեցին:
Եկեղեցին հազարավոր մարդկանց սիրով և խաղաղությամբ միաբանեց և դարձրեց մեկ ընտանիք:
Հիսուս Քրիստոսի մասին բարի լուրը լսե՞լ ես:
Հիսուսը հարություն է առել: Նա կենդանի է և նույնիսկ հիմա մեզ հետ է :

Եկեղեցում կանանց հարգանքով և արժանապատվությամբ էին վերաբերվում:
Երբ ես ու իմ ընտանիքը հավատացինք Հիսուսին, մեր տան մեջ առաջին անգամ հաստատվեց երկնային խաղաղություն:

Քրիստոնյաներն աշխատելիս փառաբանում էին:
Քրիստոնյաները շատացան և շարունակում էին աճել: Նրանք ամեն օր քարոզում էին Հիսուսի մասին տներում և փողոցներում:
Գործք Առաքելոց 13.30-32

Ո՛վ իսրայելացիներ, դուք գիտեք, որ Աստված մեր հայրերին խոսեց՝ ասելով, որ նրանց զավակները օտար երկիր կտարվեն և ստրուկներ կլինեն 400 տարի, որից հետո Աստված ասաց, որ կդատի այդ ազգին և կառաջնորդի իր ժողովրդին խոստացված երկիր:

Ստեփաննո՛ս, հիմարություն մի՛ խոսիր:
Մեր տաճարի դեմ ես խոսում դու:
Բայց Սողոմոնն Աստծո համար տուն կառուցեց: Սակայն Բարձրյալը ոչ թե ձեռագործ տաճարներում է բնակվում, ինչպես մարգարեն ասում է. «Երկինքն իմ աթոռն է, և երկիրն իմ ոտքերի պատվանդանը: Ինչպիսի՞ տուն պիտի շինեք ինձ համար, ասում է Տերը, կամ ո՞րն է իմ հանգիստ առնելու տեղը: Չէ՞ որ իմ ձեռքը ստեղծեց այս ամենը»:

Եսայիա 66.1, Գործք
Առաքելոց 7.1-57

Խստապարանոցներ և ըմբոստներ: Ձեր սիրտն ուղիղ չէ Աստծո առաջ: Դուք հակառակվում եք Սուրբ Հոգուն, ինչպես ձեր հայրերը: Մարգարեներից ո՞րին չհալածեցին ձեր հայրերը և սպանեցին նրանց, որ սկզբից պատմեցին Հիսուս Քրիստոսի գալստյան մասին, ում մատնիչները և սպանողներն եղաք:

Ստեփաննո՛ս, քեզ հրեա՞ ես անվանում:
Դու անարգում ես մեր օրենքն ու սովորույթները հանուն ինչի՞: Հանուն մի մահացած մարդու, ում խաչելությունից հետո ոչ ոք չի տեսել:
Ահա տեսնում եմ երկինքը բացված, և մարդի Որդին Աստծո աջ կողմում կանգնած: Ի՞նչ փառահեղ է:

Փակե՛ք ձեր ականջները, որ չլսեք հայհոյությունը:
Նա մահվան է արժանի:
Քաղաքից դուրս տանենք նրան և քարկոծենք:

Աստծո անունը հայհոյո՛ղ
Մենք **խաչեցինք** Հիսուսին, իսկ քեզ ***կքարկոծենք:***
Նա փորձում է կործանել մեր կրոնը:
Անգամ ինձ քարկոծելուց հետո էլ Հիսուսը դեռ Տեր է:

Նա հայհոյել է մեր կրոնը: Մենք ասում ենք, որ նա պետք է մեռնի: Սողո՛ս, մենք իշխանավորների աջակցությունն ունե՞նք:
Ես կստորագրեմ նրա մահապատիժը: Նա մահացած Հիսուս Նազովրեցու հետևորդներից է: Այս հայհոյությունը պետք է դադարի: Շարունակե՛ք քարկոծել:

Գործք Առաքելոց 7.58-59

ALL'HU

Այն օրերում մեծ հալածանք սկսվեց եկեղեցու դեմ Երուսաղեմում: Բոլորը լքեցին քաղաքը, բացի առաքյալներից:
Սա դեռ սկիզբն է:
Այս Հիսուսի հետևորդների վերջը տվեք:
Սպանե՛ք այս հայհոյողին:

Այստեղ դեռ Քրիստոսին հետևողներ կա՞ն:
Մի՛ գնասեք հորս:
Կնոջն էլ բռնեք:
Փարիսեցի Սողոսը գնաս էր տալիս եկեղեցուն: Նա տնից տուն էր մտնում և տղամարդկանց ու կանանց քաշում մատնում էր բանտի մեջ:
Գործք Առաքելոց 7.59-8.3

Մինչ Փիլիպպոս անունով քրիստոնյան աղոթում էր, Սուրբ Հոգին խոսեց նրա հետ.
«Փիլիպպո՛ս, վեր կաց և իջիր հարավային կողմը՝ այն ճանապարհը, որ Երուսաղեմից տանում է դեպի Գազա»:

Չգիտեմ **ինչու** է
ինձ անյտեղ ուղարկում,
բայց, եթե Տերն ասում է
գնա, ուրեմն **կգնամ:**

Կարծես թե տեղ հասա:

Տե՛ր, ի՞նչ ես ուզում, որ անեմ:

Գործք Առաքելոց 8.26-29

Եվ ահա մի եթովպացի մարդ, եթովպացիների թագուհու ներքինի մի իշխանը, որ նրա բոլոր հարստության պահապանն էր: Նա եկել էր Երուսաղեմ հրեաների նման երկրպագություն անելու: Այժմ նա վերադառնում էր Եթովպիա և ընթերցում էր խոսքը:
«Ինչպես ոչխար տարվեց մորթվելու և ինչպես գառ իր խուզողի առաջ լուռ մնացած՝ այնպես չի բացում իր բերանը, որովհետև նրա կյանքն երկրից վեր է առնվում»:

Տեսնում եմ Եսայիա մարգարեությունից մի հատված ես կարդում: **Հասկանո՞ւմ** ես կարդացածդ:
Դու հասկացար իմ կարդացածը: Բայց ես չեմ կարող հասկանալ, եթե մեկը չբացատրի: Արի՛ ինձ հետ:

Դու Երուսաղեմի՞ց ես գալիս:
Այո՛, այնտեղ էի գնացել երկրպագելու համար: Իմ երկրի կրոնը երբեք խաղաղություն չի բերել: Աստված այնքան հեռու է թվում:

Եսայիա 53,
Գործք Առաքելոց
8.27, 30-34

Դու նոր ես վերադարձել Երուսաղեմից և գիտես, որ, չնայած Հիսուսը մեծամեծ հրաշքներ արեց, բայց մեր առաջնորդները անարգեցին նրան:
Եսայիա մարգարեի գիրքը գրվել է **800** տարի առաջ: Ամբողջ 53-րդ գլուխը Մեսիայի մասին պատմող այն բազմաթիվ մարգարեություններից մեկն է: Այնտեղ ասվում է. *«Նա անարգված և մերժված կլինի»:*

7-րդ խոսքը մարգարեություն է, որ երբ Հիսուսը կանգնի դատապարտողների առաջ, իրեն չի արդարացնի:

Եսայիան մարգարեացավ, որ Հիսուսը մեր մեղքերի համար կվիրավորվի: Եվ 5-րդ խոսքում ասում է, որ մեղավորների պատիժը նրա վրա կլինի:

8-րդ խոսքում ասվում է, որ նա կալանքից ազատվեց և մահվան դատապարտվեց իր ժողովրդի մեղքերի համար:
Ինձ դուր է գալիս հատկապես 66-րդ խոսքը, որտեղ ասվում է. «Մենք բոլորս ոչխարների պես մոլորվեցինք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դարձավ, և Տերը նրա վրա դրեց մեր բոլորի մեղքը»: Այստեղ ասվում է, որ ամեն մարդ թողել է Աստծուն և հետևել իր մեղավոր ճանապարհներին, բայց Աստված մեր մեղքը Հիսուսի վրա դրեց, որ իր մահով վճարի մեր անհնազանդության համար:
INRI

INRI
9-րդ խոսքն ասում է, որ նա կթաղվի հարուստների և ամբարիշտների հետ:
9-րդ խոսքում ասվում է, որ Հիսուսը ուրիշների նման չմեղանչեց, սակայն Աստված ցանկացավ նրան տանջանքների մատնել, որովհետև Հիսուսն իր կյանքով պետք է վճարեր մեղքի դիմաց:

10-րդ խոսքը նրա հարության մասին է, և նրա հետագա ծառայության:
Ես այիա 53.3-10, Գործք Առաքելոց 8.35, Հռովմայեցիս 2.16, 2 Կորնթացիս 5.21
Շատ ուրիշ մարգարեություններ վկայում են, որ հարությունից հետո Հիսուսը կնստի գահին, և մենք էլ մահից հետո կկանգնենք նրա առաջ և հաշիվ կտանք մեր գործածների համար:

Ես բազմիցս լսել եմ, թե ինչպես են դպիրներն ու քահանաները խոսում մեսիական մարգարեությունների մասին: Ինչո՞ւ նրանցից շատերը մերժեցին Հիսուսին:
Քահանաներից և դպիրներից ոմանք ընդունեցին նրան, բայց մյուսները վիրավորվեցին, երբ նա մատնացույց արեց նրանց երեսպաշտությանը: Նրանք ուզում էին հռոմեացիներին սպանող Մեսիա, ոչ թե իրենց մեղքերը բացահայտող: Նրանք ուզում էին իշխել թագավորության մեջ, բայց չէին ուզում, որ Աստված իշխեր իրենց սրտերում:

Կա՞ն ուրիշ մարգարեություններ, որ Հիսուսի միջոցով իրականացել են:
Սաղմոս 22-ը մարգարեություն է նրա **խաչելության** մասին:
Բայց, չէ՞ որ Սաղմոսները գրվել են **1000** տարի առաջ, երբ **խաչելությունը** որպես մահապատիժ չկար:

Սաղմոս 22.16–ում ասվում է, որ նրա ձեռքերն ու ոտքերը կծակեն, ինչպես որ մեխով արեցին: *Սաղմոս 22.14* խոսքում ասվում է, որ նա կծարավի, և նրա մահանալու ժամանակ ամեն ոսկորները հոդերից դուրս կգան, բայց հետո *Սաղմոս 34.20*-ն ասում է, որ անգամ մեկ ոսկոր չի կոտրվի, երբ նա խաչված կլինի: Ինչպես գիտես, խաչվածների ոսկորները կոտրելը պարտադիր էր, բայց Հիսուսն ավելի շուտ մահացավ, քան նրանք կհասցնեին կոտրել նրանը:

17 խոսքն ասում է, որ նրանք կնայեն նրա մերկությանը, և 18 խոսքում՝ հագուստները կբաժանեն իրենց մեջ ու պատմուճանի վրա վիճակ կգցեն:

Նույնպես, *Զաքարիա 12.1*0-ում է ասվում, որ նրա ձեռքերը կծակեն, և հետո հրեաները կտեսնեն դրա հետքերը: *Եսայիա 50.6*-ում ասվում է, որ նրա թիկունքին կհարվածեն և երեսը չի ծածկի նախատինքից:

սաղմոս 16.10-ն ասում է, որ, թեև նրան կթաղեն, բայց նրա մարմինը երկար չի մնա գերեզմանում և չի ապականվի: մարգարեություններն ասում են, որ նրան իր ընկերը կմատնի, և որ հետո մատնիչն իրեն կկախի, իսկ մարմինը կընկնի դաշտի մեջ, որտեղ հետագայում կթաղեն օտարներին:

մարգարեությունների մեծ մասն արդեն կատարվել է: կասկած չկա, որ նազովրեցի հիսուս քրիստոսը մեսիան է և աշխարհի փրկիչը:

Սաղմոս 22.6, 17-18, 16.10, 34.20, Եսայիա 50.6, Զաքարիա 12.10

Ես հավատում եմ, որ Հիսուսն է **Մեսիան:** Նա խոստացված գառնուկն է, որ մեր մեղքերի համար մորթվեց: Մենք այլևս զոհի կարիք չունենք: Հիսուսն է դուռը դեպի Աստված: Ես կդառնամ Հիսուսի **աշակերտը:**

Ահա ջուրը: Ի՞նչն է խանգարում ինձ մկրտվել:
Ես կմկրտեմ քեզ, եթե ողջ սրտովդ հավատաս Հիսուսին:
Այո՛, ես հավատում եմ:

Ես մկրտում
եմ քեզ մեր Տեր
և Փրկիչ Հիսուս
Քրիստոսի
անունով:

Փա՜ռք Աստծուն

Գործք Առաքելոց 8.36-39

Եթովպիայում եկեղեցի հիմնադրվեց և պահպանվեց մինչև մեր օրերը, երբ մուսուլմանները սկսեցին սպանել բազմաթիվ քրիստոնյաների:

Գլուխ 13

Ամբողջ աշխարհով մեկ


Քրիստոնյաները՝ վախենալով իրենց կյանքի համար, սկսեցին գաղտնի հավաքվել Աստծո խոսքը լսելու և նրան փառաբանելու համար:
Սիրելի ընկերնե՛ր, մեր Տերը չարչարվեց, որպեսզի մեր մեղքերը հեռացնի մեզանից: Զարմանալի չէ, որ հնարավոր է մենք էլ չարչարվենք նրա համար: Մի՛ վախեցեք այսօրվա հալածանքներից:
Հիսուսն ասաց. *«Եթե ցանկանում եք իմ աշակերտները լինել, վերցրե՛ք ձեր խաչը և հետևեք ինձ»:* Դա նշանակում է, որ եթե մենք կանչված ենք, ապա պետք է տանենք մեր խաչը դեպի խաչելության բլուրը: Սաղմոս 22-ն ասում է...

Աստվա՛ծ իմ, փրկի՛ր մեզ: Մարդասպան Սողոսն է:
Բոլորդ մնացե՛ք ձեր տեղերում: Այս օտար կրոնը պետք է արգելվի: Դուք հայհոյում եք մեր հայրերին և մեր ազգը: Դուք հիմարներ եք: Կամ կհրաժարվեք, **կամ կմեռնեք:**
Բռնե՛ք առաջնորդին: Նա օրինակ կծառայի:

Մենք շատ հրեաներ ենք տեսել, ինչո՞ւ եք պաշտում մեռած հյուսնին:
Մեր Տեր Հիսուսը կենդանի է և տիեզերքի արարիչն է:
Դու կարծիքդ կփոխես, երբ կնոջդ թողնենք բանտում, որ փտի:

Մատթեոս 16.24, Մարկոս 8.34,
Գործք Առաքելոց 9.1-2

Ահա Քրիստոսի սիրելիներից ևս մեկը:
Մենք գիտեինք, որ սա կարող էր պատահել, երբ դարձանք քրիստոնյաներ:

Այս ամենը Սավուղ կոչեցյալն է անում: Նա ատելություն և մահ է շնչում մեր հանդեպ:
Այո՛, մենք պետք է աղոթենք նրա համար: Աղոթենք, որ Աստված փափկեցնի նրա սիրտը և թույլ տա տեսնել ճշմարտությունը:
Սողոսը լցված է ատելությամբ:
Մի՛ մոռացեք, որ մեզանից շատերը սկզբում թերահավատ են եղել:

Սողո՛ս, կարծում
եմ դու արդեն մաքրել ես
Երուսաղեմը այդ Հիսուսի
աղանդի հետևորդներից:
Ո՛չ, ինչքան սպանում
և բանտարկում ենք, այնքան
ավելի են շատանում: Նրանք ցրվել
են տարբեր քաղաքներում: Նրանք
Դամասկոսի տաճարներում են
հավաքվում:

Ես քեզ նրանց բանտարկելու իրավունք կտամ, դու կարող ես գնալ Դամասկոս:
Ես անմիջապես կգնամ:
Սողոսը կարծում էր, որ իր պարտքն է պաշտպանել իր կրոնն ու ազգը օտար ուսմունքներից: Բայց նրան անհանգստացնում էր այն փաստը, որ քրիստոնյաները լցված էին խաղաղությամբ և համոզվածությամբ, ինչն իրեն անծանոթ էր:

Հանկարծ Սողոսի շուրջը երկնքից մի լույս փայլատակեց:
Սողո՛ւս, Սողո՛ւս, ինչո՞ւ ես ինձ հալածում:
Սողոսի ձին այնքան վախեցած էր, որ նրան ցած նետեց և փախավ:

Գործք Առաքելոց 9.1-6

Դուք այդ ձայնը լսեցի՞ք:
Այո՛, բայց չհասկացա, թե ինչ է ասում:
Ես նույնպես չհասկացա: Կարծես ***ամպրոպի*** ձայն լիներ:
Դա Աստծո ձայնն էր:
Ես ոչինչ չեմ տեսնում: Օգնե՛ք ինձ: Չեմ տեսնում, ինձ քաղաք հասցրե՛ք:

Իմ անունը Անանիա է: Հիսուսը ինձ հետ տեսիլքով խոսեց և ասաց, որ քեզ մոտ գամ, և նա կվերականգնի քո տեսողությունը:
Ես իսկապես չեմ տեսնում:

Հիսուս Քրիստոսի անունով թո՛ղ բացվեն **աչքերդ:**

Ես տեսնում եմ: Հիսուսը՞ արեց սա: Պատմի՛ր ինձ նրա մասին:


Եվ Անանիան վերցրեց սուրբ գրությունները և Սողոսին ցույց տվեց Հիսուսին վերաբերող բոլոր մարգարեությունները:
Ի՞նչ հիմարն եմ եղել: Այսքան ժամանակ այս ամենը գրքերում գրված է եղել: Ես կուրացած էի իմ կրոնական նախանձախնդրությամբ: Ես ուզում եմ մկրտվեմ և Քրիստոսի հետևորդը դառնամ:
Աստված Սողոսի անունը փոխեց և Պողոս կոչեց:
Գործք Առաքելոց 9.7-19

Սողոսը, որ հիմա Պողոս է, լիովին նոր մարդ դարձավ՝ նոր ուղերձով: Այժմ նա չէր ցանկանում սպանել քրիստոնյաներին, այլ ընդհակառակը, փորձում էր համոզել ուրիշներին, որ Հիսուսին հետևեն:
Ես հասկանում եմ ձեր կասկածները: Ես նույնպես չէի հավատում, բայց ասում եմ ձեզ, Նազովրեցի Հիսուսի միջոցով բոլոր մարգարեությունները Մեսիայի մասին կատարվել են:
Բայց ամենամեծ վկայությունն այն է, որ Աստված նրան մեռելներից հարություն է տվել:

Ի՞նչ հիմարություն ես խոսում: Ինչպե՞ս կարող է Մեսիան թույլ տա, որ մեր թշնամիները իրեն սպանեն:
Նա Աստծո գառն էր, որ եկավ մեր մեղքերը վեր առնելու:

Աստված փրկում էր նաև հեթանոսներին: Մի հռոմեացի զինվոր կար, որ աղոթքով Աստծուն էր փնտրում:
Աստվա՛ծ, ես գիտեմ, որ դու միակն ես և ամենի արարիչն ես: Իմ ժողովրդի կրոնը ապականված է, և այնտեղ խաղաղություն չկա: Ցո՛ւյց տուր ինձ քո ճանապարհները, որ քայլեմ դրանցով:

Ո՞վ է, ի՞նչ է, **ո՞վ** ես դու: **Որտեղի՞ց** եկար:
Քո աղոթքները լսվել են: Ինձ Աստված է ուղարկել: Քո մարդկանց ուղարկիր Հոպպե՝ կաշեգործ Սիմոնի մոտ: Նրա տունը ծովի մոտ է: Կանչի՛ր Պետրոս անունով մեկին: Նա կգա և ողջ ճշմարտությունը կպատմի քեզ:

Աստված խաղաղություն շնորհեց խաչի վրա թափված իր արյան միջոցով:
Պետրո՛ս, մեր տերը աստվածավախ և բարի մարդ է, բայց նրան մի քանի հարցեր են տանջում: Նա ամեն ժամանակ աղոթում է և աղքատներին է օգնում, բայց Աստծո մեջ խաղաղություն չի գտնում:
Ի՞նչ է դա **նշանակում:**
Ես ձեր տիրոջը կբացատրեմ նշանակությունը:

Հարյուրապետը՝ տեսնելով Պետրոսին, խոնարհվեց նրա առաջ:
Վե՛ր կաց: Մի՛ երկրպագիր ինձ, ես քո նման մարդ եմ: Բոլորին կանչի՛ր, և ես ձեզ բարի լուրը կտամ:

Այսօր հրաշալի օր է: Աստված ուղարկել է Պետրոսին՝ Հիսուսի աշակերտին, որ մեզ պատմի Հիսուսի մասին:
Գործք Առաքելոց 9.20-22, 10.1-27, 38-41
Ես Հիսուսի հետ երեք ու կես տարի եմ անցկացրել: Ես նրան խաչված տեսա և տեսա նաև հարություն առած: Նրա հարությունից հետո մենք 500 հոգով հավաքվեցինք մեկ վայրում, որ նրա ուսմունքները լսենք: Նա մեզ հետ հաց կերավ, և մենք կարողացանք հպվել նրան: Նա սովորեցրեց մեզ սիրել մեր թշնամիներին և աղոթել մեզ հալածողների համար: Նա ուղարկեց իր Հոգին...

Հարյուրապետ Կոռնելիոսը
և իր ողջ ընտանիքը
հավատացին Հիսուս
Քրիստոսի ավետարանին
և նույն օրը մկրտվեցին:

Պողոսը Անտիոքի տաճարում շաբաթ օրը քարոզում էր հրեաներին:
Դուք ճանաչում եք ինձ: Ես մինչև մահ հալածում էի քրիստոնյաներին, բայց Հիսուսը հայտնվեց իմ ճանապարհին կուրացնող լույսի մեջ և որոտագին ձայնով ասաց, որ իր խոսքը քարոզեմ: Ես ուսումնասիրեցի բոլոր գրվածքները, որ վերաբերում էին Մեսիային և հասկացա, որ բոլոր մարգարեությունները կատարվել են Հիսուսի միջոցով:

Աստված ասաց, որ Դավթի որդին կգա Իսրայելի փրկության համար, և Երուսաղեմի առաջնորդները նրան մահվան կդատապարտեն: Երկրորդ Սաղմոսում գրված է. «Դու իմ որդին ես, ես այսօր ծնեցի քեզ»:

Մեկ այլ Սաղմոսում գրված է, որ Աստված իր սուրբին թույլ չի տա ապականություն տեսնել: Այս մարգարեության իմաստը հետևյալն է, որ թեև նա մեռնի էլ, նրա մարմինը չի փչանա: Թո՛ղ բոլորին հայտնի լինի, որ Հիսուսի մեջ դուք կարող եք գտնել մեղքերի կատարյալ ներում, մի բան, որ Մովսեսը չկարողացավ տալ:

Սաղմոս 2.7, 16.10, Գործք Առաքելոց 2.27, 10.47, 13.33-35

Քեզ կարող են քարկոծել հերետիկոսության համար:
Քանի որ դուք չեք ընդունում հավիտենական կյանքի բարի լուրը, մենք այն կտանենք հեթանոսների մեջ, ինչպես մարգարեներն են կանխատեսել:

Երբ Պողոսի համար պարզ դարձավ, որ հրեաները շարունակելու են մերժել Քրիստոսին, նա իր ջանքերը կենտրոնացրեց հեթանոսների վրա՝ Իսրայելից դուրս ուրիշ ազգերի վրա:

Փա՜ռք Աստծուն և Հիսուսին: Փրկություն է եկել հեթանոսների մեջ:

Պողո՛ս, մկրտի՛ր ինձ:

Պատմի՛ր մեզ Հիսուսի մասին վկայող մարգարեությունները:

Շատ հեթանոսներ հավատացին ավետարանին և շարունակեցին քայլել Աստծո շնորհքի մեջ:

Հրեաները բարկացան և Պողոսին ու Բառնաբասին դուրս շպրտեցին քաղաքից՝ սպառնալով սպանել, եթե նրանք հետ վերադառնան: Ուստի Պողոսն ու Բառնաբասը գնացին Ասիա և այնտեղ տարածեցին բարի լուրը:
Բառնաբա՛ս, եթե ընկնեմ, չկանգնե՛ս, կշարունակես վազել:

Լիվստրայում հրեաները քարկոծեցին Պողոսին և մարմինը գցեցին քաղաքից դուրս ինչ-որ տեղ:
Աստվա՛ծ, ***սերի՛ր*** նրանց: Նրանք ***սպանեցին Պողոսին:***
Գործք Առաքելոց 14.19-20

Բայց Աստված հրաշքով փրկեց Պողոսին:
Պողո՛ս, կարծեցի մահացել ես:
Դեռ ժամանակը չէ: Աստված ինձ ցույց է տվել, թե ինչքան եմ չարչարվելու իր անվան համար, և սա դեռ սկիզբն է: Հե՛տ գնանք քաղաք:

Արժանի ես, Տե՛ր ընդունելու ողջ փառքը, պատիվն ու մեծարանքը:
Մակեդոնիայի Փիլիպպեում Պողոսն ու Շիղան 39 մտրակի հարված ստացան և բանտարկվեցին: Չնայած այդքան չարչարանքների, նրանց սիրտը լցված էր ուրախությամբ, և կեսգիշերին սկսեցին փառաբանել Աստծուն:

Վաա՜խ...
Հիսուսն է Տերը:

ԾՈՂԸ՝ ԽԿ

Հետագա տարիներին Պողոսին ևս երեք անգամ մտրակեցին, բայց նա, միևնույն է շարունակեց Հիսուսի մասին քարոզել:

Գործք Առաքելոց 14.19-20, 16.23-25, 2 Կորնթացիս 11.24-25, Հայտնություն 4.11

Երբ Պողոսը տեղից տեղ էր ճամփորդում ավետարանը քարոզելու համար, նավը, որով ճամփորդում էր, երեք անգամ խորտակվել է:

Պողոսը շատ հաճախ ենթարկվել է ավազակային հարձակումների:

Մի անգամ Պողոսը մեկ ամբողջ օր անցկացրել է բաց ծովում, մինչև մեկ այլ նավ հասել է օգնության:

Բայց նա շարունակել է քարոզել:

Պողոսը դիմակայել է հիվանդություններին, ցրտին, սովին և ամեն անհարմարություններին, երբ շրջել է աշխարհով մեկ՝ մարդկանց պատմելով Հիսուսի մասին:


Պողոսը գնում էր քաղաքից քաղաք, մարդկանց զգուշացնում հեռու մնալ կռապաշտությունից և քարոզում Հիսուս Քրիստոսի ավետարանը:
Դուք ձեր ***կռապաշտությունից*** հետ դարձաք դեպի կենդանի Աստված, և նա արդարացրեց ձեզ հավատքով առանց օրենքի: Դուք հիմա **Աստծո** ընտանիքի և մարմնի մի մասն եք կազմում:
Փա՜ռք Աստծուն:

1 Կորնթացիս 10.14, 12.12-13, 18, 2 Կորնթացիս 11.25, Գաղատացիս 2.16, Եփեսացիս 2.19

Այս ամենը ինձ երբեք խաղաղություն չի տվել:

Երբ մարդիկ դարձան դեպի Աստծուն, նրանք հետևում թողեցին կռապաշտությունը: Նրանք այրեցին ամեն բան, ինչ կապված էր հին կյանքի և մեղքի հետ: Քսան տարվա ընթացքում ամբողջ աշխարհում արդեն քրիստոնյաներ կային, որ երկրպագում էին Աստծուն Հիսուս Քրիստոսի միջոցով:

Հիսուսը զգուշացրել էր իր աշակերտներին. «Այն ժամանակ ձեզ նեղության կմատնեն և կսպանեն, և իմ անունի համար ազգերը կատեն ձեզ: Այն ժամանակ շատերը կգայթակղվեն և իրար կմատնեն և իրար կատեն: Եվ շատ սուտ մարգարեներ դուրս կգան և շատերին կմոլորեցնեն»:

Երբ եկեղեցին տարածվեց ամբողջ հռոմեական կայսրությունում, իսկ Հիսուսին հանդիպած մարդիկ արդեն ծերացել էին, հռոմեացիները սկսեցին քրիստոնյաներին մինչև մահ հալածել: Եթե հավատացյալները չէին ուրանում Քրիստոսին, ապա նրանց գցում էին առյուծների առաջ և սպասում, մինչև կենդանիները կհոշոտեն նրանց:

Զոր՝ն
Կաց՝ր

Երբեմն էլ հռոմեական զինվորներն էին հարձակվում քրիստոնյաների վրա և սպանում: Մարդիկ զարմանում էին, որ հավատացյալները չէին ուրանում իրենց հավատքը: Նրանք պատրաստ էին մեռնել Հիսուսի համար:

Մատթեոս 24.9-11

Քառասուն տարի հետո մ.թ.70 հռոմեացիները եկան ավերեցին քաղաքը և տաճարը: Երբ տաճարի ներսում փայտն այրվեց, ոսկին հալվեց և լցվեց հատակի քարերի ճեղքերի մեջ: Եվ, որպեսզի ոսկին կարողանան դուրս բերել, հռոմեացիները հեռացրեցին բոլոր քարերը: Այդպես Հիսուսի մարգարեությունն իրականացավ:

Այն հրեաները, որոնք փրկվեցին պատերազմից, Իսրայելից փախան և բնակվեցին հեթանոսների մեջ, որտեղ էլ մինչ օրս ապրում են նրանց հետնորդները:

Քրիստոնյա հրեաները նույնպես գնացին ուրիշ երկրներ, որտեղ քարոզեցին ավետարանը և եկեղեցիներ հիմնվեցին:

Ուր որ գնում էին, այնտեղ քրիստոնյաների էին հանդիպում:

Մատթեոս 24.2, Ղուկաս 19.43-44

Հիսուսի առաքյալները շարունակեցին ավետարանը քարոզել մինչև կյանքի վերջ: Մեկ առ մեկ նրանք մահվան դատապարտվեցին: Նրանք քաջաբար մահացան, որովհետև գիտեին, որ երկնքում ավելի լավ տուն ունեն:
Հռոմեացիները ոմանց խաչեցին:
Մի մասին կենդանության օրոք մարմինը մասնատեցին:

Որոշներին քարկոծեցին:
Նրանց մի մասը դարձան վայրի կենդանիների համար կեր:
Ոմանց գլխատեցին:

Հովհաննես 21.18,
Գործք Առաքելոց 12.2
Պետրոսին հակառակ ուղղությամբ խաչեցին:
Ուրիշներին տաք ձեթով լցված կաթսայի մեջ նետեցին:
Ես ավելի լավ տեղ եմ գնում: Թո՛ղ Աստված ների ձեզ:
Տե՛ր, ես արժանի չեմ քո նման մեռնելու:
Նրանք բոլորը մահացան հավատքով և վստահությամբ, որ ավելի գեղեցիկ մարմին և ավելի լավ տուն են ունենալու:

Հիսուսի հարությունից հետո, վաթսուն տարի անց միայն Հովհաննես առաքյալն էր ողջ մնացել: Նրան աքսորել էին Պատմոս կղզի: Հոգին Հովհաննեսին երկինք բարձրացրեց, որտեղ Աստված նրան ցույց տվեց ապագան:
Հովհաննե՛ս, քեզ բաներ ցույց կտամ, որ տեղի են ունենալու ապագայում: Գրի՛ առ գրքի մեջ ինչ որ տեսնում ես և ուղարկիր Ասիայի յոթ եկեղեցիներին:

Երբ ժամանակը լրանա, Հիսուսը հետ կգա, և նրան հավատացողները կկենդանանան ու կենդանի եղածների հետ կբարձրանան երկինք Հիսուսին դիմավորելու և նրա հետ հավիտյան ապրելու:
Վերջին օրերին Աստված սարսափելի աղետներ կուղարկի երկրի վրա: Կրակ կթափվի երկնքից և այլ արհավիրքներ կլինեն, որոնք կոչնչացնեն մարդկության մեծ մասը:

Կգա մի մարդ, ով կհայտարարի, որ ինքն է Մեսիան և շատերին կմոլորեցնի: Մարդիկ իրենց հավատարմությունը նրան և նրա կառավարությանը ցույց տալու համար նշան կընդունեն իրենց ճակատի կամ աջ ձեռքի վրա:

1 Թեսաղոնիկեցիս 4.14, 16-17, 2 Թեսաղոնիկեցիս 2.3-4, Հայտնություն 1.9, 11, 8.1-13, 9.18, 13.16, 20.4

Նրանք, ովքեր չեն ընդունի նշանը, կգլխատվեն: Դա կլինի մեծ ցավի և տառապանքի ժամանակաշրջան բոլոր նրանց համար, ովքեր կմնան երկրի վրա:

Ինչպես գրված է մարգարեություններում, Հիսուսը կվերադառնա վերջին օրերին:
Նա կգա իր ողջ փառքով և զորությամբ, բայց ոչ որպես մահկանացու մարդ: Երկինքը կբացվի, և նա սպիտակ ձիու վրա նստած կգա:
Նա արևի նման կփայլի և գլխին շատ պսակներ կլինեն: Ձեռքին յոթ աստղեր կլինեն, իսկ բերանից ճշմարտության սուրը դուրս կգա:

Հիսուսը կդիմակայի սատանային և նրան կրակի լիճը կգցի, որտեղ նա հավերժ կտանջվի և այլևս երբեք չի գայթակղի մարդուն: Հիսուսն իր վերջին թշնամուն՝ մահին, կգցի կրակի լիճը, և նոր աշխարհ կլինի:

Աստված կժողովի բոլոր նրանց, որ հավատացել են իր որդուն և նոր աշխարհում հավիտենական կյանք կշնորհի նրանց: Աստված կսրբի արցունքները և այլևս չի լինի մահ, վիշտ, արցունք և ցավ, որովհետև ներկա բաները կանցնեն կգնան: Հիսուսը կթագավորի իր արդար ժողովրդի հետ մի երկրում, որտեղ չի լինի ոչ մեղք և ոչ մահ:

1 Թեսաղոնիկեցիս 4.16, Հայտնություն 1.16, 19.11-21, 20.10-15, 21.1-4

Հիսուս Քրիստոսի ավետարանը քարոզվում է արդեն 2000 տարի: Հիսուսն ասել էր, որ իր արքայության ավետարանը կտարածվի ամբողջ աշխարհում և յուրաքանչյուր ազգ, ցեղ, ընտանիք կլսի բարի լուրը:

Մեկ Աստված կա
և մեկ Որդի: Մեկ
հավատք և մեկ
Աստվածաշունչ:
Այս կյանքից
հետո միայն մեկ
ճանապարհ կա դեպի
դրախտ: Հիսուսն
է ճանապարհը,
ճշմարտությունը և
կյանքը, որ բոլոր
ազգերից շատերն
արդեն գտել են:

Քրիստոսի ավետարանը աշխարհի բոլոր կրոններից տարբերվում է նրանով, որ ստիպողաբար կամ վախ ներշնչելով չի տարածվում: Հիսուսն իր հետևորդներին սովորեցրեց սիրել թշնամիներին և ուրախությամբ ու ցնծությամբ լցվել: Այսօր մարդիկ ամեն ազգությունից և լեզվաընտանիքից ուրախանում են, որ ներված են և ունեն հավիտենական կյանք:

Հովհաննես 3.16, 14.6

Հիսուսի հարությունից հետո գրեթե 2000 տարի է անցել, բայց դեռ կան մարդիկ, որ չեն լսել բարի լուրը: Ինչ-որ մեկը պետք է պատմի նրանց:

Գալիք դատաստանի ժամանակակից պատմությունը

Դու հրեշտա՞կ ես: Ո՞ւր ես ինձ տանում:

Եբրայեցիս 9.27


Նա ստուգում է արդյոք քո անունը գրված է Գառան կյանքի գրքում:
«Եվ տեսա մեռելները մեծ եւ փոքր կանգնած աթոռի առաջին. և գրքեր բացվեցին, և մի ուրիշ գիրք էլ բացվեց, որ է կյանքի գիրքը, և մեռելները դատվեցին այն գրքերում գրվածներից իրանց գործերի համեմատ»:

«Աստված մարդկանց ծածուկ բաները կդատի Հիսուս Քրիստոսի ձեռով»

Ձո՛ն Դո, այսօր քո դատաստանի օրն է: Դու մեղադրվում ես շատ մեղքեր գործելու մեջ: Ինչպե՞ս ես արդարանալու:
Ես մի քանի փոքր մեղքեր եմ գործել, բայց լավ մարդ եմ եղել, հարցրեք ցանկացած ինձ ճանաչող մարդու:

Հռովմայեցիս 2.6, 16,
Հայտնություն 20.12

Բերե՛ք նրա գիրքը:

Հոմ
Դոյի
մեկնում

Այդ գրքի վրա
իմ անունն է:
Զոն
Դոյի
կյանքը

Մեղքերի ցանկը

Խոսախոսություն 1-48
Ցանկասիրություն 49-74
Ստելություն 75-91
Սգահություն 92-115
Կռապաշտություն 116-132
Հպարտություն 133-175
Շնություն 176-204
Սիրավատություն 205-250
Սատակություն 251-271
Գողություն 272
Ագահություն 273-274

Քո գիրքը բացահայտում է, որ դու ***բազմաթիվ*** մեղեր ես գործել:

«Ոչ թե արդարության գործերից, որ մենք արինք, այլ իր ողորմության համեմատ փրկեց մեզ»:

Տիտոս 3.5

Դու լա՞վ մարդ էիր, երբ ստում էիր:

Դու լա՞վ մարդ էիր, երբ ցանկասիրությամբ էիր լցված:
Դու լա՞վ մարդ էիր, երբ բարկությունից խելագարվում էիր:

Բայց ես սարսափելի մեղքեր չեմ գործել: Ես կրոնավոր մարդ էի:
Դու դեռ արդարանում ես: Բոլոր մեղքերն էլ սարսափելի մեղքեր են:
Հեռացե՛ք ինձանից, բոլոր մեղավորներ: Ես ձեզ չեմ ճանաչում:

Աստվա՛ծ իմ, սա անհնար է:
Ցավում եմ, բայց արդեն ուշ է Աստծո անունը կանչելու համար:

นนน์!

Անօրենները...կգցվեն կրակի
փռան մեջ, այնտեղ կլինի լացը
և ատամների կրճտելը:
մատթեոս 13.49-50

Քրիստոսի դատաստանը

Հովհաննես 11.25-26

Քո անունը կյանքի գրքի մեջ է գրված:
Վարձքդ ստանալու ժամանակն է:

«Մեկ օր հաստատեց, որ նրանում աշխարհքս արդարությամբ պիտի դատի այն մարդու ձեռքով, որ սահմանեց նրանով ամենին հավատք տալ, որին մեռելներից հարություն տվեց»:

Գործք Առաքելոց 17.31

Մեր փափագն է, որ «Բարին և Չարը» գիրքն ընթերցելուց հետո ձեր մեջ ցանկություն առաջանա ընթերցել ամբողջ Աստվածաշունչը, և այն կենդանի դառնա ձեզ համար: Թող ամեն օր մի փոքր հատված ընթերցելը ձեզ համար դառա սովորություն, և աղոթեք, որ Աստված օգնի ձեզ հասկանալ և կիրառել այն:

Հեղինակային իրավունքի պաշտպանություն © 2008, 2016 Մայքլ և Դեբի Փըրլեր: ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ:

Հեղինակ՝ Մայքլ Փըրլ

Նկարիչ՝ Դենի Բալանադի

Գունավորում՝ Քլինթ Քըրլի

https://goodandevilbook.com/